

# Մայաթ-Նովա

## Հայերեն խաղեր

1

Ամեն սագի մեջըն գոված դուն թամամ  
տա'սն իս, քամանչա',  
Նաքագ մարթն քիզ չի տեսնի, դուն նըրա  
պա'սն իս, քամանչա',  
Ղա'ստ արա՝ է՛լ լավ օրերու եղիվըն  
հասնիս, քամանչա'.  
Քիզ ինձնից ո՞վ կանա խըլի, աշուղի  
բա'սն իս, քամանչա':

Անգաճըտ էրծաթեն պիտի, գըլուխըտ  
ջավահիր քարած,  
Կուրըտ շիրմայեմեն պիտի, փուրըտ  
սադափով նաղշ արած,

Միմբտ օսկեն քաշած պիտի, էրկաթըտ  
փանջարա արած.

Օչով դիմեթըտ չի գիդի-լալ ու ավմասն  
իս, քամանչա':

Ճիպուտըտ վարադնած պիտի` թահր  
ունենա հազար ռանգով.

Ձարըտ ռաշի կուդեն պիտի, վուր դուն  
խոսիս քաղցրը հանգով.

Շատին զարթուն կու լուսացնիս, շատին  
կու քընեցնիս բանգով`

Անուշահամ գինով լիքըն դուն օսկե  
թասն իս, քամանչա':

Ածողիտ էրկու կու շինիս. առաչ չայի,  
դափա գուզիս,

Կու մեծըրվիս այվընուներն, պարապ  
վախտի բափա գուզիս,

Յիփ վեր գու քաս` մեջլիսուներն քաղցրը

գող ու սափա գուզիս.

Բոլորքըտ գոզալնիր շարած մեջլիսի  
կեսն իս, քամանչա':

Շատ տըխուր սիրտ կու խնդացնիս, կու  
կըտրիս հիվընդի դողըն.

Յիփ քաղցըր ձայնըտ վիր կոնիս, բաց  
կուլի հիդըտ խաղողըն.

Խալխին էս իլթիմազն արա` ասին.

«ապրի քու ածողըն».

Քանի սաղ է Սայաթ - Նովեն, շա'տ բան  
կու տեսնիս, քամանչա':

(1759)

Էսպես Արութինի ասած. քրոնիկոնի 447-ին:

2

Պատկիրքըտ դալամով քաշած, թահիրըտ  
ռանգե ռանգ իս անում.

Էրեսիտ խալըն ծածկում է՝ մազիրըտ  
խափանգ իս անում.

Բացվիլ իս կարմիր վարթի պես, բլլբուլի  
հիդ հանգ իս անում.

Ակոեքըտ օսկումըն շարած, պրոռշըտ  
մահանգ իս անում:

Էրեսըտ նուր լուսնի նըման քանի կեհա,  
կու բոլըրվի,

Դաստամազըտ նամ չի ուզի՝ առանց  
հուսիլ կու օլըրվի,

Էնդու համա քու տեսնողըն իր ճափեմեն  
կու մոլըրվի.

Յիփ մըտնում իս մեջլիսումըն, շանգ  
շուխի-շաբանգ իս անում:

Էրեսըտ տեսնելու գու քան քաղաք  
քաղկով, գիդ՝ գիդի պես.

Միռնողըն քիզմեն կու առնե

անմահական դիդ` դիդի պես.  
Յիփ տիդեմետ ժաժ իս գալի,  
շըխշըխկում իս ջիդջիդի պես`  
Ի՞նչ կոնիմ սանթուր քամանչեն`  
գուգարտ չնգուր, չանգ իս անում:

Ծուցիտ մեչըն վարթ, մանիշակ, սընբուլ  
ու սուսան իս շինի.

Քու տերըն բաղըն ի՞նչ կոնե` քու  
հուտըն ռեհան իս շինի.

Քամին մեչըն անց է կենում` մազիբըտ  
ելքան իս շինի.

Աշխարքըն ծով, դուն մեչըն նավ - ման  
իս գալի, լանգ իս անում:

Տասնեմետ մեկըն չին ասի, թեգուզ  
աշխարքս քիզ գովին.

Նովափար ծաղիկ ծովային, մանիշակ  
բաց արած հովին.

Բաս քու էշխին վո՞ւնց դիմանամ, ջուրըն  
տանե Սայաթ-Նովին.

Թե տեսնողըտ մեկ էլ տեսավ՝ դիվանա-  
դաբանգ իս անում:

(1759 մարտ)

Էս դիրա ու ենգիդունիայի հանգում-Արութինի  
(ասած) է. մարտի վերջին, քրոնիկոնի 447-ին:

3

Բըլբուլի հիդ լաց իս էլի,  
Վարթի նըման բաց իս էլի,  
Վարթաջրով թաց իս էլի.-  
Թաց իս էլի.

Չկա քիզի նման, չկա քիզի նման.  
Քիզ նման, քիզ նման.-  
Դուն իս աննման:

Միրունութինտ էլավ արբար.  
Մազիր ունիս` սիմ ու շարբար.  
Քի սազ գու քա դուշլու զարբար.-  
Ղուշլու զարբար.  
Չկա քիզի նման, չկա քիզի նման.  
Քիզ նման, [քիզ նման.-  
Դուն իս աննման]:

Էրեսըտ է շամս ու դամար.  
Ջանըս դուս գու քա քիզ ամար:  
Միչկիտ ունիս օսկե քամար.-  
Օսկե քամար.  
Չկա քիզի նման, չկա քիզի նման.  
Քիզ նման, [քիզ նման.-  
Դուն իս աննման]:

Հաքիտ զարըն ալ իս արի.  
Բըլբուլի հիդ լալ իս արի.  
Բարկ էրեսիտ իսալ իս արի.-

Խալ իս արի.

Չկա քիզի նման, չկա քիզի նման.

[Քիզ նման, քիզ նման.-

Դուն իս աննման]:

Դարդըս ասիմ՝ գու լան սարիր.

Էս ի նչ բան էր, վուր դուն արիր.-

Սայաթ-Նովուն ջունուն արիր.-

Ջունուն արիր.

Չկա քիզի նման, չկա քիզի նման.

[Քիզ նման, քիզ նման.-

Դուն իս աննման]:

(1752 մարտ)

Քրոնիկոնի 440-ին, մարտի վերջին: Էսպես բելիր  
ղափի-ի հանգում թասլիբ է:

Օսմանցոց մուղամ:



Շատ սիրուն իս, Շախաթայի ասողին՝  
խար չիս անի.

Անջաղ գրցիս էշիսի մեչըն, յիդ կեհաս՝  
քար չիս անի:

Էշիսըն հեստի կըրակ ունի՝ վունց կու  
էրվի, վունց կերթա.

Թեգուզ նընգնիմ ծովի մեչըն՝ հովնալու  
ճար չիս անի:

Բաս աշուղըն վունց դիմանա էտ քու  
տըված կեծակուն,

Դուն ինքնակալ թաքավուր իս՝  
բեհուբագար չիս անի:

Թե վուր սարերուն հանդիբիս, կու հալիս  
մումի նըման.

Թե վուր քաղաք տիդ հանդիբիս, կու  
քանդիս - վար չիս անի:

Իսկի բեհուբագար չունի Շախաթայի  
չասողըն.

Էնդո՛ւ համա, Սա՛յաթ-Նովա, շատ  
էթիբար չիս անի:

[Գագել-դիվանի]

Էս դիվանի խիստ լավն է, ով որ սովրի օղորմի  
ասէ: Հիմի գուզիմ թէ հայեվար ասիմ: Ամեն  
աստվաձ, յիս-մըղղըսու վուրթի Արութինս,  
պըստուց ինչոր յարսուն տարին գլուխ դրի  
ամենան խաղին, ամա սուրբ Կարապիտի  
կարողութենով սովրեցա քամանչեն ու չոնգուրն  
ու ամբուրեն:

[1747?]

5

Դա՛րդ մի անի, ջա՛ն ու ջիգար, միթկըտ  
դիվաց չը տեսնէ.

Աչկ խավրի, անգաճ խուլանա՛ էրեսըտ  
թաց չը տեսնէ:

Վո'ւնց արեգագրն շուղկը տա, վո'ւնց  
լուսինը լուս անե.

Ավալ քու տեսնողըն միռնի՝ քիզ  
գլխիբաց չը տեսնե:

Դուն գըլուխըտ մահի կու տաս, ես էլ  
քիզիդ կու մեռնիմ.

Միր էդնեն թամամ աշխարըս սով  
քաշե,-հաց չը տեսնե:

Թե վուր չը գամ ու չը տեսնիմ, հազար  
բաբաթ բան կոսիս.

Քաշկա մարթ վունց գա, վունց խոսի,  
վունց քի տըխրած չը տեսնե:

Աստուծու բերնեմեն առնիս մըխիթարիչ  
սուրփ հոքին.

Է՛լ վաղ միռնի Սայաթ-Նովեն՝ ճիտըտ  
գըցած չը տեսնե:

[Գագել-դիվանի]

Էսպես դիվանի լավ տեղ ասած, որն գրոց  
հայերեն տառ է, որն վրաց. թուրքերեն էլ ուզում  
էի հետն խառնել, բայց չխառնեցի:

6

Անգաճ արա բարիթավուր,  
Գընա', հիդըն խա'ղ մի անի.  
Յարի սիրտըն դա'ղ մի անի,  
Էտ կըրակըն չա'ղ մի անի.  
Չաղ շուռ արի  
Յարսուն տարի,  
Յարին բեդամա'ղ մի անի:

Բեդամաղ չըլի միզանից,  
Չը հիռանա անմիղ բանից.  
Յարըն նազով հոքիս հանից.  
Հանած ծառ է,

Էշխով վառ է,  
Չի' վախենա սուլթան-խանից:

Խանի պես դիվան իս անում,  
Շահզադի պես սան իս անում,  
Էտ ի նչ թավուր քան իս անում.  
Բանըտ քանդ է,  
Պռոշըտ դանդ է,  
Քաղցրը լիզվով ջան իս հանում:

Ջան չոնիմ յարի ձիոնեմեն,  
Հիվանդ իմ էշխի կրոնեմեն,  
Դիդ անիս ծուցիտ նրոնեմեն.  
Նրոիդ օսկով,  
Քաղցրը խոսկով,  
Կրակ իս վերածում բերնեմեն:

Բերնիտ մեչըն լալ է, գո'զալ.  
Հաքիտ գարըն ալ է, գո'զալ,  
Էտ ի նչպես խիալ է, գո'զալ,

Էտ խիալով նազ իս անում, յա՛ր,  
ամա ~ն:

Նազ իս անում, իխտիար իս`  
Հիդ աշխարիս բարեբար իս.  
Հընդու էկած դալամքար իս  
Ղալամ քաշած.

Ջանս է մաշած,  
Ջանս հանեցիր` ջադուքար իս:

Ջադուքար իս փել ու փանդով,  
Շիրագու շուշա իս դանդով,  
Այնաբանդ իս խաթաբանդով.  
Ջամ-հալիլա,  
Լալ ու թիլա,  
Ջանս հանեցիր էտ փըրսանդով:

Էտ փըրսանդով համ իս անում,  
Դաստամազըտ նամ իս անում,  
Աբա խաթըրըտ ջան իս անում.

Ջամ իս չինի,  
Դռչտ է սինի,  
Շամամնիրըտ դամ իս անում:

Դամ ու դովրան իս համաշա,  
Դաստա-դաստա մազըտ քաշա,  
Հաքաճըտ զար ու դումաշ ա.

Ղումաշ զարով  
Գու լաստարով,  
Ո՞վ քիզի գու քա թամաշա:

Թամաշա իս, վարթի ոանգ իս,  
Ծով տեսած օսկու մահանգ իս,  
Սանթուր ու քամանչա չանգ իս՝  
Բարակ ձենով սազ իս անում, յա՛ր  
ամա~ն:

Սազ իս անում, դուր իս գալի.  
Բաղչի մեչըն ջուր իս գալի.  
Փունջ մանիշակ նուր իս գալի.

Նուր գովելի,  
Անպատմելի,  
Վարթի մեչըն շուռ իս գալի:

Շուռ իս գալի բըլբուլի պես.  
Հուտըտ գու քա սընբուլի պես,  
Սուփրի մեչըն թայգուլի պես  
Դաստա կապած,  
Ռեհնին կըպած,  
Բաց իս էլի դուն գուլի պես:

Գուլ իս կոկոր տերիվակալ,  
Չիս թառամի, արիվակալ,  
Թաքավուր իս բարիվակալ.  
Բարով տամ քիզ,-  
Մըտիկ տու միզ  
Չէ թե ամսով, - օրիվակալ:

Օրն ի օրըն շատանում իս,  
Էշխի մեչըն մոդանում իս,



Սըրտի դարդըս յիդ անում իս.  
Յիդ արա', տի'ս,  
Թե թաբիբ իս,-  
Խիլքըն գըլխես հա~ տանում իս:

Տարար խիլքըս, հեյրան արիր.  
Բարակ միչկըտ սեյրան արիր.  
Էտ կըրակով բիրյան արիր.  
Հալբաթ մահիս հազ իս անում, յա'ր,  
ամա~ն:

Հազ չունիմ խային յարեմեն,  
Չիս ջոզվում անգին քարեմեն,  
Թաք չանցկենաս իդրարեմեն.  
Իդրար անիս,  
Հոքիս հանիս,  
Պըրծընիմ ահուզարեմեն:

Ահուզար իմ քաշում, ա~ման.  
Քիզնից ուրիշ չունիմ գուման.

Ծուցիտ մեչըն չայիր չիման.  
Չի' ման ասիմ,  
Մուրախասս իմ,  
Սըրտումս ունիմ իդրար իման:

Իդրար իմանեն չանցկենամ.  
Առանց քիզ մին օր վո՞ւնց կենամ.  
Բերնումըս դընիմ սանձ` կենամ.  
Սանձահարիմ,  
Սիրտըս վարիմ`  
Անհընանալու գանձ կենամ:

Գանձ իս սիրով ու սիրեկան,  
Ղիմեթ ունիս անգին ական,  
Լալ ու ջավահիր պատվական.  
Պատիվ անիմ,  
Քանի ջան իմ,  
Չուն աշխարս է անցողական:

Ա'նց մի կենա, թե հալալ իս,  
Մի մոր ծրծած, մի մոր դալ իս.  
Ղաբուլ ունիմ, թեգուզ հալիս,  
Չունքի իլթիմագ իմ անում, [յա'ր,  
ամա ~ ն]:

Իլթիմագըս է'ս է, ջա'նըմ.  
Օրըս հիդըտ կես է, ջա'նըմ.  
Էշխըն էստու պես է, ջա'նըմ.  
Ջանըմ - ջան իս,  
Աննըման իս.  
Աշխարս ուս ու տես է, ջա'նըմ:

Ուս ու տիս արա, իմացի.  
Մըտիկ արա ադ ու հացի.  
Թաք իդրարին դըրուստ կացի.  
Կաց իդրարին-  
Ահլի շարին,  
Յիփ միռանիմ, վըրես լացի':

Լացիս, աչկըտ զայի՝ անիս,  
Դաստա ռեհան փայի՝ անիս,  
Արտասունքըտ չայի՝ անիս.  
Չաու ջուր իս,  
Խիստ տըխուր իս.  
Ադալաթըտ Շահի անիս:

Շահի գուրիաթ թաբաղըն  
Չի հարցընի դուգուն դաղըն.  
Վայ թե էլ չը խոսիս վաղըն.  
Վաղըն գու քամ,  
Նըստիմ ու լամ,  
Ասիմ բարիթավուր իսաղըն:

Խաղ իս էլի, Սա'յաթ-Նովա.  
Դաղ իս էլի, Սա'յաթ-Նովա.  
Բաղ իս էլի, Սա'յաթ-Նովա.  
Գլուխըտ փիանդագ իս անում, յա'ր,  
ամա~ն:

Էսպէս բարիթավուր, լավ յարանա, Արուֆինի  
ասած (լուսանցքում):

Էսպէս լաւ բարիթաւուր է, որ ինչ որ Աշուղ-  
Օղլանի գլխովն անցնելու է (?), բոլորը սրա մէջ է  
գրած (վերջում):

7

Դիբա ու ենգիդունիա, զարբար ու զար  
իս, գովելի.

Հինդու դիարեմեն էկած զար-ղալամքար  
իս, գովելի.

Շա'տ սովդաքար քիզ կու պըտոե՝ դու  
անգին քար իս, գովելի.

Անտակ ծովի միչեն հանած անգին  
գովհար իս, գովելի:

Յիփ դու բաղչեն սեյրան կեհաս՝ ծովի  
նըման գու քա ալիս.

Գըլուխըտ պահելով արա՝ նամ չը դիբչի

Խաթու-խալիտ.

Տեսնողըն հեյբաթ կու մընա էտ քու  
սիրուն մահ-ջամալիտ.

Աշխարումըս նուր դուս էկաճ թագա  
նուգբար իս, գովելի:

Արի', միգիդ մե լավ կացի, դուրբան ըլիմ  
մուրվաթումըն.

Ման էկա յիրկիր` չը տեսա էտ քու  
նըման ջուրաթումըն.

Վո'նց Հինդու դիարումն կա, վո'նց  
Փըռանգի սուրաթումըն-

Քաշվիլ իս քարգահի մեչըն, ուրիշ  
թահար իս, գովելի:

Թարիփըտ դավթար իմ արի, փիլ պիտի,  
վուր գիրքըն տանե.

Դուն քու մըտկի հիդ մի' էհա, էտ  
խիալըն սըրտետ հանե.

Մեչկըտ՝ հադիդեմեն քաշած սիրմա  
մավթուլի նրման է.

Աշխարիս շըվաք իս անում՝ սալք ու  
չինար իս, գովելի:

Յիս քիզանից չիմ հիռանա՝ թե չը հասնի  
մահիս վադեն.

Յիփ մեռանիմ, շա'ղ տու վըրես  
դաստամազի թիլի շադեն.

Հենչաք ըլի՝ ուրախ կենաս. Սայաթ-  
Նովեն առնե դադեն.

Շատ մարթ կոսե, թէ յար ունիմ, դուն  
ո'ւրիշ յար իս, գովելի:

Էս դաստա բեդաստա երգի հանգով (տե'ս  
հաջորդի ծանոթ.):

Յիս մե դարիբ բուլբուլի պես, դուն օսկե  
դափազի նրման.

Էրեսըս դի ոտիտ տակըն՝ անց կաց,  
փիանդազի նրման.

Յա՛ր, քիզիդ խոսիլ իմ ուզում՝ Շահի  
իլթիմազի նրման.

Աջայիբ սուրաթի տեր իս՝ ռանգըտ է  
գուլգազի նրման:

Յա՛ր, մըտիլ իս բաղչի մեչըն, աջայիբ  
սէյրան իս անում.

Շուղկտ արեգազի նրման է՝ տեսնողին  
հէյրան իս անում.

Ջիգարըս կրակ իս տըվի, էրվում իմ՝  
բիրյան իս անում.

Վո՛ւնց մե գոզալ չէ ունեցի էտ քու արած  
նազի նրման:



Հենց իմացի, յա՛ր, քու դուլն իմ, թանգ  
հախով գրնած չըրաղ իմ.

Քու դըռանըտ նընգած ըլիմ, ով տեսնե,  
ասե՛ տուսաղ իմ.

Էշխեմեստ հիվանդացիլ իմ, վունց  
միոնում իմ, վունց թէ սաղ իմ.

Ծովի պես ուրդան իմ տալիս, գըժվիլ իմ  
Արագի նըման:

Ով կու տեսնե, ջունուն կու լի՛ քարգ  
էրեսիտ իսալ իս անում.

Էլ ջուքամըն դո՛ւն կու քաշիս, ջուն  
մահիս իսիսալ իս անում.

Յա՛ր, յիս քիզ քարով իմ տալիս, - շուռ  
իս գալի, դալ իս անում,

Չունքի խոսկըտ անց է կենում բելլու  
շահանդագի նըման:

Սայաթ-Նովեն ասաց՝ գու լամ. չիմ լաց  
լի՝ թե ճար ունենամ.

Էլ յի՛ս կու քաշիմ էս դուսեն՝ թուղ լի  
ահուզար ունենամ.

Յա՛ր, քիզ վըրեն արք ունենամ, մե լավ  
իխտիար ունենամ՝

Առնում, տանիմ մեջլիսնիրըն օսկեջըրած  
սազի նըման:

Էս Արուֆինի ասած է. դազալի (?)

Էս երկու երգերն մի եղանակով են. ով որ սովորի  
Դոստիի խաղի ձենով ասի, թե որ չիմանաս  
հարցրու, թե գոզալար յըղնաղինա բախ, դաստա  
բեդաստա թարփանուր:

9

Ուստի՞ գու քաս, դարիբ բըլբուլ.

Դու մի՛ լաց լի, յիս իմ լալու.

Դու վարթ պըտռե, յի'ս գոգալին,-  
Դու մի' լաց լի, յի'ս իմ լալու:

Ա'րի, բըլբուլ, խո'սի բարըն,  
Օխնըվի քու էկած սարըն.  
Քի վարթն էրից, ինձ իմ յարըն,-  
Դու մի' լաց լի, յի'ս իմ լալու:

Ման իմ գալի դիլդարի հիդ,  
Վունց դարիբ բըլբուլ խարի հիդ.  
Դու վարթի հիդ, յիս յարի հիդ,-  
Դու մի' լաց լի, յի'ս իմ լալու:

Սալբուի նըման կանանչ իմ,  
Ե'կ խոսի` ձայնիտ ճանանչ իմ,  
Դու վա~րթ կանչե. յիս յա~ր կանչիմ,  
Դու մի' լաց լի, յի'ս իմ լալու:

Ղա'րիբ բըլբուլ` ձայնըտ մալում,  
Յիս ու դուն էրվինք մե հալում.

Սայաթ-Նովեն ասաց՝ զա'լում,-  
Դու մի' լաց լի, յի'ս իմ լալու:

Արութինի ասած թասլիք

10

Դուն է'ն գըլխեն իմաստուն իս, խիլքս  
հիմարին բար մի' անի,  
Էրագումըն տեսածի հիդ միզի մե հեսար  
մի' անի,

Յիս խոմ էն գըլխեն էրած իմ,  
նուրմեկանց քաբար մի' անի,  
Թե վուր գիդիմ բեզարիլ իս, ուրիշին  
սարբար մի' անի:

Չը կա քիզ պես հուբմի-հեքիմ. դուն  
Բոստոմի Չալ՝ թաքավուր.

Ասկըտ ասկերումըն գոված՝ հա'մդ  
ունիս, գոզալ թաքավուր.

Թե էսանց էլ սուչ ունենամ՝ գլուխս արատալ, թաքավուր.

Մըտիկ արա քու Ստեղծողին՝ նահախ տիղ դագաբ մի՛ անի:

Յարալուն հեքիմն էնդուր գուզե՝ դի՛ղ տալու է, ցա՛վ տալու չէ.

Քանի գուզե արբաբ ըլի՝ դուլըն աղին դավ տալու չէ.

Դու քու սիրտըն իստակ պահե, յաղի խոսկըն ավտալու չէ.

Աստծու սերըն կանչողի պես դըռնեմես ջուղաբ մի՛ անի:

Ամեն մարթ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ուրիշ ջըրեն է.

Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գըրեն է:

Բունիաթըս ավագ չիմանաս՝ քարափ է,

քարուկրբեն է՝

Մելավի պես, առանց ցամքիլ, դուն  
շուտով խարաբ մի՛ անի:

Քանի գուրե քամին տանե՝ ծովեմեն  
ավագ չի պակսի.

Թեգուզ ըլիմ, թեգուզ չըլիմ՝

մեջլիսներուն սագ չի պակսի,

Թե կու պակսիմ, քիզ կու պակսիմ՝

աշխարիս մե մագ չի պակսի.

Սայաթ-Նովու գերեզմանըն Հինդ,

Հաբաշ, Արաբ մի՛ անի:

(1753)

Էսպէս Արութինի ասած. քրոնիկոնի 441-ին:

11

Յիս կանչում իմ լալանին.

Բադեշխանեն լալ անին.

Վայ թե հասրաթետ միռնիմ,  
Բլբուլ լիզուս լալ անին.

Դոստիրըս հիռու կանգնին, յադիրըն  
զան լալ անին:

Քի սազ գու քա ալ դումաշըն, նազանի.-  
Ե՛կ ճակատիտ կապե զարլու մուղայիշ.  
Ձիռիտ բըռնե օսկեջըրած մըկրատըն,  
Խուճուճ-խուճուճ կավերուտ տուր  
արայիշ:

Յիս կանչում իմ յարանին.  
Թեջնիս, վարսաղ, յարանին.

Ո՞վ ասավ, թե նըհախ տիղ  
Յարիտ մեչըն յար անին.

Ավետարանն կու տա խոնար մարթուն  
երանին:

Պատվական տեսնելու նովաբին-աջար.  
Բլբուլին սպանող թոփ վարթի սաջար.

Աչկիրուտ ունքիրըտ էլավ մուհաջար.  
Թերթերուկիտ մազըն` զար, օսկու  
զարնիշ:

Յիս կանչում իմ զայանին.

Նու [ու] այիք զայ անին.

Դո'նն իս ասի` նըհախ տիղ

Յարի սիրտըն զայ անին.

Շա'հն էր քաշի, չէր դիմանա էս իմ

քաշած զայանին:

Հուտըտ աշխար բոնից, փըռա'նգի  
մաջում,

Դաստամազըտ դառավ սիմ ու  
աբրեշում.

Կըոնիրըտ շիմշատ է, մատնիրըտ է  
մում.

Ծուցըտ բաղչա ունիս, մեչկըտ է դամիշ:



Յիս կանչում իմ մերանին,  
Ըսկըսպնական մերանին.  
Թուղ դոստիրըս շատանան,  
Թըշնամիքըս մեռանին.  
Ասի, թե յիս քու ախպեր՝ քու մերն ինձի  
մեր անին:

Բեմուրվաթ յա'ր, խիլքըն գըլխես մի  
տանի.  
Դարդիրըս շատացավ քանի~ մե քանի.  
Գիդիմ վուր, յա'ր, դուն ինձ լայիղ չիս  
անի՝  
Դուն մե թաքավուր իս, յիս մե խիղճ  
դավրիշ:

Յիս կանչում իմ մասանին.  
Սե ու այիբ մաս անին.  
[Յիս քիզնից չիմ հեռանա,  
Գուզե ինձ անմաս անին]

Սայաթ-Նովե քո՛ւ յարն է, թեգուզ  
մասնեմաս անին:

Դաստամազըտ նըման սըմբուլ սուսանի.  
Վախում իմ, թե սերըտ սիրտըս կես  
անի.

Կու միռնիմ, էլ ինձի պես չիս տեսանի.  
Քու Սայաթ-Նովեն իմ, մի՛ անի դիմիջ:

(1753)

Քրոնիկոնի 441-ին. Արութինի (ասած) բուբայի  
բայաթի-թասլիբ (-թեջնիս):

12

Յիս քու դիմաթըն չիմ գիդի՝  
Ջավահիր քարի նման իս.  
Տեսնողին Մեջլում կու շինիս՝  
Լեյլու դիդարի նըման իս:

Աշխարումըս իմըն դուն իս,  
Բեմուրվաթ իս, մուրվաթ չունիս.  
Պըռոշնիրըտ` նաբաթ ունիս,-  
Ղանդ ու շաքարի նըման իս:

Դադա պիտի` թարիփտ ասե,-  
Ակոեքըտ յադութ-ալմաս է,  
Ռանգըտ փըռանգի ատլաս է,-  
Զար-դալամքարի նըման իս:

Մազիրըտ նըման ռեհանի,  
Դուն ուրիշ խիալ մի անի,  
Ռահմ արա, հոքիս մի հանի`  
Մուրվաթով յարի նըման իս:

Վունց դիմանամ էսչափ չարին`  
Աչկեմես կաթում է արին.  
Սայաթ Նովայ , նազլու յարին`  
Գընաժ նոքարի նըման իս:

Թասլիբ, Արուօինի ասած:

13

Խոսկիրըտ մալում իմ արի՝ անարատ  
մաքուր իս, ա'խպեր.

Օսկե փարչումըն լըցըցած անմահական  
ջուր իս, ա'խպեր.

Խըմողըն վո~ւնց կու կըշտանա՝ դուն  
կաթնե ախպուր իս, ա'խպեր,

Աշխարքըն ծով՝ դուն մեչըն նավ, ման  
գու քաս՝ փըրփուր իս, ա'խպեր.

Վախում իմ, թե ինձ էլ էրիս՝  
անհանգչիլի հուր իս, ա'խպեր:

Հուր իս՝ էշխով կըրակած,

Խոսկ իմ ասում առակաց,

Իմ սիրմա էրծաթ ախպեր՝

Օսկե ջըրով վարակած:

Աջաբ միզիդ ի՞նչ իս կամում, ի՞նչ է  
ասում էտ քո փալըտ.

Իսկի չի՛ս գալի, չի՛ս ասում, «աջաբ ի՞նչ  
է, բա՛նդա, հալըտ».

Աստվաձ վըկա, սիրտըս էրից ջեյրանի  
նըման ման գալըտ.

Յիս քիզանից չի՛մ հիռանա, թեգուզ դուս  
գա խաթու խալըտ.

Թեգուզ սիրիս, թեգուզ ասիս, թե գուզե  
համբուրիս, ա՛խպեր:

Համբուրիմ սիրով համբուր,

Վունցոր խեչին է դաստուր.

Ով քիզ խայան մըտիկ տա՛

Դառնա էրկու աչկով կուր:

Քիզիդ բաս ո՞վ կարա բըռնի՛ հազար  
բաբաթ բառ իս էլի.

Խոսկիրըտ անգին ջավահիր՛

Ասմավուրու ճառ իս էլի.

Հոտըտ աշխարըս է գավթի՝ բալասանի  
ծառ իս էլի.

Չը կա քիզ պես էշխի ջունուն՝ կըրակ  
նընգած վառ իս էլի.

Շատ մարթիք քիզիտ կու էրիս, էտ լիզվի  
տեր վուր իս, ա'խպեր:

Վուր յիս ասիմ՝ իմացի,

էշխի մեչըն հիմնացի.

Ինձ հուրյան բիրյան արիւր,

Ասում իս, թե դիմացի:

Խիլքըս գլխեմես տարիլ իս, լիրթ ու

թոքըս գարդ իս արի,

Միրտըս փուրումըս սպանեցիր, էշխըտ

քիզի՝ նար(դ) իս արի,

Ինձ հուրյան բիրյան շինեցիր. աջա՞բ

դուն էլ դարդ իս արի.

Յիփ քի սիրով մեհման անիմ, վի կացի,  
թե մարդ իս, ա'րի,  
Ուրախա'ցի, ուրախացո'ւ, չունքի միզ  
մոդ հուր իս, ա'խպեր:

Հո'ւր իս, սիրով սիրեկան,  
Քիզի դուլուդ պատվական,  
Հազար թուրլու կերակուր,  
Սուրփ գինի անապական:

Համաշա իմ յարի ճամփին կանգնած իմ`  
տալիս իմ դովա.

Աշխարքն աշխարով կըշտացավ, իմ  
սիրտըն քիզանից սով ա.

Մըրփե', շաղ տու ոտիտ տակըն, էշխետ  
դառա` հավաջովա.

Իսկի չի'ս գալիս, չի'ս ասում. «խի'ստ իս  
լալիս, Սա'յաթ-Նովա».

Չըլի միտկըտ մոլըրվիլ է, սրտումըտ  
պըխտուր իս, ա'խպեր:

Պըխտուր սիրտըտ պարզ արա,  
Բըլբուլի պես փարզ արա,  
Աստըձուն փառք, Քաղկումն իս`  
Դարդըտ Խանին արզ արա:

Էսպես մուխամմազ-բայաթի Արութինի ասած  
(տե'ս 56-րդը եւ սրա ծանօթ.):

14

Էսօր իմ յարին տեսա բաղչի մեչըն ման  
գալով,

Գեղինըն զարթարվեցավ իմ յարի օսկե  
նալով.

Բըլբուլի պես պտուտ էկա վարթի վրա  
ձեն տալով,

Ջունուն էլավ խիլքըս գըլխես, սիրտս



տխուր, աչկա լալով.

Հույս ունիմ իմ ստեղծողիմեն՝ միր  
դուշմանն ըլի էս հալով:

Յա՛ր, էտ քու նազ ու դամգով ջանս փուլ  
ու փանդ իս արի,

Խմիլ իս էշխով շարքաթըն՝ պռոշնիրըս  
դանդ իս արի.

Խաթրով, իսալով, քաղցր լիզվով շատ  
ինձ պեսին բանդ իս արի.

Չունքի մահս յարիմեն է, թուղ լի մեռնիմ  
լավ գոզալով:

Տարին-տասներկու ամիս մազիրըս  
հուսած կուլի.

Պռոշեմետ միդր է կաթում, թողնիս՝  
յախետ թաց կուլի.

Գարնան շնչի ծաղկի նման կարմիր  
վարթըս բաց կուլի.

Ինչ օգուտ է քու բաղմնչուն՝ դարիք  
բլբուլըն լաց կուլի,  
Մուրվաթ չունիս, պտուտ գու քա բաղչի  
վրա ճրկճրկալով:

Յիփ քու սուրաթն կու քաշին՝ նախշումն  
շընուք կու տաս.

Կու վըռվոաս ճրաքի պես՝ սաղչումն  
շընուք կու տաս.

Մըշկով լիքն բըրուլի պես, թաղչումն  
շընուք կու տաս.

Բաց կուլիս կարմիր վարթի պես՝  
բաղչումն շընուք կու տաս.

Քամին դիբչի փոթլիտ մեչն՝ հոտըտ գու  
քա վըռվոալով:

Յիս էլ ուրիշ յա՛ր չունիմ, էս գլխեն վա՛ղ  
իմացի.

Ա՛նգաճ արա, մա՛տաղ իմ քիզ, էս խոսկս

սա'ղ իմացի.

Մտիկ արա քու ստիղծողին, տուզ-  
նամագ-ա'ղ իմացի.

Սայաթ-Նովին մի' ջգրեցնի՝ էշխեմես  
տուսաղ իմացի.

Խիլքս գլխեմես տարիլ իս քու,  
բե'մուրվաթ, գարդիշ տալով:

Էսպէս լաւ մուխամագ. Արութինի ասած:

15

Գուզիմ՝ ումբրըս հենց անց կացնիմ՝  
օրըս մունաթ չը քաշե.

Թեգուզ հազար դարդ ունենամ՝ դարըս  
մունաթ չը քաշե.

Ղաստ անիմ, բարու հանդիբիմ՝ չարըս  
մունաթ չը քաշե.

Գըլուխըս չարեն ռադ անիմ՝ սարըս  
մունաթ չը քաշե.

Էրեսըս հայալու պահիմ՝ արըս մունաթ  
չը քաշե:

Հիռու տիղացեն գալիս իմ-խիլքի դարար  
շահ իմ բերի.

Հուջրես լիքն է անգին լալով,  
ջավահիրչուն ահ իմ բերի.

Հընդու միչեմեն դուս էկած դիմեթով  
մաթահ իմ բերի.

Տեսնողըն թահրըն չի գիղի՝ մե հեստի  
քարգահ իմ բերի.

Հեստի տիղ դուքան բաց անիմ՝ գարըս  
մունաթ չը քաշե:

Մե բիռըս Փռանգի ատլաս է, տալիս է  
շովղ ու շափաղաթ.

Մե բիռըն գար-դալամքարի, տիղ ունի  
վունցոր մաքաղաթ.

Մե բիռըս Չինումաչինին կու առնե

Թամամ՝ փարադաթ.

Մե բիռըն ենգիդունյա է, մե բիռըն՝

փաչայի խալաթ,-

Վունց ձեւիլ գուգե, վունց կըտրիլ՝

կարըս մունաթ չը քաշե:

Մե բիռըն դըրմըզ ու գափոանգ, մե

բիռըն էլ գանջափիլ ա.

Մե քանի բիռըս դարիչին, մե բիռըն էլ

դարանփիլ ա,-

Բերնիրըն վըրա չէ գալիս, հակնիրըս է

սիլա - սիլա.

Անտակ ծովի միչեն հանաձ ակնիր

ունիմ՝ լալ ու թիլա.

Մարքարիտըս շադա շադա՝ շարըս

մունաթ չը քաշե.

Շատ մարթ էստունք կու իմանա, կոսե.

«Հալբաթ սա գանգին ա»

Չին գիդի թե ուշկ ու միտկըս հազար մե  
բաբաթ հանգին ա.

Մարիփաթով քաղցըր լիգուն դիփունի  
վըրա անգին ա.

Մայաթ-Նովեն էնդուր գու լա` գըլուխըն  
մահու ճանգին ա,-

Աստված սիրողն ինձ ազատե` յարըս  
մունաթ չը քաշե:

Մուխամազ. Արութինի (ասած):

16

Արի ինձ անգաճ կալ, ա'յ դիվանա սիրտ,  
Հայա սիրե, ադաբ սիրե, ար սիրե.

Աշխարքըս քունն ըլի, ի<sup>օ</sup>նչ պիտիս  
տանի`

Աստված սիրե, հոքի սիրե, յար սիրե:

Էն բանն արա, վուր Աստրծու շարքումն  
Է,

Խըրատնիրըն գըրած Հարանց վարքումն  
Է.

Յիրիք բան կա՝ հոքու մարմնու  
կարքումն է՝

Գիր սիրե, դալամ սիրե, դավթար սիրե:

Ե՛կ, ա՛րի, սի՛րտ, մընա դուն մի  
դամաղի,

Հալալ մըտիկ արա հացի ու աղի.

Հենց բան արա՝ մարթ վըրետ չը  
ծիծաղի՝

Խրատ սիրե, սաբըր սիրե, շար սիրե:

Հպարտութի՛ն չանիս՝ դուր գու քաս  
Տերիտ,

Խոնարութի՛ն արա կանց քիզ դեվերիտ,

Աստված դիփունանցըն մին հոքի էրիտ՝  
Աղկատ սիրե, դոնաղ սիրե, տար սիրե:

Սայաթ Նովայ , էրնեկ քիզ, թե է'ս անիս՝  
Հոքուտ խաթրի մարմնուտ ումբրը կես  
անիս.

Թե գուզիս, վուր դադաստան չը  
տեսանիս՝

Վանք սիրե, անապատ սիրե, քար սիրե:

(1753 մայիսի 1)

Ուշլամա. Արութինի ասած, մայիսի 1-ին  
քրոնիկոնի 441-ին:

17

Դուն էն հուրին իս, վուր գեմի կու  
գավթե,  
Չունքի ինձ գավթեցիր խափով, նազանի.



Արիվիլք, արիվմուտ, հարավ ու հյուսիս  
Չը կա քիզի նրման՝ չափով, նազանի:

Շատ մարթ քու էշխեմեն կու դառնա  
յիզիդ.

Արի մե ոահմ արա, լա՛վ կացի միզիդ.  
Գուզիմ թե համաշա դամ անիմ քիզիդ՝  
Սանթուրով, քամանչով, դափով,  
նազանի:

Դարդիրըս շատացավ՝ ասիլ իմ ուզում.  
Աչկեմես արտասունք հուսիլ իմ ուզում.  
Համաշա, յա՛ր, քիզիդ խոսիլ իմ ուզում.  
Սիրտըս չէ կըշտանում գափով,  
նազանի:

Հայալու իս՝ ադաբ ունիս, ար ունիս.  
Ձիոիտ դաստա կապած սուսանբար  
ունիս.

Տուր ինձի սըպանե՛ իխտիար ունիս.  
Հենչաք ըլի՛ կենաս քափով, նազանի:

Սայաթ-Նովեն ասաց՝ արգ անիմ  
Խանին.

Ղաբուլ ունիմ՝ քու խաթրու ինձ  
սըպանին.

Հենչաք ըլի, յա'ր, գաս իմ գերեզմանին,-  
Ածիս խողըն վըրես ափով, նազանի:

Ղափիա-յարանա. Արութինի ասած:

18

Էշխըն վառ կըրակ է՝ էրվելով գու քա,-  
Շատ մարթ կոսե՛ յիս յարի հիդ ման գու  
քամ...

Էս դարդեմեն ով չէ քաշի՛ վո'ւչ քաշե.  
Ով յար սիրե, է'լ չասե թե՛ ջան գու քամ:

Շատ մարթ կա՝ էն գըլխեն սըրտում  
ունե դամ.

Բազի մարթ չե քաշի, էշխեմեն է խամ.  
Ինչ ասիս կոնիլ տա՝ սերն է անըսկամ.-  
Հալվեցա, մաշվեցա. էլ ի~նչ ջան գու  
քամ:

Էշխըն վուր կա՝ հազար բաբաթ հանգ  
ունե.

Ուշկ ու միտկըն կու քնեցնե՝ բանգ ունե.  
Բըռնաձըն չի թողնի՝ դայիմ չանգ ունե.-  
Էնդու համա՝ խան հիդ կեհամ, խան գու  
քամ:

Թե դուն էշխի հիդ մանգալըն  
հարցընիս՝

Չի դիմանա Ռոստոս Ջալըն՝ հարցընիս.  
Թե բեմուրվաթ յարի հալըն հարցընիս՝

Ասում է թե. «սուլթան գու քամ, խաս գու քամ»:

Մայաթ-Նովեն ասաց՝ շատ ի ջանք  
դըրի,  
Մե բափա չը տեսա հում կաթնակիրի.  
Ովոր ինձ չի սիրի՝ յիս է՛լ չիմ սիրի.  
Մերըն սեր կու բերե՝ սիրեկան գու քամ:

Ղափիա: Էսպէս Աշուղ-Օղլանի օգութլամա.  
Արութինի ասած. լան է:

19

Ձենըտ քաղցըր ունիս՝ լամգով կու  
խոսիս.  
Նա պահե քիզ, ումնոր ծա՛ռա իս, գո՛գալ.  
Մեչկըտ ջեյրանի է, ոանգըտ՝ շաքարի,  
Փռանգըստանու էկած խարա իս, գո՛գալ:

Ղումաշ ասիմ` շուրեղեն է, կու մաշվի,  
Սալբի ասիմ` ախրը մին օր կու տաշվի,  
Ջեյրան ասիմ` շատ մարթ քիզիդ կու  
յաշվի,  
Բաս վո՞ւնց թարիփ անիմ` մարա իս,  
գո՛գալ:

Թե մանիշակ ասիմ` սարեմեն կոսին,  
Թե ջավայիր ասիմ` քարեմեն կոսին,  
Թե վոր լուսին ասիմ` տարեմեն կոսին,-  
Արեգագի նըման փարա իս, գո՛գալ:

Գո՛ւզիմ թե համաշա դըռանըտ գամ  
ուխտ`  
Աչկիրըտ կարմիր վարթ, նուր բացարած  
տուխտ,  
Լիզուտ` գըրիչ ունիս, ձեռըտ` գուլգազ  
թուխտ.  
Ծովեմեն դուս էկած զարա իս, գո՛գալ:

Միրա սիրմըտ սըրտիս մեչըն ցանեցիր,  
Նազ ու դամգով, յա՛ր, իմ հոքիս  
հանեցիր,

Էս քու Սայաթ-Նովուն դո՛ւն  
սըպանեցիր.

Գլխիտ էկած դադեն առա յիս, գո՛գալ:

Ղափիա. էսպես լավ յարի վրա Արութինի ասած  
է:

20

Շատ մարթ կոսե՛ յիս յարիմեն հասրաթ  
իմ՝

Լեյլի-Մեջլումն էլ չի էլի էս հալով.

Մարթ պիտի համաշա բերանըտ  
տընդդե՛

Խոսկ իս ասում առակավուր-մասալով:

Լիզուտ քաղցր ունիս՝ շաքար ու  
շարթին.

Մազիրըտ ռեհան է փաթըթած վարթին.

Քի զարթարած տեսնիս հիդ

ծաղկազարթին՝

Հաքիլ ըլիս զար-զարբաբըն՝ խաս ալով:

Յա՛ ինձի կորցըրեք, յա մե բան արեք,

Խփեցեք մե տիղըս, մե նշան արեք,

Թեզուզ էստու համա քարասպան արեք՝

Չի՛մ կըշտանում գոզալի հիդ խոսալով:

Աջաբ վո՞ւնց դիմանամ յիս էսչափ

դարին,

Աչկեմես արտասունք դուս գու քա՛

արին,

Օրըն իր շափաթով կարոտ իմ յարին,

Վունցոր դարիբ բըլբուլ՝ վարթին

տիսալով:

Խիլքըս տարավ՝ ջադուքարին չի'մ  
տեսի.

Բեմուրվաթին, բեիդրարին, չի'մ տեսի.  
Սայաթ-Նովեն ասաց՝ յարին չի'մ տեսի,  
Ման իմ գալի արտասունքըս հուսալով:

Էսպէս վարսադ. Արութինի ասած-մե սիրունի  
վրա:

21

Առանց քիզ ի՞նչ կոնիմ սոյբաթն ու  
սազըն.

Ձիռնեմես վեր կոծիմ չանգիրըն մեմեկ.  
Չունքի ուշկ ու միտկըս իրար շաղեցիր՝  
Փահմես կու հիռացնիմ հանգիրըն  
մեմեկ:

Մե դուգունըն էրկու դաղին ի՞նչ անե,  
Մե նոքարըն էրկու աղին ի՞նչ անե,



Մե բաղմանչին էրկու բաղին ի՞նչ անե,  
Փեյվանդ գուգե թագա տընգիրըն մեմեկ:

Ղուրթ ին ասի փիր ուստաքար  
դադիրըն.

«Բաղ շինեցի, վարթըն քաղից  
վադիրըն».

Ջափեն յիս քաշեցի, սափեն յադիրըն.  
Բաղիփն էկավ միգ, էս բանգիրըն մեմեկ:

Առանց քիզ ի՞նչ կոնիմ աշխարիս մալըն.  
Չի՛մ անի քալագըն, չի՛մ անի դալըն,  
Կու հաքնիմ մագեղեն, կու հաքնիմ  
շալըն,  
Կերթամ ու ման գու քամ վանքիրըն  
մեմեկ:

Բըլքամ մե մարթ ոաստ գա, վուր ինձ  
խըրատե,  
Գո՛գալ, քու էշխեմեն սիրտըս ազատե.

Կանց յոթըն իմասնասիրացըն շատ է  
էս քու Սայաթ-Նովու բանքիրըն մեմեկ:

Արութինի (ասած), լաւ յարանա-դափիա է:

22

Դաստամազըտ սիւմ ու շարբաբ, նամ  
շաղ էկած ռեհան է.

Ունքիրըտ դալամով քաշած, էրէսըտ  
զարնըշան է.

Ակըռքնիրըտ լալ ու մարքրիտ, ռանգիտ  
մարթ կու երանէ:

Թաք յիս միռնիւմ` դուն սաղ ըլիս, էշիւրտ  
իւմ գիրիզման է.

Նազիտ միռնիւմ, նազ մի անի. նազըտ  
ինձ կու սրպանէ:

Վուր բըլբուլին [վարթըն խափե, աբա]  
խարին թամամե.

Ումնոր կանց միզի լավ սիրիս` Աստված  
չարին թամամե.

Դիդարետ կարոտ մընացի-էրկու տարին  
թամամ է:

Թաք յիս միռնիմ` դուն սաղ ըլիս, էշխըտ  
իմ գիրիզման է.

Նազիտ միռնիմ, նազ մի անի. [նազըտ  
ինձ կու սըպանե]:

Թառամեցավ կարմիր վարթըն, բաղըն  
բըլբուլ չէ գալի,

Սիրտըս յարալու շինեցիր, էրվում իմ  
մըրմնջալի.

Էշխեմետ հիվանդացիլ իմ, պառկած իմ  
դըժար հալի:

Թաք յիս մեռնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըտ  
իմ գիրիզման է.

Նազիտ միռնիմ, նազ մի անի. նազըտ  
ինձ կու սրպանէ]:

Մեջլումի պես սարն իմ նընգի, Լեյլումեն  
խաբար չունիմ.

Էշխեմետ սիրտըս էրվում է, հովանալու  
ճար չունիմ.

Աստվաձ վըկա, աշխարումըս յիս քիզ  
ավել յար չունիմ:

Թաք յիս միռնիմ՝ դուն սաղ ըլիս,  
[էշխըտ իմ գիրիզման է.

Նազիդ միռնիմ, նազ մի անի. նազըտ ինձ  
կու սրպանէ]:

Սայաթ-Նովեն ասաց. գա'լում, աչկըս  
լալիս է արին.

Հում կաթնակիր - Աթա'մի գաթ, նա'լաթ

քու էյթիբարին.

Իդրարեմեն շուտ անցկացար, ո՞ւր է  
յարասուն տարին:

Թաք յիս միոնիմ` դուն սաղ ըլիս, էշխըս  
իմ գիրիզման է.

Նազիտ միոնիմ, նազ մի անի. նազըս  
ինձ կու սըպանե:

(1754 մարտ)

Էսպէս Արութինի ասած. մարտի 1-ին քրոնիկոնի  
442-ին (վերջում).

Էսպէս թասլիբ-մուխալիփի հանգում, հինգ  
յարփաղի (տերեւաւոր), քրոնիկոնի 442-ին  
(լուսանցքում):

23

Ինձ սիրեցիր, էշխըն ընգար, խաղի  
դավթար իմ քիզ ամա.

Մի' քաղի փըշի ծաղիկըն` վարթ

սուսանբար իմ քիզ ամա.

Չիմ թողնի արեգագումըն՝ բաղչի սաջար  
իմ քիզ ամա.

Յիս քու մահըն վո՞ւնց կու խընդրիմ՝  
նուղլ ու շաքար իմ քիզ ամա:

Է՛լ քու բաղին մըտիկ արա, ուրիշ բաղեն  
վարթ չին տա քիզ.

Աղ ու հացըն մի դեն գըցի, շափթենը մեկ  
մըտիկ տու միզ.

Թեգուզ աշխարըս պըտուտ գաս՝ չիս  
տեսնի ինձի պես ազիզ.

Թաք ուրիշ գոզալ չը սիրիս՝ իղրարով  
յար իմ քիզ ամա:

Թաք յիս մորես չէի ծընի. վա՛յ էն օրին՝  
յիս քիզ տեհա.

Դու բըլբուլ իս՝ յիս կարմիր վարթ.  
չասիս, թե վարթըն ջալդ կեհա.

Մե փութըր էտենց դիմացի, շուտով  
Հընդատան մի էհա.

Անգործիլ անխարջ ու քըրիի մանդիլի  
գար իմ քիզ ամա:

Աստվաձ վըկա, դիմիշ արած գըլուխըս  
քիզ մատաղ ըլի.

Եկ քիզիդ սիրով դամ անիմ, ով գուզե  
բեդամաղ ըլի.

Յիս քու խոսկեն չիմ անց կենա, թաք քու  
դամաղըն չաղ ըլի.

Թեգուզ անմահութին ուզիս, սիրով կու  
ճարիմ քիզ ամա:

Քու դարդըն ինձի պառվեցուց. ո՞ւմըն  
ասիմ, Սա'յաթ-Նովա.

Մի գըցի ձեռնեմեն ձիռըն՝ օսկե թասս իմ,  
Սայաթ Նովայ .

Փռանգըստանու միչեն էլաձ՝ գար

ատլաս իմ, Սա'յաթ-Նովա.

Ծալե դավթարըտ, դուրթին դի՝ րանգ ու  
րուքար իմ քեզ ամա:

(1754 ապրիլի 1)

Ղազալի: Էսպէս ասել է մէկ հաւատարիմ  
սիրեկանն, եւ միւս էրեսին Սայաթ-Նովեն.

ապրիլի 1-ին քրոնիկոնի 442-ին (լուսանցքում):  
Էս, Արուրթինը եւ իր սիրեկանը որ խօսել էին, էն  
է. սիրեկանն ասել է ուղղակի Սայաթ Նովայ յի  
էրեսին, քրոնիկոնի 442-ին (վերջում):

24

Աշխարումըս ախ չիմ քաշի, քանի վուր  
ջա'ն իս ինձ ամա.

Անմահական ջըրով լիքըն օսկե փընջան  
իս ինձ ամա.

Նըստիմ, վըրես ջըվաք անիս՝ զարբար  
վըրան իս ինձ ամա.



Սուչս իմացի՛, էնենց սրպանե՛ Սուլթան  
ու Խան իս ինձ ամա:

Մեչկըտ սալբու չինարի պես, ռանգըտ  
Փրոանգի ատլաս է,

Լիզուտ շաքար, պոռշըտ դանդ,  
ակոեքըտ մարքրիտ ավմաս է.

Օսկու մեչըն մինա արած, աչկիրըտ,  
ակնակապ թաս է.

Պատվական անգին ջավայիր, լալ-  
Բադեշխան իս ինձ ամա:

Յիս էս դարդին վո՞ւնց դիմանամ՝  
մական սիրտըս ունիմ քարած,

Արտսունքս արուն շինեցիր, խիլքըն  
գըլխես ունիմ տարած,

Նուր բադ իս, նուր բադչի մեչըն  
բոլորքըտ վարթով չափարած.

Վըրետ շուռ գամ բըլբուլի պես՝ սիրով  
սեյրան իս ինձ ամա:

Քու էշխըն ինձի մաստ արավ. յիս  
գարթուն իմ, սիրտս է քընած.

Աշխարս աշխարով կըշտացավ, իմ  
սիրտըս քիզնից սով մընաց.

Յա'ր, քիզ ինչո՞վ թարիփ անիմ՝  
աշխարումըս բան չը մնաց.

Կրակե, ծովեմեն դուս էկած, ուաշ ու  
ջեյրան իս ինձ ամա:

Ի՞նչ կուլի մեկ հիդըս խոսիս, թե վուր  
Սայաթ-Նովու յար իս.

Շուխկըտ աշխարըս բըռնիլ է՝ արեգագի  
դեմըն փար իս.

Հուտով հիլ, միխակ, դարիչին, վարթ,  
մանիշակ, սուսանբար իս,

Կարմրրագուն՝ դաշտի ծաղիկ, հովտաց  
շուշան իս ինձ ամա:

Էսպես Արուֆինի ասած, ով որ սովորի,  
թողութիւն շնորհի:

Էսպես դագալի, դաստա բեդաստա  
թարփանուրի ձենում, Արուֆինի ասած:  
Սրա հատը դիմացն է:

25

Աջաբ քանի ժամանակ է, թաք գիտենամ  
տարիտ, էրնէկ.

Վունց ուտիլ գուգե, վունց խմիլ՝ մողըտ  
նըստող յարիտ էրնէկ.

Բացվիլ իս կարմիր վարթի պես,  
փաթութ սուսանբարիտ էրնէկ.

Բըլբուլին լալով ման կոծիս գիշեր  
ցերէկ՝ խարիտ էրնէկ:

Հուտըտ աշխարըս բըռնիլ է, բերնումս  
ունիս զանջափիլըն.

Կանց քիզ լավ հուտ չի ունենա Հնդու  
էկաճ դարանփիլըն.

Գիշեր ցերեկ զուքսիտ մեչն իս, ձեռիտ  
ունիս [հուտով հիլըն].

Դիբչում է ալ պըռոշներուտ` ունքիտ-  
սամանդարիտ էրնեկ:

Շատըն հասրաթետ կու մեռնի,  
սըրտումըն կունենա զարուր.

Ով չէ տեսի` մե'կ ա~իս կոնե, ով կու  
տեսնե` հազար հարուր.

Քու զաթըն քու նըման կու լի, կըշտիտ  
ունիս օսկե բարուր.

Բալքա մեկ էլ դեդեն բերե` նըման  
բարեբարիտ էրնեկ:

Մե նաղշրտ Արաբ անցկացավ, մե  
նաղշրտ Հընդրստան գընաց,  
Մե նաղշրտ Ղըրիմ անցկացավ, մե  
նաղշրտ Դաղըստան գընաց,  
Մե նաղշրտ Ուրումեյ կացավ, մեկըն  
Փըռանգըստան գընաց.-  
Ով քու սուրաթըն տեսնում է, ասում է՝  
թահարիտ էրնեկ:

Արի նըստի, Սա'յաթ-Նովա, խոսկըտ  
ասա լամզ ու քասով.  
Սազին խիլքըտ չը տանուլ տաս էտ  
խիալով, էտ հավասով.  
Ձեռիտ բըռնածըն բըրով է, ածա, -  
խըմինք օսկե թասով.  
Շատ աջաիք մեհմանդար իս, սուփրի  
սազանդարիտ էրնեկ:

(1755)

Էսպէս Արութինի ասած, քրոնիկոնի 443-ին:

Ինչ կոնիս հեքիսն, ի՞նչ կոնիս ջարեն՝  
 Քու տրվածըն ուրիշ դիդ է, ո'ւրիշ դիդ:  
 Էրում է մրհլամն, չէ լավնում յարեն.  
 Քու տրվածըն ուրիշ դիդ է, ո'ւրիշ դիդ:

Ասաց թե. «Հիռացի՛ գըլխեմես, գընա՛.  
 «Քու ասածըն ուրիշ տիդ է, ո'ւրիշ տիդ.  
 «Էտ քու արարմունքսըն քիզի չի մնա,  
 «Քու ասածըն ուրիշ տիդ է, ո'ւրիշ տիդ.  
 ուրիշ տիդ, ամա~ն, ուրիշ տիդ»:

Ասի թե. «Էշխեմես չի՛մ հանքչում  
 տանրս,  
 «Ձիռնիրրս թըլացավ՝ չէ շինում քանրս,  
 «Էրվեցավ ջիգարրս, մաշվեցավ ջանրս՝  
 «Քու տրվածըն ուրիշ դիդ է, ո'ւրիշ դիդ»:

Ասաց. «Իմ դիղեմեն քիզ չը կա չարա,  
«Գընա՛, թե խիլք ունիս՝ գլխիտ ճար  
արա,  
«Թե չէ՛ անիլ կուտամ քիզ փարա  
փարա.

«Քու ասածըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ»:

Յիս բըլբուլ իմ, վարթըս մընաց  
խարումըն.

Կըրակ դըրիբ սըրտիս խուցի յարումըն.  
Վո՛ւնց գըրանքումըն կա, վո՛ւնց  
դավթարումըն

Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ:

Ասաց թե. «Քի գարար շինեցիր շահըտ.  
«Կըտրեցիր ադաբըտ, կըտրեցիր ահըտ.  
«Մի վիթի արունըտ, մի շանց տա  
մահըտ,

«Քո ասածըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ»:

Ասի թե. «Մազիրըտ սիրման իս անում,  
«Հենց գիդիս` չի'մ գիդի, յա'ր, չի'մ  
իմանում.

«Սերըտ ինձ մահ դառավ` էլ չի'մ  
դիմանում.

«Քու տըվածըն ուրիշ դիդ է, ո'ւրիշ դիդ»:

«Թաքավուրի թագի լայիդ քարըն իմ,  
«Շիրինի պես Փահրադի դիլդարըն իմ,  
«Յիս էն գըլխեն Սայաթ-Նովու յարըն իմ,  
«Քու ասածըն ուրիշ տիդ է, ո'ւրիշ տիդ»:

Հիդըս խոսի', մի' կենա խըռովի պես.  
Տալդա տըվիր` գեմիս տարար ծովի  
պես.

Կու միռնիմ, -չիս տեսնի Սայաթ-Նովի  
պես.

Քու տըվածն ուրիշ դիդ է, ո'ւրիշ, ո'ւրիշ



դիդ:

ամա ~ն, ուրիշ դիդ:

(1756 սեպտեմբերի 3)

Էսպէս Արութինն ու իր սիրեկանն, որ իրար  
ասել են, էն է:

Էսպէս որ ասում է Յուլարումզդան-Շիրուանի  
հանգում: Սեպտեմբերի 3-ին. քրոնիկոնի 444-ին:

27

Մեջլումի պես՝ կորավ յարըս,  
Լե'յլի ջան, ման իմ գալի յանա-յանա.  
Էրվեցավ խունի ջիգարըս,  
Արնի պես աչկս է լալի յանա-յանա,  
յանա-յանա:

Բլբուլի նման լացիլ իմ,  
Աչկիրըս արնով թացիլ իմ,  
Էշխեմետ հիվանդացիլ իմ,

Պատկած իմ դրժար հալի յանա-յանա,  
յանա-յանա:

Էշխեմես դառիլ իմ յիզիդ,  
Հալվեցա, մաշվեցա քիզիդ,  
Ռա'հմ արա, մե խոսի միզիդ`  
Բե'մուրվաթ, ձեն իմ տալի յանա-յանա,  
յանա-յանա:

Էրվում իմ, կանչում իմ ա~ման.  
Ծոցըտ բաղ, ունքիրըտ քաման.  
Աշխարիս մեչըն քիզ նըման  
Չիմ տեսած, ման իմ գալի յանա-յանա,  
յանա-յանա:

Մանուշակ բաց արած հովին,  
Կարմիր վարթ, ծաղիկ հուտովին,  
Շատ մի լացնի Սայաթ-Նովին,  
Ա'չկի լուս, կսկծալի` յանա-յանա, յանա-  
յանա:

(1757)

(Տե՛ս հաջորդ խաղի ծանոթ.):

28

Էշխեմենն էնպես վառվիլ իմ`  
Վունց Մեջլում` յա~ր իմ ասում  
էնտիղեմենն,  
Գոզալի տիսուն կարոտ իմ`  
Հիդ քաշվի սա'ր իմ ասում, էնտիղեմենն,  
էնտիղեմենն.-

Ղուրբան իմ ծոցիտ նըռանըն,  
Հոքիս տամ շիմշատ կըռանըն,  
Թաք պառկիմ յարի դըռանըն,-  
Էրվում իմ, ճա'ր իմ ասում, էնտիղեմենն,  
էնտիղեմենն:

Հաքիլ իս ատլաս իասեմենն,  
Խըմեցուր ձիռիտ թասեմենն,

Համաշա էշխիտ քասեմեն  
Էրվում իմ, ճա՛ր իմ ասում, էնտիդեմեն,  
էնտիդեմեն:

Բաղ կու սիրիմ - յիս քաղման չիմ՝  
Բաղի տիրուչըն ճանանչ իմ.  
Բըլբուլ իմ՝ սիրով վարթ կանչիմ,-  
Հիդ քաշվի, իա՛ր իմ ասում, էնտիդեմեն,  
էնտ[իդեմեն]:

Մեջլիսներու խաղըն դուն իս,  
Վանքերումըն տաղըն դուն իս,  
Սայաթ-Նովու քաղըն դուն իս,-  
Կարոտ իմ, քա՛ր իմ ասում, էնտիդեմեն,  
[էնտիդեմեն]:

(1757 ապրիլի 5)

Էս երկու խաղերն էն ձենով՝ բլբուլն նատաճ է  
վարթին, լավ կանչեր նա վարթի համա.

Արութինի ասած, ապրիլի 5-ին, քրոնիկոնի 445-ին:

29

Քանի վուր ջան իմ, յա՛ր, քի դուրբա՛ն իմ. աբա ի՞նչ անիմ՝

Արտասունք անիմ, շատ հոգուց հանիմ,- յա՛ր, դադետ տանիմ:

Ասիր. «ջեյրան իմ». թուղ քի սե՛յր անիմ. յա՛ր, մըտիկ անիմ:

Մո՛ւտ բաղչեն նազով, քիզ գովիմ սազով, յա՛ր, իլթիմազով:

Մազիրըտ դաստա, պըռոշըտ փըստա. հեյրանի վախտ է.

Եկ գընանք չոլըն, վուր հասնինք գոլըն. ջեյրանի վախտ է:

Բըլբուլըն վարթին, վարթըն բաղաթին. սեյրանի վախտ է.

Մո'ւտ բաղչեն նագով, քիզ գովիմ սագով,  
յա'ր, իլթիմագով:

Շուռ գանք համդամով. յիրգնային նամով  
թուփըն թացվիլ է.

Խաղ կանչինք հանգով, լալեքն ոանգով,  
վարթըն բացվիլ է.

Սուսան սըմբուլով, դարիբ բըլբուլով  
բաղըն լըցվիլ է.

Մո'ւտ բաղչեն նագով, քիզ գովիմ սագով,  
յա'ր, իլթիմագով:

Պատվական շինած, նըման նըմանած  
Լեյլու դիդարին.

Յա'ր, ուշկըս գընաց` մագիբըտ մընաց  
վրա մուհաջարին:

Բաղըն զարթարած, բըլբուլըն քընած  
վարթի սաջարին.-

Մո'ւտ բաղչեն նագով, քիզ գովիմ սագով,  
յա'ր, իլթիմագով:

Հաքիլ իս ասլաս, թուրլու զար ու իսսա՝  
սալբու դալ բովուն.

Ձեռիտ ունիս թաս, լըցնիս ինձի տաս,  
դուրբան իմ քովուն:

Թաք դու բաղչեն գաս՝ անիս մասնե մասս  
քու Սայաթ-Նովուն:

Մո'ւտ բաղչեն նագով, քիզ գովիմ սագով,  
յա'ր իլթիմագով:

(1757 մայիսի 2)

Էսպես Արութինի ասած Թասիրն չինի խաղի  
հանգում:

Մայիսի 2-ին, քրոնիկոնի 445-ին:

Վունցոր վուր դարիք բուլբուլըն մե  
տարով բաղին կարոտ է,  
Էնենց գու լա քու սիրողըն՝ ձեռիտ  
արաղին կարոտ է.

Դուն ուրիշի հիդ մի՛ խոսի, քու ճուրտըն  
աղին կարոտ է.

Հասիլ է ծոցիտ շամամըն՝ օսկե  
թաբաղին կարոտ է:

Մե գադ չըկա՝ գուման ածիմ, ասիմ, էն  
նըման է գունքըտ,  
Անդալամ անգարնիշ քաշած օսկու պես  
է փայլում ունքըտ.

Բոյեմետ չուրս մատն ավելի, լըցվիլ է  
դոշտ ու թիկունքըտ  
Զարով-աբրեշումով հուսած մազիբըտ՝  
շաղին կարոտ է:



Դուն խոս է՛ն գլխեն գոված իս, յիս քիզ  
նուրմեկ գովիմ, ա՛րի.

Ծոցըտ վարադնած հուջրա է, հոտ ունե  
մուշկ ու ամբարի.

Իրեք հարուր վացցուն ու վից ամեն  
անդամըտ դարարի.

Կուռըտ շիմշատ, մատնիրըտ մում՝  
բըրուլե ճադին կարոտ է:

Յիս էլ ուրիշ յար չի՛մ սիրի, աշխարումըս  
դո՛ւն իս իմըն.

Թե մե շափաթ քիզ չի՛մ տեսնի, կու  
կըտրիմ քամանչի սիմըն.

Թեգուզ թագավուրըն կանչե, թեգուզ  
Լոդմանի հեքիմըն՝

Վո՞ւր մե դարդս կու հասկանան՝  
դուգունըս դադին կարոտ է:

Գիշեր-ցերեկ ման իմ գալի էշխետ յանա-  
յանա, գո'գալ.

Անգաճ արա, մա'տաղ իմ քիզ, մե քիչ  
կա'մաց գընա, գո'գալ:

Աշխարըս ո՞ւմն է մընացի, վուր ինձ ու  
քիզ մընա, գո'գալ:

Մական մի՞ռավ Սայաթ-Նովեն`  
անգաճըս խաղին կարոտ է:

(1758)

Էսպես դիբա ու ենգիդունիայի հանգով, որ  
մուսադասի (?) կասեն. Արութինի ասած,  
քրոնիկոնի 446-ին:

31

Մե խոսկ ունիմ իլթիմագով, անգաճ  
արա, ո'վ աչկի լուս.

Մըրտումըս ինթիզար ունիմ, քու տիսըն  
բարով, ա'չկի լուս,

Աջաբ քիզ ի՞նչ գեթ իմ արի՛ կենում իս  
խըռով, ա՛չկի լուս.

Աշխարս աշխարով կըշտացավ, յիս  
քիզանից սով, ա՛չկի լուս:

Մակամ օչով յա՞ր չէ սիրի, էս ի՞նչ արի,  
էս ի՞նչ բան ա.

Էշխեմետ ջունուն իմ էլի, ման իմ գալի  
յանա-յանա.

Էս դարդեն օչով չը քաշե, վուր մե  
դանգին չի դիմանա.

Սիրտըս լուրի պես խորվեցիր էշխիտ  
կըրակով, ա՛չկի լուս:

Դոստիրըս դուշման շինեցիր, յադերուն  
ի՞նչպես դոստ անիմ.

Անցկացած օրըն չիմ տեսնում, քանի  
գուգե վուր դաստ անիմ.

Աստվաճ վրկա, իսիստ դըժար է,

գըլուխըս ի՞նչպէս դուս տանիմ՝  
Յիս մե փուքըր նավի նըման, քու էշխըն  
է՝ ծով, ա՛ջկի լուս:

Գուզիմ բերանըս բաց անիմ, գովքըս  
ասիմ թարիփի պէս.  
Տաս տարի է ման իմ գալիս փառիշահի  
շարիփի պէս.  
Օխտըն տարի էլ ման գու քամ սազըն  
ձիռիս Ղարիբի պէս՝  
Բութա Շահսանամըս դուն իս, էլ չունիմ  
օչով, ա՛ջկի լուս:

Թեգուզ հազար դարդ ունենամ, յիս  
սըրտումըս ա~հ չիմ ասի.  
Իմ հուքմի-հեքիմըն դուն իս, յիս էլ ուրիշ  
Շահ չիմ ասի.  
Սայաթ-Նովեն ասաց. գա՛լում, յիս էն  
մահին մահ չիմ ասի՝

Հենչաք ըլի՝ դուն վըրես լաս մազըս շաղ  
տալով, ա՛ջկի լուս:

(1758)

Էս էլ էն հանգով. Արութինի ասած, քրոնիկոնի  
446-ին:

32

Խըմեցուր ձեռիտ թասեմեն,  
Ջո՛ւր իմ ասում, [տուր քասեմեն].  
Մընացի սըկու մասեմեն  
Ա՛ջկի լուս, ջո՛ւր իմ ասի,  
[Հուր չիմ ասի, հուր] չիմ ասի,  
Թուր չիմ [ասի], տուր չիմ ասի:

Գո՛գալ, Աստվաձ քիզի լավ տա,  
Չուզողի աչկերուն ցավ տա.  
Անգալի խոսկին մի ավտա.-  
Ա՛ջկի լուս, [զ]ուր իմ ասի,

[Ս]ուր ջիւմ ասի, սուր ջիւմ ասի.  
Զու[ր] իմ ասի, սուր ջիւմ ասի:

Ով քիզի այան մըտիկ տա,  
Աբելին՝ Կայան մտիկ տա.  
Ինչ աչկ քիզ խայան մըտիկ տա,  
Ջանում յար, կո'ւր իմ ասի.  
Նուր ջիւմ ասի, նուր ջիւմ ասի,  
[Կուր իմ ասի, նուր ջիւմ ասի]:

Ովոր ինձ շինից դիվանա՝  
Մուրք Կարապիտեն խիվանա.  
Վադի էրեսըն սիվանա.-  
Ա'չկի լուս, մո'ւր իմ ասի.  
Չուր ջիւմ ասի, [չուր ջիւմ ասի,  
Մուր իմ ասի, չուր ջիւմ ասի]:

Էշխեմետ խըմած մաստ էկած,  
Գըլուխըս մահին ոաստ էկած  
Սայաթ-Նովեն իմ տիստ էկած.

Ա՛ջկի լուս, ո՞ւր իմ ասի,  
Սուր ջիմ ասի, սուր ջիմ ասի,  
Տուր ջիմ ասի, [սուր ջիմ ասի]:

(1758 մայիսի 10)

Էսպես թասլիբ Արուֆինի ասած մայիսի 10-ին,  
քրոնիկոնի 446-ին:

33

Էնդուր աչկրս չէ ցամաքում՝ սրբտիս  
մեչըն արին մընաց.

Վունչիչ դարով չը լավացավ՝ մըհլամըս  
հիդ յարին մընաց.

Էշխեմեն հիվանդ պառկեցա, աչկրս  
ճանապարին մընաց.

Յիփ միռա՝ իժում տիս Էկավ՝ նազըն  
բեիդրարին մընաց:

Գարունքվան վախտըն լըցվիլ է, - էրանի  
ձիգ, ծաղկած վարիր.

Թե բըլբուլին բա'ղն դըրգեցիք,  
մանիշակով լի'քըն սարիր,  
Բաս ինչի՞ ձենըն չէ գալիս, սա'լբու  
չինար, էտ ի՞նչ արիր,  
Վա'յ քու դարին, դա'րիք բըլբուլ, վուր  
լեշըտ չավարին մընաց:

Ալ պուճպուճեն, ասաց, խափե  
սարումըն դարիք բըլբուլին,  
Յիփ բըլբուլըն միտըն ածավ ոեհնով  
կապած թայիգուլին.  
Ով վաղ գընաց, վարթըն քաղից, չասին,  
թե պետկ է բըլբուլին,  
Վա'յ քու դարին, դա'րիք բըլբուլ, վուր  
լեշըտ չափարին մընաց:



Խոսկիրըտ քաղցրը քաղցրը է, լիզուտ  
շաքար ու նաբաթ է,  
Խմողին վրնաս չի անի՝ ձեռիտ  
բռնածըն շարբաթ է.  
Շափաթն օխտն օր ին ասի՝ քու  
հաքածըն նուր բաբաթ է.  
Հաքիլ իս բեհեզ ծիրանին՝ ծալած  
դալամքարին մընաց:

Աշուղի լիզուն բըլբուլ է, օրհնանք ունե,  
նալաթ չը կա.  
Շահի մոդ խոսկն անց կու կենա,  
սըպանելու ջալլաթ չը կա.  
Հեքիմ ու դատաստան չը կա, մե  
դըրուստ ադալաթ չը կա.  
Մե մարթ չը կեր՝ ազատիլ էր, Սայաթ-  
Նովեն դարին մընաց:

(1758 հունիս)

Էս էլ դիբա ու ենգիդունիայի ձենում Արութինի  
ասած է, յունիսի սկզբին, քրոնիկոնի 446-ին:

34

Անգին ակըն վըրետ շարած, անբան  
օսկու ռախտ իս, գո'գալ:

Աստվաձ քիզ ու նըրան պահե, ում հիդ  
վուր նըվախտ իս, գո'գալ.

Բըլբուլին լիզու շինեցիր՝ դուն վարթի  
դըրախտ իս, գո'գալ:

Վարթըն մի ամիս ումբր ունե՝ դուն  
ամենան վախտ իս, գո'գալ:

Մեմեկ մեմեկ էլ չի ասվի՝ թարիփըտ  
դառավ քուլիչով.

Պատիրըտ զարով զարբարով, դոշամետ՝  
խալով խալիչով,

Տախտակնիրըն՝ էրծաթեմեն, միխիրըն՝

օսկէ գուլիչով.

Խոսրով փաշայեմեն թողած, դուն,  
Թովուզի տախտ իս, գո'գալ:

Սկանդարի Ջուլդարի թողած ջավահիր  
իս, անգին լալ իս.

Դանգըն դանգի միչեն հանած,  
հիդքաշած մըսխալ մըսխալ իս.

Յիփ դուն սեյրանգահըն կ'եհաս, օչով  
այնումըտ չէ գալիս,

Փաք չունիս փաշահզադիմեն, անդամ,  
առանց սախտ իս, գո'գալ:

Թեգուզ մըտոք ճարտար ըլի, կանց

Սողոմոն դադա ըլի,

Թեգուզ մարքարիտով լիքըն, թեգուզ  
սադափ սադա ըլի,

Թեգուզ արեգագ, լուսնիակ, թեգուզ  
հուրիզադա ըլի,

Էդ քու ամեն մարիփաթով դիփունին կու  
ախտիս, գո՛գալ:

Յիրգնուց վըրեդ ձուն է էկի՝ փունջ  
մանիշակ նուր իս, ջանըմ.

Մոդըտ նըստողըն կու էրվի՝ էտ նազի  
տեր վուր իս, ջանըմ,

Դիռ Սայաթ-Նովեն չէ միռի՝ դուն ինչի՞  
տըխուր իս, ջանըմ.

Թաք յիս միռնիմ, դուն սաղ ըլիս,  
գերեզմանըս վաղ տիս, գոգա՛լ:

(1758)

Էս էլ դիբայի հանգում, Արութինի ասած:

Աստուած թողութին շնորհէ սիրեկանեն  
սպանած Արութին Սայաթ-Նովին, քրոնիկոնի  
446-ին:

Թամամ աշխարհ պըտուտ էկա, չը թողի  
Հաբաշ, նազանի.

Չը տեսա քու դիդարի պես՝ դուն  
դիփունեն քաշ, նազանի.

Թե իսամ հաքնիս, թե գար հաքնիս, կու  
շինիս դումաշ, նազանի.

Էնդու համա քու տեսնողըն ասում է  
վա~շ, վա~շ, նազանի:

Դուն պատվական ջավահիր իս, է'րնեկ  
քու առնողին ըլի.

Ով կու գըթնե, ախ չի քաշի, վա'յ քու  
կորցընողին ըլի.

Ափսուս վուր շուտով միռիլ է, լուսըն քու  
ծընողին ըլի.

Ապրիլ էր, մեկ էլ էր բերի քիզի պես  
նադաշ, նազանի:

Դուն էն գրլխեն ջուհարդար իս, վրբետ  
զարնըջան է քաշած.

Դաստամագիտ թիլի մեչըն մե շադա  
մարջան է քաշած.

Աչկիրըտ օսկե փիալա՝ չարխեմեն  
փրնջան է քաշած.

Թերթերուկըտ՝ նիտ ու նաշտար, սուր  
դալամթըրաշ, նազանի:

Էրեսըտ՝ փարսեվար ասիմ, նըման է  
շամս ու դամարին.

Բարակ միչկիտ թիրման շալըն նըման է  
օսկե քամարին.

Ղալամըն ձիռին չէ կանգնում, մաթ  
շինեցիր նաղըշքարին.

Յիփ նըստում իս՝ թուրթի դուշ իս, յիփ  
կանգնում իս՝ ոաշ, նազանի:

Յիս է՛ն Սայաթ Նովայ սին չիմ, վուր  
ավզի վըրա հիմնանամ.

Աջաբ, միզիդ ի՞նչ իս կամում` սրտետ մե  
խաբար իմանամ.

Դուն կըրակ, հաքաճըտ կըրակ, վո՞ւր մե  
կըրակին դիմանամ.

Հնդու դալամքարու վըրեն ծածկիլ իս  
մարմաշ, նազանի:

(1758)

Էս էլ դիբա ու ենզիդունիայի հանգում, որն որ  
մուսադասու պես կասեն. Արութինի (ասած),  
քրոնիկոնի 446-ին:

36

Էշխեմետ հիվանդացիլ իմ, դիդի համա  
իմ լալի.

Վախում իմ, թե դարդըն հալե, յիդի  
համա իմ լալի.

Շահի կարքած վեքիլի պես գիղի համա  
իմ լալի.

Տանեն դուս արածի նըման տիղի համա  
իմ լալի:

Մե տեղ հուքմի-հեքիմ չը կա՝ դուռըն  
էհամ, կանչիմ հարա.

Վի կենա Լողման հեքիմըն, բալքամ  
դարդիս անե չարա.

Տիս, թէ ի՞նչպես է շըփոթվի, դուն իմ  
խի՛լքին մըտիկ արա,

Ջուրն էկավ, գերանըս տարավ, ծիղի  
համա իմ լալի:

Սիրտըս էշխեմեն էրած է, դուգունըն  
դաղըն ի՞նչ կոնիմ.

Վունց դո՛քա ունե, վունց չափար, յիս  
էնպես բաղըն ի՞նչ կոնիմ.

Անղի լարըն կըտըրվիլ է, դարդակ



սադաղըն ի՞նչ կոնիմ.

Նիտըս քարումըն կոտրեցի, թիղի համա  
իմ լալի:

Ղալամըն գիրըս չէ գրում՝ մե չուրացած  
թանքի նըման.

Խոսկիրըս մեմեկ չի ասվի՝  
իմաստններու բանքի նըման.

Մեչըն չիմ կանացի մըտնի, ծովի  
ծածկած վանքի նըման.

Խոստովնահերըս հիռացավ, միղի համա  
իմ լալի:

Գիղումըն՝ մելիք-տանուտեր, քաղաք  
տիղըն՝ Սուլթան-Խան իս.

Բաղումըն՝ վարթ ու մանիշակ,  
սարումըն՝ սընբուլ սուսան իս.

Ղաբուլ ունե Սայաթ-Նովեն՝ թաք քու  
ձիռով դուն սըպանիս.

Միռնելուս համա չիմ հոքում, ցիդի  
համա իմ լալի:

(1758)

Էսպես Արութինի ասած, քրոնիկոնի 446-ին:

37

Արի համով դուլուդ արա, խալխի նոքար  
Սայաթ Նովայ .

Ամեն մարթ չի' կանա ճանգի շահով  
շրքար, Սայաթ Նովայ .

Ով քիզի լիդի պարքիվե, դուն տու  
շաքար, Սայաթ Նովայ .

Ղաստ արա` շուշետ չը կոտրին, չը  
խըփին քար, Սայաթ Նովայ :

Թեգուզ դրբրատանըն պահ տաս` ծեծով  
չի խըրատվի խիվըն.

Ինչրու անձնեն չը դուս էհա անախատիլի

Էն չար դիվըն.

Բեդասըն՝ ասըլ չ'ի դառնա, թուլով չ'ի  
սիպտակի սիվըն,

Ծուռըն փետըն չ'ի դըրըստի ոանդան,  
դո'ւրգար Սայաթ Նովայ :

Թեգուզ իմանաս, գիդենաս աստղերու  
համբարքըն սիրուն.

Անբարի գուրձըն կորած է՝ կարթա  
Հարանց վարքըն սիրուն.

Ավիտարանի խոսկիրըն մարքարիտ է,  
կարքըն՝ սիրուն.

Մի' ածի խուզի առչիվըն լալ ու գովհար,  
Սայաթ Նովայ :

Թե էս կենաց փառքըն չ'ուզիս՝ էն կենաց  
ալմասըն կու տան.

Թե հոքուտ խաթիր շալ հաքնիս՝ գար  
քաշած ատլասըն կու տան.

Թե վուր լալով զըխճում անիս՝  
անմահացրն մասըն կու տան.  
Խոստովանիս արած միխկըտ՝ չանիս  
ինքար, Սայաթ Նովայ :

Վուր տիղ հարսնիք, վուր տիղըն սուք,  
վուր տիղ սոյբաթ իսող է ըլում.

Վուր տիղ ժամ, վուր տիղ պատարաք,  
վուր տիղ սիրով տաղ է ըլում.

Թե վուր հոքուտ կամքն իս անում,  
մարմինտ բեդամաղ է ըլում՝

Վո՞ւր մե դարդին կու դիմանաս դուն  
ջըրատար Սայաթ Նովայ :

(1758)

Էսպես Արութինի ասած, քրոնիկոնի 446-ին:

Էջիւեմէտ անդանակ էլա, եկ մորթե՛  
ջալլաթըն դուն իս.

Մի՛ սըպանի հասրաթեմէտ՝ սըրտիս  
խըջալաթըն դուն իս.

Թաքավուրի քարիսանեմեն դուս էկած  
խալաթըն դուն իս.

Հինդ ու Հաբաշ, Արաբըստան, Խորասնու  
Քալաթըն դուն իս:

Բարկ էրեսըտ՝ կըրակ նընգած օսկու  
նըման ջիռանում է,

Էնդու համա քու տեսնողի խիլքըն գլխեն  
հիռանում է.

Ով չէ տեսի, տիստ է ուզում. ով տեսնում  
է՝ միռանում է.-

Օսկե վարադով վարադնած սուրաթ-  
մաքադաթըն դուն իս:

Շատրն քու էշխեն կու միռնի, չի  
դիմանա ինթիզարի.

Տարենըն մե գամ բաց կո'ւլիս մաթահ  
շահրադել բագարի.

Էրնեկ ըլի քու տիրուչըն՝ մըտիկ տալեն  
չի բեզարի,-

Ամառն ու ձըմիռըն ծաղկած գուլբաղ ու  
բաղաթըն դուն իս:

Մուզդ ունե է'ն նաղըշքարըն՝ վուր  
թահրըդ դալամով հանա,

Ճակտետ ունքըտ չի կարա գա, քանի  
գուզե վուր շատ ջանա,

Էնդու համա ծարավ մարթըն քու ջրեմեն  
չի կըշտանա,-

Շիրագու շուշումըն ածած՝ նաբաթե  
շարբաթըն դուն իս:

Էրնեկ մոտըտ նըստող յարին, վուր քիզի  
պես համդամ ունե.

Խայեն յարին չե ոաստ էկի, քիզանից  
խաթըրջամ ունե.

Սայաթ-Նովեն, վուր քիզ ունե,  
աշխարուըս ի՞նչ դամ ունե.

Խաթաբանդով չարա-չարդադ, քոշկ ու  
ամարաթըն դուն իս:

(1758 սեպտեմբերի 6)

Էս էլ դիբա ու ենգիդունիայի հանգում. Արութինի  
ասած, սեպտեմբերի 6-ին, քրոնիկոնի 446-ին:

39

Յա՛ր, քիզ իսկի գավալ չըլի՝ քու  
դուշմընին՝ շառ բացարած.

Հուտըտ աշխարըս բըռնիլ է՝ բալասանի  
ծառ բացարած.

Թըխտիրըտ օսկե վարադով Ասմավուր

իս` ճառ բացարած.

Տեսնողըն շարքըն չի գիդի, Լուսնաստըղ  
պայծառ բացարած:

Ամեն մարթ չի կարա մըտնի` էշխիտ  
ջուրըն հիդ է գա'լում.

Մըտնում է յարսուն կարմունջըն`  
չասիս, թե մե' գիդ է, գա'լում.

Ունքիրըտ սալիդ սադախ է.

թերթերուկըտ նիտ է, գա'լում.

Մըտնողըն էլ չի դուս էհա` դուռ, մահու  
պատճառ, բացարած:

Բարակ մեչկըտ` դարդուդամիշ. էրեսըտ  
թայգուլի նըման.

Օրըն յարսուն ռանգ կու փոխիս, վո'նց  
մեկըն չէ տուլի նըման.

Յիփ խաղում իս` վըռվըռում իս օցի  
բերնի հուլի նըման.



Մուրճն տիրն լուս իս տալի առանց  
կրրակ՝ վառ բացարած:

Բարովին բարով չիսի տա՝ թաքավուրի  
սալամի պես.

Ձեռնիրըտ՝ սպիտակ մաքաղաթ, լիզուտ  
օսկե դալամի պես.

Ջարուզարբաբե դրրոշա՝ ման իս գալի  
ալամի պես.

Տեսնողըն էնպես կիմանա՝ Շահ իս  
գալի, ջառ բացարած:

Յա'ր, քիզանից հիռանալրս միռնելուս  
վրրա դրժար ա.

Լիզուտ քաղցր, խոսկրտ քաղցր,  
ակրոքնիրըտ անգին քար ա.

Իրեք քսան ու տասըն խալըն էրեսիտ  
բոլորքըն շար ա,

Վունցոր Սայաթ-Նովու լիզուն  
յոթանասուն բառ բացարած:

(1758 հոկտ. 9)

Էս էլ **դիրքա ու ենգիդունիայի** հանգում. Արուֆինի  
ասած: Հոկտեմբերի 9-ին, քրոնիկոնի 446-ին:

40

Մողըտ նըստողըն կու հարփի՝ դուն  
բանգ ու բոզա իս, ա՛զիզ:

Դիվանա Փահլուլ կու շինիս տեսնողին՝  
ազա իս, ա՛զիզ.

Ինչ տեղ կու լիս շնուք կու տաս՝  
մեջլիսի մազա իս, ա՛զիզ.

Մազեն մե սահաթ լավ կու լի, դուն  
համան թազա իս, ա՛զիզ:

Մե խոսկըտ կանց շաքար քաղցըր, մե  
խոսկըտ վառ՝ քուրա-քուրա.

Մե նըմանըտ ոաշի նըման, մե նըմանըտ  
ջուրա-ջուրա.

Մարքարիտով լիքըն կալ իս,  
սադափնիրըտ թուրա-թուրա.

Էրծաթե կոխպեքով կոխպած, դուն, օսկե  
ռագա իս, ա՛ղիգ:

Էրեսըտ առվուտվան արիվ՝ քանի կեհա  
կու զարգանա.

Թաքավուրի քարխանի զար՝ ծառըն  
ծառեն չի թարգանա.

Թե սուչ ունենամ սըպանե, թէ չէ նահախ  
մի բարգանա.

Մե ձեռըտ ջուր, մե ձեռըտ արուն՝  
ջալլաթի ջագա իս, ա՛ղիգ:

Տեսնողըն նախշըտ կու տընդդե  
փարշեւանգի բըմբուլի պես.

Չընի տակեն նուր դուս էկած, արիվ

դիբաճ սընբուլի պես.

Թուղ վըրետ լալով պըտուտ գամ, վարթի  
կարոտ բըլբուլի պես.

Դուն ինձ շուտով մի թըռցընի՝  
շավարդան-բագա իս, ա՛զիզ:

Էշխեմետ հիվանդացիլ իմ. վունց  
գարար, վունց շահ ին ասում.

Հեքիմնիրըս ափսոսում ին՝ ծընգան  
տալով վա~յ ին ասում.

Կանչողըս դարդակ է գընում. «ա~խ,  
Սա՛յաթ-Նովա» ին ասում.

Թաք դուն տիս գաս, վիր կու կենամ, -  
թե սազիս սազա իս, ա՛զիզ:

(1758)

Էսպես Արութինի ասած, քրոնիկոնի 446-ին:

Չի'ս ասում, թե լա'ց իս էլի.  
Բարով տեսա, իմ սիրեկան.  
Վարթի նըման քաց իս էլի  
Խարերով,  
Խարերով.  
Բարով տեսա, իմ սիրեկան:

Արի', մե դարդըս իմացի,  
Էշխեմետ համա~ն իմ լացի.  
Օրըս էսպես անց է կացի  
Դարերով,  
Դարերով.  
Բարով տեսա, իմ սիրեկան:

Յիփ կու հաքնիս ալ ու ատլաս,  
Տեսնողին կու շինիս մաս մաս.  
Դոշիտ պիտի լալ ու ալմաս  
Շարերով,

Շարերով.

Բարով տեսա, իմ սիրեկան:

Յիս քիզ գովիմ խաղի մեչըն,

Շամամնիրըտ թաղի մեչըն.

Ման իս գալի բաղի մեչըն

Յարերով,

Յարերով.

Բարով տեսա, իմ սիրեկան:

Սայաթ-Նովեն վո՞ւնց դընջանա՛

Աչկիրըտ օսկե փընջան ա.

Դուշմանի լիզուն մընջանա

Չարերով,

Չարերով.

Բարով տեսա, իմ սիրեկան:

Էսպես թասլիբ:

Թեգուզ քու քաշըն մարքրիտ տան բրոյի-  
բրոյի,

Թեգուզ քու քաշըն ալմագ տան բրոյի-  
բրոյի,

Յա'ր, չիմի տա, չիմ հիռացնի քեզ քու  
յարեմեն, բարեբարեմեն:

Չիմ քաշվի էկած մահեմեն,

Բաղիփի տըված ահեմեն բրոյի-բրոյի.

Թեգուզ ըաղամ գա Շահեմեն,

Յա'ր, չիմի տա, չիմ հիռացնի քիզ քու  
յարեմեն, բարեբարեմեն:

Թեգուզ քու քաշըն ալմագ տան բրոյի-  
բրոյի,

Թեգուզ քու քաշըն մարքրիտ տան բրոյի-  
բրոյի,

Յա'ր, չիմի տա, չիմ հիռացնի քիզ քու  
յարեմեն, բարեբարեմեն:

«Գուլ իս անգին»-ից. նույն հանգով:

43

Աջաբ քու սիրտըն ո՞վ շինից՝ խոնարից,  
հիզնից բեղամաղ.

Քանի գուզե մարթ վուր հարփի, վո՞ւնց  
կուլի վազնից բեղամաղ.

Յա՛ր, յիս քիզ ի՞նչ գեթ իմ արի՛՝ նըստած  
իս միզնից բեղամաղ.

Քամեցիր էշխիտ մանգանով,-յի՛ս պիտիմ  
քիզնից բեղամաղ:

Ինչ քիզանից հիռացիլ իմ, իմ ջանոււմըս  
ջան չէ մըտի.

Ուշկ ու միտկըս դուն իս տարի, ձիռիս  
մեչըն բան չէ մըտի.

Հենց գիդիմ, թե չուրս տարի է Քաղաքըն  
քարվան չէ մըտի՛



Ռախտարի նրման նըստած իմ՝ իջարից,  
միզնից բեղամաղ:

Հալբաթ սերըն կես է էլի, վուր միզի  
ատիլ է ուզում.

Չուրս տարեկան էրեխի պես՝ յարըս  
խըրատիլ է ուզում.

Բըռնիլ է էշիսի դանակըն, սիրտըս  
կըտրատիլ է ուզում.

Շատ մարթ կա նըստած լաց լելիս,  
գոզալի նազնից բեղամաղ:

Թեզուզ իմացի', կարթացի

իմաստնասիրաց առակըն՝

Էշխեմետ ջունուն իմ էլի, վեր էկավ  
սըրտիս վարակըն.

Աստվաձ վրկա, մարթ չը քաշե՝ դըժվար  
է էշիսի կըրակըն.

Տեսա արունուտ ջեյրանըն՝ վուրսնուրթի  
նիզնից բեդամադ:

Անց կացավ աշու[նքվա վախտըն,  
սարվիքըն?] խաղալ է ուզում.

Հասավ գարունքվան հուսունըն՝  
բըլ[բուլըն էլ գալ է ուզում].

Սայաթ-Նովեն առանց նընգիր ճիտըն  
գ[ըցած լալ է ուզում].

Ջար կորցըրած խոնթկարի պես  
նըստա[ծ է խազնից բեդամադ]:

(1759)

[Արութին]ի ասած. քրոնիկոնի 447-ին:

44

Բեդասլին վուր խոսեցընիս, լալ անիլըն  
ինչի՞ն է շահ.

Ռանգըն վուր սեվադեն նընգնի՞ ալ

անիլըն ինչի՞ն է շահ.

Մարթ վուր քու խոսկով մեռանի՝ գալ  
անիլըն ինչի՞ն է շահ.

Պատանքին մի՛ ռանգն է հերիք՝ չալ  
անիլըն ինչի՞ն է շահ:

Մարթ պիտի թանգ հախ տա, առնե  
խոսկիրըն փիր ուստադեմեն.

Ռանգըն ռանգերուն ծածկում է,  
հուջրեքըն լիքն է սադեմեն.

Թեգուզ գար գարբար հաքցընիս, վուր  
չըլի ասըլջադեմեն...

Միվ արարի ճակտի վըրա խալ անիլըն  
ինչի՞ն է շահ:

Լավ մարթն էն է՝ սիրով անե բարի  
հրեշտակներու կամքըն.

Իմաստուննի՛րը չը տեսան էս աշխարիս  
հուտն ու համքըն...

Չուրս գլխանի ոռշի վրբեն աջալըն  
դըրիլ է թամքըն`

Աշխարըս միգ մնալու չէ` մալ անիլըն  
ինչի<sup>օ</sup>ն է շահ:

Մեր ու մանուկ բաժանվեցան, մանուկն  
էնդուր ունի լալու.

Սատանեն մե դամբ է դըրի Աթամի  
գաթըն վուրսալու.

Շատըն սատանեն է տանում, վիրչըն  
մընում է վա~յ տալու.-

Վուր չէ Ուռնիյելի նըման` կալ անիլըն  
ինչի<sup>օ</sup>ն է շահ:

Շուռ էրիտ չարխի-փալագըն, դովլաթըն  
միգնից խըռով ա.

Ում հաքին հին շալ ին տեսնում, էլ չին  
ասում, թե էս ո՞վ ա.

Յարովըտ մեկ մըհլամ չունիս, էնդուր

գուլաս, Սա'յաթ-Նովա.-

Ջարեքըն դիդըտ չին գիդի՝ փալ անիլըն  
ինչի՞ն է շահ:

(1759)

Քրոնիկոնի 447-ին:

45

Կիսամուրագ մի սըպանի, չունքի արիբ  
սեր, նազանի.

Թե քիզ ավել յադ յար սիրիմ, ումբրես  
չանիմ իեր, նազանի:

Աշխարումըս [դուն իմ] ջան իս,

Դուն իմ շահ իս, սուլթան, իսան իս.

Ի՞նչ կուլի միզ մըտիկ անիս

Հազարեն մե ջեր, նազանի:

Ղարիբ դավրիշ իմ, հաջ չունիմ.  
Գըլխիս էրծաթե թաջ չունիմ.  
Յիս քիզ ավել իլաջ չունիմ.  
Դու դառի ինձ տեր, նազանի:

Կըրակ տըվիր, կրակեն ավել.  
Չախամախ էլ ունիս դու, դավ էլ.  
Աշխարումըս քիզնից ավել  
Ո՞վ ասավ, թե կեր, նազանի:

Սայաթ-Նովեն իմ, ճար չունիմ,  
Յիս վարթըն իմ, մին խար չունիմ,  
Թե դուն ասիր յադ յար չունիմ,  
Իդրարըտ էտ էր, նազանի:

Էսպես լավ գարեհլիի ձայնով է (երգչի որդի  
Օհանի ծան.):

Հընդկաց քաղաքիցն հանաձ, ջավահիր  
քար արմանալու,  
Ինչի դիբչիս նաղըշ կոնիս, օսկե փարգալ  
արմանալու.

Ամեն մարթ չի կանա ճարի շահով  
շըքար արմանալու.

Մարթ հիդըտ չի կանա խոսի, Բոստումի  
Զալ արմանալու:

Շիմշատի ծառ բըհամ էկաձ, շենքըտ  
տաշիլըն ի~նչ կոնե.

Երանի է քու տիրուչըն - յադին յաշիլըն  
ի~նչ կոնե.

Էրեսըտ խասա մուրասա - դալամ  
քաշիլըն ի~նչ կոնե.

Կարմիր ու կանաչ ու ճերմակ, սարիսար  
ալ արմանալու:

Դու հիշտ դիմիշ անելու չիս, ճրրաք  
վառած, դրժվար ճարած.

Ովոր էրեսըտ կու տեսնե, խիլքըն կու  
դառնա շրվարած.

Անգին յադութ, անգին ալմաս, բոլորքըտ  
ջավահիր շարած,

Սկանդարի Զուլդարեն թողած, ջընաղ  
հեքալ արմանալու:

Համաշա սեյրան իս անում, վարթ ու  
մանուշակ քաղում իս,

Շուշա-բըրոլե գուլաբդան բերնետ  
վարթաջուր մաղում իս.

Թաքավուրի թաջի ջիղա, օսկե թիլըտ  
շաղմաղում իս.

Վուրսնուրթի ձեռիցըն փախած ջեյրան,  
մարալ արմանալու:



Յա՛ր, քիզանից հիռանալըս միռնելուս  
վըրա դըժվար ա.

Էշխիցըտ Մեջուս իմ դառի - ի՞նչպես  
անիմ ինձի չարա.

Ավելի չէ Սայաթ-Նովեն - քիզի ծառա ու  
նոքար ա.

Նըրանից ձիոքըտ քաշիլըն՝ շատ ա էտ  
ալ արմանալու:

47

Աչկ ու ունքըտ վեր իս թողի, հուքմըտ մե  
ռուս ցարի բաբաթ.

Աջաբ, քիզ ի՞նչ գեթ իմ արի - խոսում իս  
դուն չարի բաբաթ.

Ով քիզի խային մըտիկ տա, սիրտն  
դառնա քարի բաբաթ.

Թեգուզ պահե, թեգուզ սպանե դըռանըտ  
նոքարի բաբաթ:

Դըռանըտ նոքար չիս պահի, թաքավուր  
իս` դուլ սըպանող.

Խոսկըս առակով իմացի, Լուսնաստղ,  
փուզուլ սըպանող.

Բացվիլ իս բաղի միչոււմն, կարմիր  
վարթ, բըլբուլ սըպանող.

Կտրիլ տու քանի կտրում է - քու թուրըն  
սարդարի բաբաթ:

Յա'ր, ինձ մե ճանփա կանգնեցու -  
կենամ խաթըրջամի նման.

Գիշեր ու ցերեկ լալիս իմ, աչկիրըս է  
նամի նման.

Թող դըռանըտ նընգած ըլիմ օտար  
բարեկամի նման.

Անգալին Աստված սըպանե, Փահրադ-  
Շիրին` դարի բաբաթ:

Գարնան շնչի ծաղկի նրբան կարմիր  
վարթըն բաց է ըլում.

Ի~նչ օգուտ է քու բաղմնչուն, վուր  
բըլբուլըն լաց է ըլում.

Պըռոշեմետ միդր է կաթում, թողնիս,  
յախետ թաց է ըլում.

Էնդուր համա քախցր իս խոսում -  
լիզուտ է շաքարի բաբաթ:

Մարթ իր խոսկով կու ճանանչվի, գուզե  
Շահի վեզիր շինին.

Բեդասըլն ասըլ չի դառնա, թեզուզ  
վեքիլ, նազիր շինին.

Թե կամենաս, ամենան տիդ քու  
ասածըտ հազիր շինին,

Սայաթ Նովայ , խոսկըտ ասա - բելլու  
քամանդարի բաբաթ:

Փահրադըն միռած, Շիրինն ասաց՝  
դարեն էրված իմ.

Քաշվիլ է վարթըն, մոդ չի թողնում,  
խարեն էրված իմ.

Բըլբուլըն ասաց՝ «վարթիս խաթրի  
քարեն էրված իմ».

Տասնումեկ ամիս մունջ իմ կացի՝  
տարեն էրված իմ.

Աստված կու սիրիս, զար մի հաքնի,  
զարեն էրված իմ,

Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն  
էրված իմ:

Չըկա փաչահի խազիւնումըն մալ քիզի  
լայիդ.

Հալա չին գործի Քիրմանումըն շալ քիզի  
լայիդ.

Օսկե մատնումըտ [դուն] դըրիլ իս լալ  
քիզի լայիդ.

Հաքիլ իս աստլաս, ոանգրն գուլգազ - ալ  
քիզի լայիդ.

Աստված կու սիրիս, զար մի հաքնի,  
զարեն էրված իմ,

Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն  
էրված իմ:

Խոսկիրըտ քախցըր, լիզուտ շաքար -  
շարթի միչումըն.

Գարունքվան ծաղիկ, բաց իս էլի մարտի  
միչումըն.

Մազիրըտ ոեհան, փաթըթված է վարթի  
միչումըն`

Կանաչ տերեվեն նամ չի կաթի զարթի  
միչումըն.

Աստված կու սիրիս, զար մի հաքնի,  
զարեն էրված իմ,

Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն  
էրված իմ:

Մայաթ-Նովեն իմ, էնդուր գու լամ,  
դարդիրըս արբա'բ.

Մազիրըտ ռեհան, կըլապիտոն,  
հուսիրըտ շարբաբ.

Բարակ դամաթիտ խիստ սազ գու քա  
դիբա ու շարբաբ.

.....

Աստված կու սիրիս, գար մի հաքնի,  
գարեն էրված իմ,

Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն  
էրված իմ:

Էս մուստագաթի (ավելի ճիշտ` մուսադդասի)  
հանգով, է. շատ լավն է. Մայաթ Նովայ յի ասած  
(Օհանի ծանոթ.):

49

Մըտա էշխի քուրեն խալիս դառնալու,  
Սիրտըս էլավ քե ու այիբ, էրկու բեն

(քաբար)

Կա'մավ սովդեն մըտա դարդըն

բառնալու,

[Էլ] ո՞ւմ բըռնիմ սե ու այիբ էրկու բեն:

(սաբար)

Դադա պիտի խոսկըն դադիմի շինե.

Շարբաբի միչոււմըն խամ թիլ չը հինե.

Ջորու նըման չասե, իմ դեդեն ձին է,

Մարթ վուր ըլի նու ու այիբ էրկու բեն:

(նաբար)

Ինչպես վուր կըրակին չի դիմանա մում,

Էնպես սախաթ կուլի, ովոր խոսի հում.

Սայաթ-Նովեն ասաց՝ Էնդուր չէ

պակսում

Էրկու աչկես էրկու այիբ էրկու բեն:

(աբ աբ)

Էս հայերեն գարահեջա է (Օհանի ծանոթ.):

ԱՅԲ Աստված սիրիս, ԲԵՆ բարի կացի.  
ԳԻՄ գագաթըտ արա ԴԱ ու այիբ թո.

(դաթ)

ԵՉ երանի չը կա ՉԱ գալում մարթուն`  
Է ԸՏ երեսիտ դի ԹՈ ու այիբ թո: (թաթ)

ԺԵ ժամանակ հասավ աչկերիս լալու.  
ԻՆ ինձի գրցեցիր դարդըս վուխպալու.  
ԼՅՈՒՆ լալով իմ յիս աշխարիս մընալու.  
Էնդուր վախ քաշեցի ԽԵ ու այիբ թո:

(խաթ)

ԾԱ ծովումըն մընաց դուս չեկավ նավըտ.  
ԿԵՆ կամով ավելցրար սըրտի ցավըտ.  
ՀՈ համան կանչում իս ՉԱ ձայնով  
դավըտ.

ՂԱԹ դարբուլ կաց` ճարիս ՃԵ ու այիբ  
թո: (ճաթ)



.....

.....

ԲԵ-րըն ՅՈ ցամքիլ է, ՀՅՈԻՆ հունար  
ունի,

ՓՅՈԻԲ փակեցին դուռըն, ՔԵՆԸ քար  
ունի

ԵՎ Օ ՖԵՆ կարթալու Ա'ստված ճար  
ունի,

Հալալ Սայաթ-Նովուն` կեն ու այիբ թո:  
(կաթ)

Էս այբբենական դարահեջա է. (Օհանի ծանոթ.):

51

Աբբբիմըն կարթացիլ իմ դասեդաս,  
(դասե դաս)

Հասա ոա է, հասա ջե հասասե. (հասա  
սե)

Անգրրծակի մե ձեն էկավ դասեդաս,  
Անգաճ կալա, չիմացա ինչ հասասե:  
(հա ~ սաս է)

Հագար տարին մարթու աչկին  
թաքավուր. (թաք ավուր)  
Քանի տընանգ, քանի հարուստ,  
թաքավուր (թա գա վուր)  
Չի հարցնի ախկատ, հարուստ,  
թաքավուր`  
Մահը վուր կա, առանց կաշառք  
հասասե: (հասաս է)

Դառնացավ, թըթվեցավ կինքրս  
ծովացավ. (գովացավ)  
Ախ քաշելեն սիրտըս ընգավ ծովացավ.  
(ծովա ցավ)  
Կաթելով, կաթելով դարդըս ծովացավ,

Մե մարթ չկա, վուր ինձ խըրատ  
հասասէ: (աս ասէ)

Հազար տարին մարթու աչկին  
քարասուն. (քարա սյուն)

Ո՞վ է մնացի աշխարումըս քարասուն.  
(քար ասուն)

Սա'յաթ-Նովա, տարիտ էլավ քարասուն,  
(քառասուն)

Դուն մահի հիդ, մահը քիզ հիդ հասասէ:  
(հաս-հաս է)

Էս հայերեն թեջնիս է (Օհանի ծանոթ.):

52

Խաբար գընաց բըլբուլի մող. «Վարթըն  
քու գալուն մընում է,  
Ճուխկընիբըն բացրացիլ է, վըրեն շուռ  
գալուն մընում է.

Առավուտուց զանգակի պես քաղցրը ձեն  
տալուն մընում է»:

Բըլբուլն ասաց. «Չիմ կանա գա,  
պուճպուճես լալուն մընում է»:

Վարթըն ասաց. «Իմ բըլբուլին ալ  
պուճպուճեն վո՞ւնց կու խափե.

Թե խելք ունիս, դարիբ բըլբուլ, է՛լ քու  
բաղի ճամփեն չափե»:

Քանի գուզե քընած տիղըն իր թշնամին  
կուռըն կապե,

Էլի վիրչումըն մեյդանըն Բոստոմի  
Ջալուն մընում է:

Վարթըն ասաց. «Խա՛յին բըլբուլ, նալաթ  
էտ քու էյթիբարին,

Անցկացավ ապրիլ մայիսըն, մեկ օր չը  
հարցըրիբ յարին»:

Չէթուդ թե մուրազին հասնին, տե՛ս ի՞նչ

արավ քավթար դարին,  
Փահրադին քըլունգ սըպանից, Շիրին՝  
խանջալուն մընում է:

Աշխարումըն վարթն է էլի բըլբուլների  
սիրեկանըն.

Բըլբուլի լիզվով իմ ասում, Տե'ր, պահե  
վարթի նըմանըն.

Աշխարումըս քանի սաղ իս, Սայաթ-  
Նովի գերեզմանըն

Շահ-Աբասի Լալի նըման, շահի՝ վրեն  
գալուն մընում է:

53

Աշխարըս մեկ փանջարա է, -  
թաղերումեն բեզարիլ իմ.

Մըտիկ տըվողըն կու խուցվի, -  
դաղերումեն բեզարիլ իմ.

Էրեգ լավ էր կանց վուր էսօր, -

վաղերումեն բեզարիլ իմ.  
Մարթ համաշա մեկ չի՛ ըլի, -  
խաղերումեն բեզարիլ իմ:

Դովլաթըն էթիբար չունե, յիփոր կերթա  
ուրուշ-քարով.

Լավ մարթն էն է՝ գլուխըն պահե  
աշխարումըս էթիբարով.

Աշխարըս մեզ մընալու չէ՝  
իմաստնասիրաց խաբարով. -  
Գուզիմ թըռչի բըլբուլի պես, -  
բաղերումեն բեզարիլ իմ:

Ո՞վ կոսե թե յիս կու ապրիմ առուտեմեն  
ինչրու մուտըն՝

Աստըծու ձիռումըն հիշտ է մարթու  
աշխարք ելումուտըն.

Ղուրթս էնդուր ճանփա չե գնում՝  
շատացիլ է խալխի սուտըն.

Քրսանըն՝ մե դուլ չին պահում, -  
աղերումեն բեզարիլ իմ:

Աշխարըս միզ մընալու չէ, քանի  
նըստինք զող ու սափին.

Հում կաթնակիր-Աթա'մի գաթ, նա'լաթ  
ըլի էտ քու բափին.

Համփիրութինըս հատիլ է, չիմ դիմանում  
խալխի գափին.

Դոստիրըս դուշման ին դառի -  
յաղերումեն բեզարիլ իմ:

Սայաթ-Նովեն ասաց՝ դարդըս կանց մե  
ճարըն շատացիլ է.

Չունիմ վաղվան քաղցըր փառքս, հիմի  
դարըն շատացիլ է.

Բըլբուլի պես էնդուր գու լամ՝ վարթիս  
խարըն շատացիլ է.

Չի'ն թողնում վախտին բացվելու, -  
քաղերումեն բեզարիլ իմ:

(1759 ապրիլ)

էսպէս Արութինի ասած, ապրիլի սկզբին,  
քրոնիկոնի 447-ին:

54

Թաքավուր իս, դիվանս արա, շա'ր, քու  
ա'րիվըն կու սիրիս,

Միդ ունենամ, գլխոքըս տուր քա'ր, քու  
ա'րիվըն կու սիրիս.

Սրտումըս կա ինթիզար-իդրա'ր, քու  
ա'րիվըն կու սիրիս,

Ուրոք գընաս, ինձ էլ հիդըտ տա'ր, քու  
ա'րիվըն կու սիրիս:

Վարթըն էյվընումըն կուլի, նամ-նամ  
արխին սազ ըլիլով,



Կանանչ փոթուրն բաց կուլի, կարմիր ու  
գուլգազ ըլիլով,  
Չուրս բոլորքըն ծաղիկնիր ին, ճամփին  
փիանդազ ըլիլով,  
Վարթըն ակորվին մի շանց տա, ծա'ռ,  
քու ա'րիվըն կու սիրիս:

Ակռավը բլբուլ չի դառնա, քանի գուգե,  
վուր ա~խ անե.

Ամեն ըռանգ ծաղկի մեչըն` կարմիր  
վարթըն սիրեկան է.

Գուղ մարթըն մանգաղով գու քա, ձիք  
կու տա, տակոեն կու հանե,

Մի' թողնի ճուխկըտ քաղելու, խա'ր, քու  
ա'րիվըն կու սիրիս:

Բլբուլըն սարեմեն գու քա, իր լիզվովըն  
բաղ կանչելով.

[Մեջլումըն չոլիրում մնաց, Լեյլու համա

ախ կանչելով].

Սայաթ-Նովեն վուր բեգրիլ է, շատին

էրից խաղ կանչելով,

Ո~վ ջավահիր, անգին ալմաս, յա'ր, քու  
ա'րիվըն կու սիրիս:

55

Քի սազ գու քա ալ դումաշըն, նազանի.

Եկ ճակատիտ կապե գարլու մուղայիշ,

Ձիոիտ բոնե օսկեջրած մըկրատըն,

Խուճուճ-խուճուճ ծամերուտ տուր

արայիշ:

Պատվական տեսնելու նովաբ ու նաջար,

Բլբուլին սըպանող թոփ վարթի սաջար.

Ունքիրըտ աչկիրուտ էլավ մուհաջար,

Թերթերուկիտ մազըն գար` օսկով

գարնիշ:

Հուտըտ աշխար բըռնից, փըռանգի  
մաջում.

Դաստա-դաստա մազըտ` սիմ ու  
աբրեշում.

Կոնիրըտ շիմշատ է, մատնիրըտ է մում,  
Բոյըտ սարվի ունիս, մեչկըտ է դամիշ:

Բեմուրվաթ յար, խիլքըս գլխես մի  
տանի.

Դարդիրըս շատացավ քանի մե քանի.  
Գիդիմ վուր, յար, դուն ինձ լայիդ չիս  
անի`

Դուն մե թաքավուր իս, յիս մե խիդճ  
դավրիշ:

Դաստամազըտ նըման սմբուլ-սուսանի.  
Վախում իմ, թե սերըտ սիրտըս կես  
անի.

Կու միռնիմ, էլ ինձ պեսին չիս տեսանի,  
Քու Սայաթ-Նովեն իմ, մի' անի ղիմիջ:

[1752-53]

56

Հուր իս էշխով կըրակած,  
Խոսկ իմ ասում առակաց,  
Իմ սիրամա-էրծաթ ախպեր՝  
Օսկեջըրով վարակած:

Համբուրիմ՝ սիրով համբուր,  
Վունցոր խեչին է դաստուր.  
Ով քիզ խայան մըտիկ տա,  
Դառնա էրկու աչկով կուր:

Վուր յիս ասիմ՝ իմացի,  
Էշխի մեչըն հիմացի.

Ինձ հուրյան-բիրյան արիր,  
Ասում իս, թե դիմացի:

Հուր իս, սիրով սիրական,  
Քիզի դուլուղ պատվական,  
Հազար թուրլու կերակուր,  
Սուրփ գինի անապական:

Պըխտուր սիրտըտ պարզ արա,  
Բլբուլի պես փարզ արա,  
Աստրձուն փառք Քաղկունն իս՝  
Դարդըտ Խանին արզ արա:

Արզ իս անում հազարին,  
Հա~ զարբաբին, հա~ զարին.  
Սիրտըս յարալու արիր՝  
Աչկըս գուլա հա~ զարին:

Հազարին հազար պիտի,  
Էրաժ սրտին ճար պիտի,

Յիս մե էշխի ջունուն իմ՝  
Ինձ մե դողրու յար պիտի:

Յարի լիզուն բլբուլ է,  
Դաստամազըն սըմբուլ է.  
Սայաթ-Նովեն լալիս է,  
Մա<sup>2</sup>կար դարիբ բլբուլ է:

Բայաթի

57

Ինձ ու իմ սիրեկան յարին մե տարի  
բերած գիտենաք.  
Ախ քաշելեն սըրտիս մեչըն արունն  
մերած գիտենաք.  
Գիշեր ցերեկ յարի խաթրու ջիգարըս  
էրած գիտենաք.  
Աչկըս թաց, բերանըս ցամաք, լիզուս  
հիդքերած գիտենաք:

Միրտըս փուրուսըս թուլացավ  
անգալներու գախ անելեն,  
Ուշկ ու միտկըս խառնըվեցավ խուռըն-  
խուռըն խաղ հանելեն,  
Աչկեմես ջուհարըն գընաց յարեն կարոտ  
ա'խ անելեն.

Էլ ապրելու ումիկ չունիմ, իմ օրըս  
կերած գիտենաք:

Էրած խորված ման իմ գալի, մե տիղ չը  
կա մար ունենամ.

Լիզվով չիմ կանացի ասի, թեգուզ  
խոսկըս փար ունենամ.

Ափսուսալու հազար ափսուս, յիս էս  
դադա դար ունենամ.

Էշխեն ուշկ ու միտկըս կապած, ինձ  
ջըրի տարած գիտենաք:

Միրտըս փուրումըս սըքուր է, ալ  
աչկիրըս լաց է անում.

Ծովըն ընգած ամբի նըման դոշս ու  
յախես թաց է անում.

Քանի վուր մըհլամ իմ դընում, դուգունս  
էլ խիստ քաց է անում.

Հալվեցա, արնաքամ էլա՝ յարես յիդ  
արած գիտենաք:

Ով տեսնում է, էս է ասում. «Վա~յ քու  
դարին, Սա'յաթ-Նովա,

«Համաշա քիզ պիտինք տեսնի աչկըտ  
արին, Սա'յաթ-Նովա,

«Ինչո՞վ չելավ, չըռաստ էկար մե լավ  
յարին, Սա'յաթ-Նովա».

Ումբըրըս էրազի պես գընաց՝ ծառըս  
չըխերած գիտենաք:



(1759)

Էս էլ դիրքա ու ենգիդունիայի ձենով, հանգն  
դազալի. Արութինի ասած, քրոնիկոնի 447-ին:

58

Գելն ու չոբանը մեկ մեկու ոաստ էկան.  
Գելն ասավ՝ «բարով տեհա, չոբան  
ախպեր»:

Չոբանն ասավ՝ «յիս քու բարովն ինչ  
կոնիմ,

Վունց քու խերը գուզիմ, վունց քու շառն,  
անդեր»:

Գելըն ասավ. «մուլափ կուտամ, վուր  
մթնի,

Ուսուլով ման գու քամ, բինետ կու  
գթնիմ.

Քու շըներու հաչոցեմեն չիմ խրթնի,

Առուտեհան «խերն ու շառը» շանց  
կուտամե:

Չոբանն ասավ. «հե'նց գիդիս դուրթ  
քո՞ւն ունիմ,

Մե աչկըս-անգաճըս քու կըռնումն  
ունիմ.

Ամեն դոչի գըլխին մե-մեկ շուն ունիմ,  
Առուտեհան քիզ թամաշան շանց  
կուտամ»:

Գելըն ասավ. «վուր ամպը գա ծըմակին,  
Ակոեքըս կու գըցիմ դոչի դըմակին...  
Կեսը կու խիխտիմ, կեսն էլ իմ քամակին  
Մե-մեկ, մե-մեկ սարի ծերին շանց  
կուտամ»:

[Չոբանն ասավ. «գիդիս անդեր մա՞լ  
ունիմ],  
Ճըտիտ համա էրկըթե կըրկալ ունիմ.

Թե վուր ճանգրս ընգար, յիս իղբալ  
ունիմ,  
Կոմբլիս տակին կընձկընձալը շանց  
կուտամ»:

Սայաթ-Նովեն ասաց - յիս կարմիր կով  
իմ,  
Կովկիթըս կոտրիլ իմ` հարսից խըռով  
իմ,  
Գիլի հիդ քան չունիմ, չոքնին կու գովիմ,  
Մե գամ էլա մաճնի համը շանց կուտամ:

59

Մախուխն ու ոխչրի միսը կովեցան,  
Ամեն մեկըն ասում ին` «մազեն յիս իմ».  
Քու մեչն ի՞նչ դըվաթ կա, ի՞նչ իս դուս  
տալի,  
Մարթու դըվաթ տվողն ու փազեն յիս  
իմ:

Մախուխն ասավ. «օխտը շափաթ պաս  
ունիմ,

Գլխիս ծառա օխտը նորահարս ունիմ.

Համիմ, սխտոր, պինտա ու պըռաս  
ունիմ,

Աթամորթու սրտի մուրագն յիս իմ»:

Ոխչրի միսըն ասավ. «իմ մեչն է համը,

Կու դնին փըլավումն՝ կու քաշին դամը.

Ինձ մաթլաբեն կոծին, քիզ կոծին ջամը,

Ջիգրու կու պատոեցնիմ, քու ջազեն յիս

իմ»:

Մախուխն ասավ. «քանի փքվիս

պատովիս,

Պիտի վուր պաս պահիս, հազար

փշրվիս,

Միխկիրիտ դարձ գաս ու պիտի

հաղորթվիս՝

Դժոխակի ու դրախտի դագեն յիս իմ»:

Ոխչրի միսըն ասավ. «պակսիլ է օրըն,  
Դիփունն ինձ ին գովում՝ քաշալն ու  
քոռըն.

Քիզ կու քոռացընէ իմ մատղի գորըն,  
Լավաշում փաթաթած թավազեն յիս իմ»:

Սայաթ-Նովեն ասավ. «խոմ գի'դիք՝ օց  
իմ.

Գուզիք էրկսիտ մետի, մեքաշ սղոցիմ.  
Կու վիկալնիմ ձիզ մութն տիղն կոծիմ,  
Կողպեքն կու դընիմ՝ ձիր ուզեն յիս իմ»:

60

Մազիր ունիս դաստառեհան՝ նման  
սիրուն սուսանի

Ունքիրըտ դալամով քաշած, սազում ին

միր գումանին.

Թերթերուկըտ նիտ ու նաշտար՝

դիպչում է միր քամանին.

Աչկիրըտ օսկե փիալա, կրակ դրից միր  
ջանին:

Վարթ էրեսիտ խալ իս դրի-աստղի նման  
հավասար.

Գունքըտ Հնդստանի մում է-ջանս արավ  
դավար-դավար.

Լիզուտ քաղցր, բառըտ քաղցր,  
ակըռքնիրըտ անգին քար.

Պըռոշեմետ միդր է կաթում, չի հասնում  
միր փինջանին:

Էրեսըտ է արիվ-լուսին, վիզտ է նման  
դարդարի.

Բուխաղնիրըտ կախ ին ընգի՝ ինձ ամա  
չիս դարդ արի.

Կուռըտ շիմշատ, մատնիրըտ՝ մում,  
դունգտ արավ ինձ սարսարի.

Գիշեր-ցերեկ էշխի մեչն կախվիլ է միր  
դամանին:

Էնդու համա ջունուն դառած կանչում իմ  
ամա~ն-ամա~ն՝

Աճիլ է, ծաղկիլ է ծոցըտ, հոտըն գուքա  
աննման.

Դոշըտ դառած [բաղ ու բաղչա], իսալ է  
զցի շամաման.

Կու բխեցնե կաթնեախպուր, կանանչ  
չայիր չիմանին:

Թա'րիփ արա, Սա'յաթ-Նովա, գոզալըտ  
աննման է,

Միչկը հադիդեմեն քաշած՝ մարթու հոգի  
կու հանե.

Ի՞նչ իս անում, դա'նլու մարալ, էշխըտ

ինձ կու սրպանե.

Մի սրպանի հասրաթեմետ, եկ, տեր մի  
դառ միր արնին:

Էս Արութինի ասած է. Իլահի:

61

Մշու սուլթան սուրփ Կարապիտ,  
երկինք է հասյալ գովքըն քո.

Գլուխ վարթապիտ ճշմարտության,  
չկար հավասար ոքըն քո.

Խոսկիրըտ անգին ջափահիր, լալ էս  
թափյալ բիրնոքըն քո.

Որովայնե երգիր պաքիր, արմացյալ ին  
ծնողքըն քո.

Անապատեն բարբառեցար, հրաշախոս  
շրթնոքըն քո:



Գընացիր գետըն Հորդանան, տերըն  
ինքըն մըկըրտեցիր.

Տիրոջըն դու ցուցիր մարդկանց`  
երրորդությունն հայտնեցիր.

Յիս վասըն այն ուրախ եմ շատ` չար  
սատանեն կորցըրեցիր.

Երեսուն ամ ի մեջ այրի, վասն  
աշխարհին աղոթեցիր.

Մեղըր վայրի վայիլիցար, շատ քախցըր  
ին քարոզքըն քո:

Գրյալ է ի մեջ սուրբ գրքի, Ովաննես  
միծի ծնունդկանանց.

Զարյամբ քո հոգիք փըրկեցիր, թագ ու  
պարծան իս կուսանանց.

Հրիշտակնիրըն իջան յիրգնուց, պըսակ  
լուստ առիր անանց.

Խաչապաշտյաց հիմըն դառար,  
աշտանակ իս ամեն վանանց.

Մասունքըտ ամեն տիղ ծավալի, ամեն  
տիղ է լուս-շողքըն քո:

Կըռապաշտըն քիզ հյուր կանչեց, գորս  
ամենայն յուր հավաքյաց.

Բազմությունըն եղեւ հուզյալ՝ եխպոր  
աղջիկըն չը խաղաց.

Երդում կերավ գահի վրա, ի'նչ որ ուզես,  
կուտամ՝ ասաց.

Մարգարեի գլուխըն ցանկաց, դահիճըն  
խսկույն գըխատյաց.

Օխտըն անուն հիշատակեցին, որ  
կտրեցին շըլինքըն քո:

Ինչ հրաշալի կերպ ունիր դուն,  
սանդարամիտըն զորոք սարսյալ.

Տարտարոսը հայտնի արիբ, ավետիս  
համայն առաքյալ.

Դըրախտի հրեշտակըն իս դուն,

սուրբըտ սըբոց սիրտըտ մաքրյալ.

Սայաթ Նովայ ն շատ կու ողբա,

աղաչում է երեսն անկյալ.

Մեղավորաց մեղքըն հալե, լուսով լի է

տապանքըն քո:

62

Հիմքըտ վերըստին նուրեցին, չաղ արին,

Մողնու սուրփ Գեւուրք.

Քար ու կիրըտ ռիչարի կաթ շաղ արին,

Մողնու սուրփ Գեւուրք.

Աչ ու ձախ կախեցին` բրուէ ճաղ արին,

Մողնու սուրփ Գեւուրք.

Յիրգնուց լուսըն վըրետ կամար-թաղ

արին, Մողնու սուրփ Գեւուրք:

Պատիրըտ կարմիր ագուրով, սընիրըտ

տաշ մարմար քարով,

Հընդու միչեմեն դուս էկած

վարաքուրըտ՝ դալամքարով,  
Թագիրըտ անգին ակնիրով, ըզգիստըտ  
զարբաբով, զարով.

Բիմըտ ու խաչկալըտ դրախտի բաղ  
արին, Մողնու սուրփի Գեւուրք:

Վիրնատունտ սանդալէ տախտակ,  
ռանգըն է տորոնի նըման.

Հոքով ու մարմնով կու սըրփվի, ով քիզ  
գուքա մոնի նըման.

Տապանակ ուխտի կըտակավ խորանտ  
Ահարոնի նըման.

Միաբանքըտ քաղցր ձայնով տաղ արին,  
Մողնու սուրփի Գեւուրք:

Ամեն բորոտըն կու սրփվի, քիզի գուքա  
ով փափակով...\*

[1751]

-----

\* Այս տողը ջնջված է հեղինակի կողմից:

63

Էս ի՞նչ էլավ ինձ հիդ, տե՛ս, ի՞նչ իմ արի,  
Դե վիզըս ծուռ, գնա՛, տանեն դուս  
արած.

Խիլքըս տանուլ տըված լիղնուրթ իմ  
դառի,

Գժված ման իմ գալի, բանեն դուս արած:

Քաղցր թուրքս դառը լիղի շինեցի.

Յիս մե միդք իմ արի՝ նշտար քաշեցի,

Իմ էն արթար կաթիս արուն խառնեցի.

Բաս էնդու համա իմ նանեն դուս արած:

Յիս բլբուլ իմ, վարթըս փակից ալալըն.

Տես ի՞նչ արից հուրիգադա ջալալըն,

Կորցրիլ իմ ջավահիրըն ու լալըն,  
Մա'դա չունիս, Բադեշխանեն դուս  
արած:

Հա' լաց էլա, վա'յ կանչեցի անհաշիվ,  
Էլ ի նչ օգուտ, ջան տուր, կինքըտ հա-  
մաշի,

Էս իմ դարդից թուղ վուր օչով չը քաշի՝  
Օչով չըլի սիրեկանեն դուս արած:

Արի', մի'դք իս, Սայաթ-Նո'վա,  
միղանչող

Ախպոր ճամփին կինքըս մատաղ ըլի  
թող.

Մըրան դա'բուլ իմ արարիչ-ստիղծող,  
Հոքիս չանիս դրախտիջանեն դուս  
արած:

(1758)

Աստուծ խիալ արից, սրվթա,  
 Ստիղծից նախ մարթըն **Աթամ**.  
**Աթամի** կուղեմեն քաշից,  
 Եվան տըվից նըրան **համդամ**:

**Համդամ** գուզիք` էս ձիզ դարար -  
 Տերըն ասաց - չո'ւտիք էս բար,  
 Թե չէ կու տեսնիք մինձ զարար,  
 Վուր առիլ իք էս պտղի **համ**:

**Համ** առնիլըն ուզից նախամար Եվան,  
 Չարը գըթավ նըրան, տվին իրա'ր **կամ**:

[**Կամով** ընկավ չարի թոռըն],  
 Քաղից արգիլված խնձորըն,  
 Խափից Աթամ նախահորըն,  
 Կերան ու դառան **մերկանդամ**:

**Մերկացան** ու ամանչեցին,  
Փռշման դառան ու լացեցին,  
Տերըն վուր էկավ՝ խափեցին -  
Թե, օցըն էր արավ **սիրամ**:

**Սիրամ** արից տերն էլ, քշից դըրախտեն,  
Քանի վուր պատվիրքըն չպահին  
**թամամ**:

**Թամամ** մութ բըռնից աշխարը,  
Ի՞նչ է Աթամ-Եվի ճարը,  
Սատանեն գըթավ հընարը,  
Ասաց - գուզիք՝ ձիզ լուս **կուտամ**:

**Կուտամ**, ասաց՝ գիրըն առավ.  
Հորդանանու գիտը տարավ,  
Աթամ վուր էտ շարթըն արավ,  
Նաթիջում դըժուխք գնաց **ջամ**:



**Ջամ** հազար տարի անց, տերն էկավ  
աշխար,  
Ազատից հոքիքը, բան չթողից **քամ**:

**Քամ** ու նիղ օրիք տեսան շատ.  
Ով ունեցավ հուս ու հավատ,  
Իդրարին մնացողն հաստատ,  
Տերըն կու հիշե ամեն **ժամ**:

**Ժամն** ու ժամանակըն է նիղ.  
Մահըն կու գա ամենան տիղ.  
Կուլինի դատաստան ահիղ.  
Աղաչիմ փրկիչըն` **հուսամ**:

**Հուսամ**, Սայաթ-Նովես, միդքիրըս  
քավիմ,  
Թե չէ դատաստանին յիս ի՞նչ ջուղաք  
**տամ**:

(Զինջիրլամա):

Մուսան սըմբուլ դաստամազըս էրեսիտ  
 իսափանգ իս արի,  
 Կավիրըս օլոր տար ու բիր, արայիշ գուլ  
 հանգ իս արի.  
 Հանգ իս արի, յա'ր, ա' յար,  
 Միրտըս արիր յարա, յա'ր,  
 Գըլուխըս մատաղ կոնիմ`  
 Ղաբուլ անիս, յա'ր, այար:

Ումբրիս լարը ձըգիլ դադանգ իս արի,  
 Վայ թե կըտըրվիլ է դափիլ, յա'ր, ա' յար:

Աչկիրըս ծով, էրեսըս շովղ, էշխըս լող  
 կուտա անդայիղ,  
 Անքանար ջուրըն իս գցի, բուրբըս  
 տալղա, ջըրհիղիղ,  
 Ջըրհիղիղեն **Նոյ այիբ,**  
 Վուր փըրկըվից **նու այիբ,**

Նոյին գեմին ազատից,  
Ինձ՝ **այիբն ու նու այիբ**:

Մե մեկ ինձի տիսուտ, թե անիս լայիդ,  
Կու կենամ ջամալիտ մայիլ, յա'ր, ա'  
յար:

Հասրաթեմետ չոլիրն ընգած, Մեջլումի  
պես Լեյլու գայաթ.

Յարալու ջեյրան իս դառի, յիս քու  
եղնետ՝ ավչի-սայադ,

Սայաթ-Նովեն իմ, սայադ.

Անուրս հաշվիր՝ սայ-ադ.

Տիսուտ կարոտ չը թողնիս,

Չասիս՝ սա օտար, սա՝ յադ.

Կամ թե գուրձավուր իմ, բեքարա  
խայաթ,

Արածըտ ինձ չի լի վայիլ, յա'ր, ա' յար:

# Հավելված

1 (66)

.....

.....

Ամեն մե մըտիկ տալով տարար խիլքըս,  
քամալըս.

Է~յ նազանի, ռահմ արա, դուն մի դառնա  
աջալըս.

Հենց ձեռովըտ կապեցիր, էնպես բաց էր  
իդբալըս,

Էշխեմետ հիվանդացա, չիս հարցընում  
իմ հալըս.

Քիզիքիզ մըտիկ արա, փոշմանելու  
վախտըն է:

Իմ թալնիլը քու բանն էր, չասացիր ի՞նչ  
իմ անում.

Սրտով սիրածըս դուն իս, էլ ինչի՞ իս  
արմանում,  
Ուրիշներու խոսկիրով կապած յարես յիդ  
անում.  
Աչկըս ճանապարհտ է, ինչի՞ իս շատ  
ուշանում.  
Մեր խավվաթ օթախումըն բարիշելու  
վախտըն է:

Քու պատվական գլուխըս դուն ավարա  
մի անի.  
Էս իմ խունի ջիգարըս հազար փարա մի  
անի.  
Իմ ու քու սրտի բանն դիփ աշկարա մի  
անի,  
Արութինի շախ սիրտըն մեկ էլ յարա մի  
անի.  
Կամով ու ճիտ անելով փաթաթվելու  
վախտըն է:

(2) 67

Աշխարեմեն բեգարիլ իմ, էլ բիրնումըս  
համ չըկա, չէ,  
Թառամիլ է սրտիս վարթը, սափա, զող  
ու դամ չը կա, չէ,  
Ամեն մարթ իրանն է քաշում, դարդիման  
համդամ չը կա, չէ.  
Բուլորքըս դամքաշ ին դառի՝ ուրախ  
սիրտ անգամ չը կա, չէ:

Դառըն խոսկով սիրտըս խուցից, վաղի  
ձեռնեմեն գուլամ յիս,  
Դոստիրըս դուշման ին դառի, յաղի  
ձեռնեմեն գուլամ յիս,  
Մեկ չէ, էրկու չէ՝ աշխարում շատի  
ձեռնեմեն գուլամ յիս:  
Էհտիքարը վիրացիլ է, ասկ ու բարեկամ  
չը կա, չէ:

Էյ ադալաթ, հուքմի-հաքիմ, սուչրս ինչ է,  
ա'սա ինձի.

Վուր հաքցըրիր իմ չուզեցած սիվ ու սուք  
լիքասըն ինձի.

Խըմցըրեցիր անմիղ տիղըն, էս աղուի  
թասըն ինձի,

Հոքուտ մեչ ինսափ, սըրտումըտ  
շընուխկ ու քարամ չը կա, չէ:

Թե ոուխասաթ տան, սիրտըս քանամ, կու  
տեսնիք դարդիրըս ծով ա.

Դովրանեմես դուս ին գըցի, իմ տիղըս  
բըռնողըն ով ա,

Ասում ին - տարքըտ թամամից, լաց ու  
ողփա, Սա'յաթ-Նովա,

Հայ վախ, էլ ձիռիս քամանչա,  
մեջլիսումըն ջամ չը կա, չէ:

Իդրար ու ամագ չունեցող յարի  
ձեռնեմեն դադ կոնիմ,  
Բըլբուլին վարթեմեն զըրգող խարի  
ձեռնեմեն դադ կոնիմ,  
Մարթուս էիթիբար չը մնաց, դարի  
ձեռնեմեն դադ կոնիմ,  
Դիփ խառնակիչ ու ավիրող չարի  
ձեռնեմեն դադ կոնիմ:

Էլ հոքեվախ կըրոնավուր, մարթասեր  
իշխան չը մնաց,  
Ջորըն անգորին կերիլ է, մարթկանց  
վըրա ջան չը մնաց,  
Էս զամանի գոգալներուն ախթար ու  
իման չը մնաց,  
Քանի կանչիմ դադ ու փիրյադ, զարի  
ձեռնեմեն դադ կոնիմ:



Փիքր ու խիալըս հարգահ աշխըրքի  
ցավի մասին է,  
Խիղճի, նաչարի, տընանգի, բարու ու  
լավի մասին է,  
Սայաթ-Նովու խոսկըն իրավ ու  
անիրավի մասին է,  
Յոխսուլին զըրգող, բեինսափ, վարի  
ձեռնեմեն դադ կոնիմ:

## Վրացերեն խաղեր

1

Ինչ զարբար իմ, ի~նչ ատլասս իմ, յիս  
ի՞նչ զար իմ, գի՞ դիս, աջար.  
Մանիշակի, վարթի կարոտ ի՞նչ զեփյուռ  
իմ, գի՞ դիս, աջար.  
Գիշեր-ցերեկ սազը ձեռիս մե նոքար իմ,  
գի՞ դիս, աջար.  
Քու ծընուղքըս իմացիլ ին, վուր քի յար

իմ, գի՞ դիս, աջաբ.

Բա ի՞նչպես է՝ դուն չիմացար. իսելագար

իմ, գի՞ դիս, աջաբ:

Դա ա՛րի, ինձ անգաճ արա, թե աշխարհը  
վունց ման էկա.

Լեյլումի թայ յար կորցըրի՝ Մեջլումի  
պես հա ժուռ էկա.

Բլբուլի պես վարթ պըտրեցի, մեկ էլ  
չայիր-չիման ընկա՝

Վարթիս ճամփեն էլ չը գըթա՝ մինչի  
վիրչը գուր ման էկա.

Արիվ տեսքըտ շանց տուր, վառված  
մինուճար իմ, գի՞ դիս, աջաբ:

Էս իմ սըրտի դարդ ու ցավըն իմաց  
տըվի Իրանեթին,

Արիվիլքին, արիվմուտին, թաքավուրին,  
ժողովուրթին,

Էլ ի՞նչ կանամ ավել անիլ՝ յարի շեմքին  
ինձ կու մորթիմ.

Էսքան իլթիմագն անում է ճար ու ճըրաք  
մե մոր վուրթին.

Մաշվեցա, հալվեցա պըրծա՝ յիս շաքար  
իմ, գի՞ դիս, աջաբ:

Աշունքվա վախտըն հասիլ է, ինչո՞ւ յիդ  
մընամ՝ շըվարած,

Քու վարթըն ինչրու կբացվի, յիս էլ... ո՞վ  
սաղ, յա ո՞վ մեռած,

Էրգեն ումբըր կունենայի, վուր չըլեի  
էշխետ էրած,

Էս գիշեր քո մոդ իմ գալու, մատա'դ իմ  
քի, ունքիրըտ բաց.

Շուտ-շուտ չասիս, «վի կաց, գընա», յիս  
քի հյուր իմ, գի՞ դիս, աջաբ:

Սայաթ-Նովեն գանգատ ունե, վուր ման  
էկա թուր չը գըթա,  
Ուզում իմ, թե սիրտըս խուցիմ`  
պըտրեցի մե թիր չը գըթա,  
Ծոցիտ պահած ջուխտ նըռներուն  
հասնելու մե դուռ չը գըթա,  
Սրտիս, գըլխիս բըռնած ցավին մե  
չարա, մե դիդ չը գըթա,  
Բերում իմ զառ աղլուխնիրը, յիս  
խումար իմ, գի դիս, աջաբ:

[Մուխամմազ]

2

Կոկոնի պես ծիծ ես կերել, էն կաթից է,  
վուր սիրուն իս.  
Շուշան գունքիտ ով կու հասնե, էն  
հացից է, վուր սիրուն իս.  
Շիրազի-Շամախու սուրահ, տեսակից է,

վուր սիրուն իս.

Լավ քուրայում հալած օսկի, կրակից է,  
վուր սիրուն իս:

Դուսը քի մինձ ջար է սպասում, դուս  
արի տես, սուլթան-խան իս.

Բաղումըն ալ վարթ ու նարգիզ,  
սարումըն սմբուլ-սուսան իս.

Օսկեթիլի վրեն շարած մարքարիտի  
թանգ շարան իս.

Պըղընձե քաղկի թաքուհու մանյակից է,  
վուր սիրուն իս:

Էն մե յանումն արար-աշխար, էս մե  
յանում դուն իս սագում.

Ծոցիտ մեջըն՝ վարթի փնջեր,  
բերնումըտ բլբուլի լիզուն.

Քի պես փերի հուրիզադա, հենց մե՛ գամ  
տեսա էրագում.

Էն օրվանից հա ասում իմ՝ հրիշտակից  
է, վուր սիրուն իս:

Հիռու տիղանց էկած մաթահ, Հնդու  
ջավզ ու հիլ, միխակ իս.

Էնդու համար թանգ հախ ունիս, վուր  
գարբաբով սիլա հակ իս.

Նախշած օսկե դուրծում պահած  
հեքաթներու անգին ակ իս.

Սիրուն սալբու, սադափ շարած,  
տախտակից է, վուր սիրուն իս:

Մե չի'ս գալի, չի'ս ասում, թե ի՞նչ իս  
լալի, Սայաթ Նովայ .

Ջրեն դուս էկ ինգլիզի նավ, չուրս  
բոլորքրտ անտակ ծով ա.

Ցերեկն արիվ, գիշերն աստղդ, քու  
թարիփրտ աշխարով ա.

Տասնուհինգ օրըն բոլորած լուսնակից էլ  
դուն սիրուն իս:

3

Մատաղ իմ քի, արի, ինձ մի՛ չարչարի,  
Մի՛ շըփոթի ինձ ու ինչ վուր օտարի.  
Էս հանգի սուտ չէի լրսած մե տարի՝  
Հենց գիդեի դուռը բաց է իմ յարի՝  
Տեսա քընած, դուռն էլ փակ բեիդրարի:

Մարմար հեքալ քարգահ քաշած ու  
նախշած,

Օսկե սիմ իս, մավթուլի պես դուս  
քաշած.

Ի՞նչ կուլի վուր մե գամ հուր գաս, ինձ  
հիշած,

Վուր մինչի լուս նըստինք, խոսանք  
համաշա.

Էշխն ինձ վառից, շատերին էլ կու վառի:

Մուրմի համա ուզում իս օսկե միլըն,  
Զառ շուրերուտ` Լայիջանի թանգ դիլըն,  
Ձեռիս բրոնած ունիս միխակն ու հիլըն,  
Ո՞վ էր տեսի քու էս վախտի քընիլըն.  
Դե ի՞նչ էրագ տեսար, ասա', ճըշմարիտ:

Ալ ճիճու իմ` գինըս վուղչին այան ա,  
Ծոցում պահած սերկեւիլ իմ մե դանա.  
Յիս կու մըրսիմ` դուն ինձ պահի  
տաքանամ,  
Մանիշակ իմ` քու շուղքին չիմ դիմանա.  
Թե դուն վարթն իս` ինձ թայգուլըն  
համարի:

Էրեխու պես էտ ի՞նչ ժին ու ժանգ ունիս,  
Ծովի միջին գեմու նըման լանգ ունիս.  
Աչկիս քուն բի` խաշխաշ ունիս, բանգ  
ունիս.



Սայաթ-Նովուց է՛լ ավելի հանգ ունիս,  
Դուն գոգալ իս` յիս էլ նըման նոքարի:

Էսպես իր դոստը խաբել է եւ դուռը փակել.  
ցավալիորեն մնացել է վշտացած, նրա վրա էլ  
ասել է: (Երգչի որդի Օհանի ծանոթ.):

4

Էշխը սիրտըս, հենց էն գլխեն, քու սրտի  
հիդ կարիլ է,  
Վունցոր, խալիս հին էրծաթըն օսկու հիդ  
հարմարիլ է.  
Ակըռքնիրըս մարքարտի պես կոսիս  
մեկը շարիլ է.  
Չինար բոյով շըվաք կոնիս, վունցոր  
ամպին վայիլ է,  
Արիվի պես լուս իս տալի խուղին էլ,  
աշխարին էլ:

Լուսին տեսքըտ շանց տու, տեսնիմ, թե  
վուր իմ լավ յարն իս դու.

Իզմիրեմեն էկած, գարնան քամու  
բարեբարն իս դու.

Օսկեթիլըն միչըն քաշած Վենետիկի  
գարն իս դու.

Օսկեջըրած գարնըշանը մարմինըտ  
գարթարիլ է:

Տիսուտ կարոտ հա լաց կուլիմ, արուն-  
արտսունք հուսելով.

Օսկեբերնով շընուք կու տաս` քաղցըր  
ասիլ-խոսելով,

Քի պես դաշտի ջեյրան-մարալն իր  
էղիվեն, ասելով,

Ինձ պես շատ վուրսնուրթ չոլերում, ման  
ածիլ-չարչարիլ է:

Միրուն ասիլըն քիզ քիչ է, խալիսը  
տեսքետ գերված է.

Ինչ ռանգի էլ զարբար հաքնիս, կոսիս  
քիզիդ մերված է.

Յիս չիմ սիրի խային յարին, սիրտըս  
դադեն էրված է.

Քիզ հիշելուցն է, վուր լիզուս ցամքած ու  
հիդքերված է.

Յա'ր, կարոտըս Սայաթ-Նովուն սելավի  
պես տարիլ է:

5

Յարիս բադը մտա, խիլքս կորցըրի,  
Մեկ էլ դուռը փակ տեսա յիդ գնալիս.  
Բան չիմացա, մենակ, շիվար մնացի...  
Բադում սալքի ծառիրն էին լանգ տալիս:

Ասի, - գալում, լավ է սպանիս նոքարիտ.  
Վատ բան ասիլ մի տա, լիզվիս կա

բարիք.

Ուրախ լավ է, կինքըստ ուրախ էրկարի,  
Չանս մատաղ իմ տվի քու ցավին յիս:

Մե քիչ մնա', ա'նգաճ արա իմ խոսկին.  
Եկ նուրմեկանց ձեռըս դիր իմ աչ  
ձեռքին.

Յաղութ, ալմաս, լալ ու գոհար իս  
անգին.

Չոլումն ազատ թողած ջեյրան, մարալ  
իս:

Յիս մե խոնդքար էի, ջարըս կորցրի,  
Մե սովդաքար էի, զարըս կորցրի,  
Իմ աննման գոգալ յարըս կորցրի,  
Էլ վո՞ւնց գթնիմ ծովումըն պահածին յիս:

Արարմունքըս արմանք բան է ինձ ամա.  
Ռոստոմ-Չալի թուրըս մահ է ինձ ամա.  
Յիս հիվանդ իմ, լացըս շահ է ինձ ամա.

Աչկըս ճամփիտ ջուր է կտրի, եկ ինձ  
տիս:

Արիվ լուսին էրեսըտ է հայելի.

Մա'տաղ իմ քիզ, ուրիշը թող պետք չըլի.

Թե ուզում իս էշխի խաղիր գովելի,

Սայաթ-Նովեն մե փիլի բիռ կուտա քիզ:

6

Բաղըն բլբուլով լցվիլ է, վարթ-գուլգազը  
չէ պակասում.

Բացվիլ ին գառ ծաղկընիրը, սիրուն  
նազը չէ պակասում.

Յասամաննիրն էլ ին ուրախ, լավ էրազը  
չէ պակասում.

Շամիրը շամդանում վառած,  
զիրանդազը չէ պակասում.

Սարքին, լիքը մեյդանումըն  
քանդիրբազը չէ պակասում:

Զնեդանաս, ա~յ իմ ազիզ, իմ  
խոսկիրքըս առակնիր ին.

Հազար հիդ «քիզ մատաղ» ասի, բա յիս  
քա՞նի գլխի տեր իմ.

Վուր ինձ չասիս սիվերես իմ, դուլ իմ  
դառի քու դոներին.

Էս գիշեր դուն միզ մոդ արի, անգաճ կալ  
իմ խաբարներին.

Ամենքըն միզ մոդ ին էկի, վուր բազազը  
չէ պակասում:

Քանի գիղը լի ու շեն է, անքեփի, անսազ  
ի՞նչպես կուլի.

Քու թարիփի համա խոսկն ու խաղը  
պակաս ի՞նչպես կուլի.

Թե մառանում գինին թափվի, առանց լի  
թաս ի՞նչպես կուլի.

Մեջլիսըն ինչքան սարքով ըլի, վուր դուն  
չկաս, ի՞նչպես կուլի.

Պտտվում ին օսկե թասիր, լեյլում-նազը  
չէ պակասում:

Էսենց հարսնիք, նշանդրիք Շահն էլ  
չարեց Չալի համա.

Ինչ վուր արից սա իր հալալ աղջկա-  
գոզալի համա.

Էս ի'նչ գլխոքըս անց կացավ, վուղչն իմ  
տարքոտ հալի համա.

Քամանչայի, նայի համա, դավուլի,  
դավալի համա.

Չուրս բոլորքըս խաղ ին ասում,  
սանթուր-սազը չէ պակասում:

Բոյըս վունցոր բուսած դամիշ, քի սազ  
գու քա քիրման շալըն.

Ակըռքնիրըս շար մարքարիտ, հնդու  
սիվ բիբար է խալըս.

Դուն փահլեւաննիր իս ախտում, վունց

գովական Ռոստոմ-Զալըն.

Արի գնանք դադաստանի, թե վուր չըլի  
միզ մոդ գալըտ.

Սայաթ-Նովու թաքավուրին Շահբագ-  
Էրեկլե ին ասում:

[Մուխամմազ]

7

Էսօր յիս էնդուր խոսեցի,  
Վուր սիրուն ջեյրանըն տեսա.

Հուրի-փերի մեչըն պառկած  
Օսկե օրորանըն տեսա:

Գիր գրեցի, վուր խընայիս,  
Մե գամ շուռ գաս ու ինձ նայիս.  
Փառք Աստըծու, վուր հիմա յիս  
Էկա ու քիզ տանը տեսա:



Ասի, թե քիզ հուրն է ծընի,  
Ինձ մի՛ վառի, մի՛ չորցընի,  
Արիվն ի՞նչ է, վուր քի անցնի՝  
Ծեքի հուրհուրանըն տեսա:

Թե ինձ արժան թայ իս գալի,  
Արի խաղանք գոլի-գոլի.  
Բանանք վարթի խաս փոթոլի.  
Գույնըզգույն շուշանըն տեսա:

Սայաթ-Նովեն քի դուլ դառնա,  
Սուրաթըտ լուսնակից լավն ա.  
Անունըս **սե** ու **թո** տառն ա.  
**Վը**-ի վիրչումն **անի**-ն տեսա:

8

Անգաճ կըտրած դուլըտ յիս իմ՝ ուրիշ  
նոքարն ի՞նչ իս անում.

Ինձ պէս քիզ ո՞վ կանա սիրե, էլ խային  
յարն ի՞նչ իս անում:

Հնդու թաքավուրի թախտն իս, սարքած  
անգին դիբա-գարով,

Էրանի քու դուլ-ճառային, ծոցըս լիքը  
մուշկ-ամբարով.

Օսկե տախտակնիր ին սագում քոշկ-  
ամարաթիտ՝ մարմարով.

Դուն մե փոքրը, սիրուն բերթ իս՝ գուղի  
նիդ դուռն ի՞նչ իս անում:

Գըլխին սիպտակ ձուն դըրած սար,  
բոլորքըս գառ-մանիշակում.

Շիմշա'տի ծառ, մերու նրման  
թերթերուկըս շուք է ձըգում.

Հունիս ամսի բաղ ու բաղչա՝ վըրետ  
բլբուլ է ճըկճըկում.

Նուր բաց էլած կո'կոր ալվարթ, սիրեկան  
խարն ի՞նչ իս անում:

Արի', խոսկ տուր, էս աշխարում` մենք  
իրարից ձեռ չը քաշինք,  
Միրուն ծոցիտ ըռեհանըն մեր էրկըսիս  
մեչ փայ անինք,  
Էրնեկ մենակ օթախումըն համաշա յիս  
ու դուն ըլինք,  
Սայաթ-Նովեն է աղաչում, էլ ավել ջարն  
ի՞նչ իս անում:

9

Միրուն չոնգուր-չանգ իս, լար իս  
սազավուր.  
Քու դիլդարին խուցող յար իս նիզավուր.  
Սալբու ծառ իս, բաղի բար իս  
նազավուր,  
Անտակ ծով իս, բուրբքըս գար-

Խասավոր,

Անգին լալ իս օսկե դուրծում ռազավոր:

Ծովի գոված ռաշ իս ու ջեյրան իս դուն,  
Աստղի փայլով ակմաս ու մարջան իս  
դուն,

Միշտ վառ շամ իս, բըրուլե շամդան իս  
դուն.

Սուրը ձեռիտ մե էրեկլե խան իս դուն,  
Փեհլով-փենջով, դուլով օյինբազավոր:

Լուս իս տալի՝ լուսնակից էլ պայծառ  
իս,

Էրնեկ մութը չընգնի՝ օրվա պես վառ իս.  
Ճուղք ու տիրենն առատ սիրուն մե ծառ  
իս,

Կանանչ դաշտ իս, հով շըվաքով անտառ  
իս,

Լի հավքերով, ջուրա-ջուրա սասավոր:

Գարունքվա նուր մանիշակ սմբուլ իս  
դուն.

Գոված հուտով պատվական թայգուլ իս  
դուն.

Հավատարիմ ծառա իս դուն, դուլ իս  
դուն.

Սա'յաթ-Նովա, ի՞նչ դարիք բլբուլ իս  
դուն,

Առուտեհան ճրկճրկում իս նագավուր:

10

Քի սազ գու քա զարբաբ ու զար, օսկե  
կոճակ շարան-շարան.

Կոսիս, ձեռիտ տակըն ըլի Ադըրբեջան,  
Իրան-Թուրան.

Արի, դուն ինձ մի սըպանի ձեռիտ թըրով  
էտ հուրհուրան.

Խիղճ բլբուլըն լաց է ըլում, վո՞ւնց իս  
փետով քշում նըրան.

Միրած յարըտ խուր քընիլ է, հալքաթ  
ազդիլ է քու «նա-նա~»-ն:

Դուս եկ յարով, դուս եկ ջարով, ծաղկած  
բաղումըն ման գալու.

Բլբուլն էնթի ճամփետ պահած «բարի  
լուս» ունե քիզ տալու.

Քիզ ո՞վ բերեց էտ աչկիրով, էտ քու բոյով  
արմանալու.

Բեզարիլ իմ գովք անելում՝ շատերին  
մահ տըվիր, գա՛լում.

Յիս քիզ ամա խաղիր ունիմ, վուխճը  
հարուր քառսուն խանա:

Էտ շիրմայի վըզով, գի՛ղիս, մե բըրուլե  
սուրահ իս դուն.

Դուն լուսին իս, էլ հայիլուն ինչի՞ համա  
կու նայիս դուն.

Զուլփ ու հուսիտ համա ձեռիտ օսկե

մկրատ կու պահիս դուն.

Անմիդ տիղըն ինձ մորթելով, ա'սա, թե  
ի'նչ կու շահիս դուն.

Յա գըլուխըս ինչի' պիտի քու խանջալին  
արժանանա:

Մահու ճանգեն ի'նչպես փախչիմ.

գիղիմ, վուր էլ դուս չիմ գա յիս.

Արար-աշխարն էլ իմն ըլեր, վիրչումն էլի  
հույս չըկա ինձ.

Ջար ու գարբար, դալամքարի նախշած  
շուրիք հաքած ունիս.

Աջա'բ գիղիս, թե էդ անգին զուքսըս  
ի'նչպես սազ գու քա քիզ.

Ինձ ավատա, չիմ գողացի, յիս գըթել եմ  
գլխիտ շանան:

Սուտ ասիլըն յիս չիմ գիղի, էրագումըս  
տեսած քան է.

Էդքան հուտով ալ վարթիրըն ո՞վ է բերի,  
շեմքիտ ցանե.

Վուր աշխարը լիզու առնե, քու  
թարիփըն դըժար կանե.

Ջուր իս լալի, Սա'յաթ-Նովա, էտ խիալը  
մտքետ հանե.

Թովուզի թախտն ո՞վ կուտա քիզ, դուն  
էդ ցավեն չիս դընջանա:

[Մուխամմազ]

11

Ինչ կուլի, յա'ր, օրից մե օր միր տուն  
գաս.

Ուրիշներու նըման չը գաս` թաքուն  
գաս` -

Վիրեն վեր գաս` լուսնակի պես ինձ  
հյուր գաս.

Վուր պատկիրքըտ ամեն յադի ցույց չը



տաս`

Ծիծեռնակի պես միր դրոնեն` դուս  
գրնաս:

Գուզիմ ծեփի արիվ ըլիմ, վառ ըլիմ,  
Ձիր բակումըն մե շըվաքով ծառ ըլիմ,  
Կացնով չը տաս, թուղ լի հա~ դալար  
ըլիմ,

Քի հարեւան, քի միշտ յարիքար ըլիմ,  
Վուր միր տուն գաս` քու տան պես` յիփ  
ուզենաս:

Առանց մահի քիզնից մարթ չի հիռանա.  
Ասա', քիզնից վըրես ինչ միղ կու մընա.  
Իմ դարդը քու սըրտում յի փ տիղ  
կունենա.

Քու էտ սիրուն գունքըտ էլ միշտ չի  
մընա,

Աստղերու պէս թեգուզ երգինք  
բացրանաս.

Սայաթ-Նովեն գարբաբի պէս, գարի  
պէս,  
Յա'ր, ճըտովըտ գըցած ըլեր շալի պէս,  
Վայ թե վիրշում իմ ասլին հավան չըլես`  
Քու դըռանըտ յիս կու պատկիմ դուլի  
պէս`  
Հողի նըման ինձ կոխ տալով անց  
կենաս:

12

Աստղերու պէս յիրգընքի հըրաշ իս դուն.  
Կարմիր վարթ իս, դաշտի ալ-դումաշ իս  
դուն.

Գարնան սիրուն ծաղիկներեն բաշ իս  
դուն.

Սանթուր իս դուն, քամանչա իս, տաշ իս

դուն.

Հուր-հրեղեն, ծովի ջեյրան, ոաշ իս դուն:

Աջա՞բ վուչ մե լալի մոդ չը կրթվեցիր,  
Վուր ինձ նըման խիղճ եսիրին  
մորթեցիր.

Դիդի համա քու ջադվարից տըվեցին.  
Քի սազ նաղաշ չելավ, ինչքան  
փորցեցին՝

Հնդստա՛նի դալամի նաղաշ իս դուն:

Կինքըս առանց քիզ մահի է նըմանում.  
Էշխիտ դամբ ու զինջիլին չիմ դիմանում.  
Չիմ գիդի, թե էլ ի՞նչի իս սըպանում.  
Ինձ տեսնում իս, յիս քիզ իսկի չիմ  
տեսնում.

Բրուլե դուրթում նըստած հե՛րիք մաշիս  
դուն:

Արդալու պէս սար ու քոլիր կու սիրիս,  
Ամպի նըման ծով ու գոլիր կու սիրիս.  
Ջէյրանի պէս ազատ չոլիր կու սիրիս.  
Ջուրա-ջուրա զարբաբ շորիր կու սիրիս,  
Քու տեսնողի համար «ա~իս ու վա~շ»  
իս դուն:

Յարըս Հնդու Շահի իխտիար ունէ.  
Ամեն հումքը գըլուիս բերող ճար ունէ.  
Բրոլէ սինով անգին ակ ու քար ունէ.  
Սըրով, նիզով դուռը պահող ջար ունէ...  
Ո՞վ իս, Սա'յաթ-Նովա, մէ չարքաշ իս  
դուն:

13

Էսքան «չէ» խոսք չէ ունեցի օչով իր  
դիլդարի համա.  
Ջուր գլուխըս մահու տվի իմ էս  
անջիգարի համա.

Քի մոդ քա~նի մարթ իմ դրգի Հնդու  
դալամքարի համա.

Հնդու դալամքար իմ պտրում զար ու  
զարբաբ զարի համա:

Մատնիր ունիս` կոկած մումիր, կոսիս  
քաշած կա փարզարը.

Վի կաց, պարե կաքավի պես, զրնգում է  
օսկե լարը.

Օսկե կոճակնիր իմ պտրում, հատը  
չունե լավ զարզարը.

Ազիզ, գի դիս, էն ճարում իմ քու էրծաթ  
քամարի համա:

Միչկըտ բուսած դարդուղամիշ, բոյըտ  
վունցոր չինարի ծառ.

Էրեսըտ` մե սիրուն լուսին, գունքըտ  
զարնան արիվից վառ.

Քի պես գոգալ մի հըրիշտակ ջեր չէ

տեսած արար-աշխար.

Թաքավուրնիրն էրնէկ կուտան քու մե  
հատ դիդարի համա:

Առուտեհան հուսով էկա, քու

պատկիրքիտ յիա թամաշա,

Վառ էրեսըտ բաց չը տեսա՝ վրետ խաս  
յորդան էր քաշած.

Ի՞նչ անէ խիղճ Սայաթ-Նովեն, ջուխտ  
աչկիրը թաց համաշա.

Գիշիրնիրըն աստղերու պէս անքուն,  
լուսին-յարի համա:

14

Ինչ կուլի վուր, յա ինձ կանչիս, յա հալալ  
իս, արի տեսնիմ.

Ի՞նչ յաղութ իս, ի՞նչ ալմաս իս, յա ի՞նչ  
լալ իս, արի տեսնիմ.

Վախում իմ, թե դուն ինձ բռնիս, թե

ջալալ իս, արի տեսնիմ.

.....

Յիս բլբուլ իմ, վարթ իմ պտրում, թե  
ալալ իս, արի տեսնիմ:

Չնեղանաս, ա~յ իմ ազիզ, քու  
իխտիարով դուս արի:

Փիանդազը քի սազ գու քա, զարբար ու  
զարով դուս արի.

Վուր քիզ օչով չնկատե, չադրով,  
հունարով դուս արի.

Մե ռուբայաթ գուզիմ ասի, հենց մի  
թահարով դուս արի.

Հողեղեն իս թե հրեղեն, թե մարալ իս,  
արի տեսնիմ:

Դուս գաս թե չէ, կու ճանանչիմ, քու  
աննման ջանիտ մատաղ.

Հուսած, անհուս զար մազերուտ,  
գուլփերուտ ու շանիտ մատաղ.

Բարակ միջկիտ, ջինար բոյիտ, շիրմայի  
գարդանիտ մատաղ,  
Դռշուղիտ գմբուխտ կոճակին, գուքսիտ,  
ալ-մարջանիտ մատաղ.  
Մարքարիտով օսկե միլ իս, թե ինչ լալ  
իս, արի տեսնիմ:

Ինձ վուր էսենց հիռացըրիբ, ո՞ւմ հիդ իս  
դուն կինքըտ կիսում.  
Էդ պատվական քու գլուխըտ մահաջարի  
մեչ իմ տեսնում.  
Օսկե օղըն վո՞ւնց իս պահում իսամ  
քաթանի մումաճ քիսում.  
Թե կապիլ իս իսարայումըն, փաթաթիլ  
իս իսաւ ատլասում.  
Ի՞նչ իս պահի թանգ բոխչումըտ, թե  
դալալ իս, արի տեսնիմ:



Վաղուց գարունքըն էկիլ է, օթախից դուս  
գալու վախտ է.

Բացվիլ է շուշանն ու վարթըն, հիմի բաղ  
գնալու վախտ է.

Թուրն ու բալըն լավ հասիլ ին,  
բաղմնչուն ձեն տալու վախտ է.

Ծառի շվաքըն քաշվում է, կեսօրը  
մողնալու վախտ է`

Սայաթ-Նովեն հով է ուզում, թե վըրան  
իս, արի տեսնիմ:

15

Հենց իմացար սո'ված էի, լի սեղանի  
հա մա էկա,

Քիզիդ խոսիլ էի ուզում` մողըտ դամի  
համա էկա.

Ասի, քիզիդ լուսացընիմ, ուրախ ժամի  
համա էկա.

Մոռացիլ իմ... լավ միտս չէ, թե ինչ բանի  
համա էկա:

Դուն մե թաքավորի թագ իս, յիս էլ ...  
հա~ ճուրտի դարումըն.

Դուն համաշա զարթարած իս  
դիբայումն, անգին զարումըն.

Միրուն բըրոլե շուշա իս` սանդալե  
թանգ փանջարումըն.

Էրեսըտ` օսկե հալիլա, քի մոդ ջամի  
համա էկա:

Էնդու համա թանգ հախ ունիս` դիբա  
իս, զարբաբ ու զար իս.

Խորասանու ջավադեն իս, Հնդստանի  
դալամքար իս.

Յիս մե դարիբ սովդաքար իմ, դուն  
Մարանդի շեն բազար իս.

Չունքի գարի գինը չունիմ, էնդու խամի  
համա էկա:

Իմ ա'չկի լուս, պարտկ դի վրես, լիզուս  
քի պարտկի տիղ կու տամ.

Գըլուխըս քի բարաթ կու տամ, մեջլիսի  
քեփ ու գող կու տամ.

Համաշա քու տիսըն գու քամ, իմ ջանըս  
քի մատաղ կու տամ.

Յա ինձ կիսք տու, յա սըպանի,  
դադաստանի համա էկա:

Թեգուզ աշխարքըս հավաքվի, քու  
թարիփըտ ի նչպես կարվի.

Ի նչ Հնդստան, Փռանգստան, քու  
նըմանըտ վո նց կու ճարվի.

Էս ջրատար Սայաթ-Նովեն աղաչում է  
վուղչ աշխարին.

Թողի Հալաբն ու հիռացա, քի մող Շամի  
համա էկա:

16

Արար աշխարքըն զըմայլվեց, մաթ  
մընաց

Լուսնի պես քու վառ նըկարի համա,  
յա'ր.

Վըզիտ օսկե բարակ զինջիլ կա գըցած  
Դոշիտ խաչի ու գոհարի համա, յա'ր:

Քու կարոտըն ինձ գիրիզման կու տանի.  
Ինձ միղ գալուց սար ու ձորը սուք կանի.  
Ով չէ տեսի, նըրան կուտա էրանի,  
Վուր մեռիլ է քու դիդարի համա, յա'ր:

Ջանըս, հոքիս կամով ցավիտ բախշեցի,  
Ջահել կինքըս ճանապարիտ մաշեցի,

Չասիս միթամ թե քիզնից ձեռ քաշեցի՝  
Յիս կու մեռնիս իմ իղրարի համա, յա՛ր:

Էս աշխարը կոսիս միզնից խըռով ա,  
Էնդուր աչկըս թաց ու լիզուս խորով ա,  
Աստծու արչիվ միղավոր Սայաթ Նովայ  
ն

Մեռնում է իր անսիրտ յարի համա,  
Ճա~ր:

17

Դարդ ու ցավըն ի՞նչ օքուտ, վուր չիս  
գիղի.

Վուրն է հինը, յա վուրը նուր, չիս գիղի.

Վիզըս ի՞նչի կըտրեցիր գուր, չիս գիղի.

Աչկըս դառած արնի ախպուր, չիս գիղի.

Անունըս էլ դուն իսկական չի՞ս գիղի:

Դուն էլ ինձ պես մե Աստրծու արարած՝  
Լիզուտ միդր է, խոսկիրքըտ էլ  
շաքարած.

Ձեռիտ փուշ պիտի դուշմանիտ դեմ  
արած.

Ամառ, ձմեռ քիզ ամա դուն մեկ արած՝  
Վուրն է գատիկ՝ քարիկենթան, չիս  
գիդի:

Յիս բլբուլ իմ, ո'ւրիշ հավք չիմ քիզ ամա  
Հիռու ծովեն էկած նավ չիմ քիզ ամա,  
Օտարական սիվ արաք չիմ քիզ ամա.  
Լավ իմացի, յիս չարկամ չիմ քիզ ամա,  
Էլ ի նչի իմ քի հարեւան, չի՞ս գիդի:

Յիս վառ շամ իմ՝ քու շընչովըտ կու  
մարիմ.

Հոքուտ սիրըն, ա'րի, ասա ճըշմարիտ,  
Հենց քան կոսիմ՝ կու նըմանի շաքարի...

Մայաթ Նովայ , էլ նրման չիս նոքարի,  
Չունքի վալի, թաքավուր, իսան չիս գիդի:

18

Աստղալուսով ծովըն ինչպես կու ցամքի.  
Մաղով Քըռի ջուրըն ինչպես կու չափվի.  
Որքան գուգե քամին փըչե մինձ ուժով,  
Ժեռ քարեմեն յի փ կանա մի բան տանի:

Գուգե մորթե, ձրկնեմեն ձեն չիս լրսի,  
Իշի վուտքին էն ո՞վ խինա կու քըսի.  
Բամբակին էլ ավազը վունց կու հասնի,  
Թեգուգ լըցնիս մեչը դուրնի յորդանի:

Պղնձե թասըն վուրքան ուգես կըլեկի,  
Քըսանն էլի չարժե էրծաթի մեկին,  
Լավ շուշին էլ չին տա հին ալմասի գին,  
Թեգուգ շուշին քաշիս օսկե մատանի:

Մարթ կա, իսկը վունց սատանի մե  
մըշակ,  
Չար սատանի տունը դառնա բըրիշակ.  
Կարկաժը վունց կուլի Շիրազի շուշա,  
Ինչքան բարցըր թարեքումըն տիղ անին:

Դուն չասիս, թե էս խիղճ սազա'նդարն  
ո՞վ ա.

Խոսկիս տերն իմ, հունարըս էլ գըրով ա.  
Արո'ւթինն իմ, ինձ կոսին Սայաթ Նովայ

.  
Հենց քան կոսիմ, վուր ամբերում ձեն  
հանի:

(1751)

19

Իմ էս ցավի նըման ցավը թուղ վուր  
ամեն մարթու բըռնե.



Լիրթ ու թոքը կու չորցրնե, ում  
սըրտումըն սա բուն դրնե,  
Ում տունն ընգնե՝ ախպեր, ծընող, դիփ  
իրարից կու բաժանե.  
Էրկու խոսկով անգիր ասիմ՝ սերը վուր  
կա՝ դըժար բան է:

Լիզուն բերնում մեռցընում է՝ էլ չիս  
կանա մի բառ ճարի,  
Վազնի ճուղքից կապեր ունե՝ պինդ կու  
կապի, կու չարչարի,  
Աստված չանե մե գամ յիրթվիս, էլ  
փրգվիլը խիստ դըժար է,  
Իմ լավ հալին ինքը տերը թող օչովի  
արժան չանե:

Աշխարըս քի թարիփ կոնե՝ դուն սիրուն  
իս ջեյրանի պես,  
Էնդու համա աղաչում իմ՝ սիրտ

ունենաս իմինի պես.

Էրնեկ ըլի քու սիրածին՝ սիրտ կունենա  
ասլանի պես՝

Ռոստոմ-Չալն էլ չը պատահե էն թըրին,  
վուր նա կու հանե:

Եկ մե փուքըր անգաճ արա. քու էշխեմեն  
էլավ դարդըս.

Էլ ինչի՞ իս հադա տալիս՝ առանց էն էլ  
նաչար մարթ իմ.

Դուն մե քաղցըր կաթնախապուր իս,  
առուտեհան բացված վարթ իս,  
Ալ ու ավվան տերիվներով, հոտըտ  
արար-աշխար կառնե:

Գիշիրնիրըն դուսն իս ըլում՝ չիմ գիդի  
տանն ո՞վ է մընում.

Չինի թասն ինձ բան չի անի... յիս  
զարթուն իմ՝ սիրտս է քընում,

Մեռնիմ էն սուրփ փիրի հորուն, յիս  
խումար իմ, չի՞ս իմանում,  
էս «հայ-հուլին» Սայաթ-Նովեն կու  
դիմանա՝ ինչ էլ անեն:

20

Բաղում թուրի դուշն է կանչում՝ յիս  
բլբուլի ձայնն իմ ուզում.  
Էրագումս ճարն ասեցին՝ լիքը  
գուլաբդանն իմ ուզում.  
Բլբուլն ասաց - «յիս լալիս իմ՝ վարթիս  
թուփ ու թաղն իմ ուզում».  
Յիս էլ սարիր անցա էկա՝ իմ ազիզ  
վաթանն իմ ուզում:

Քի պտրելով ջանըս մաշից, արուն-  
քրտինքով թաց էլա.  
Վարթս տեսա քաղած, թափած, բլբուլի  
պես խիստ լաց էլա.

Դուն մե գոված օսկե դուրթի, մեչը լիքը  
պահած է լալ,  
Յիս ուզեցի, մեկը չասից, թե ինչի եդ  
բանն իմ ուզում:

Դուս եկ, պահված դա՛շտի մարալ, քի  
պահպանող ծառիտ էրնեկ.

Գունքըտ կոկած թուղթ-մաքաղաթ,  
մարմարե դիդարիտ էրնեկ.

Դուն մե թագա Չինումաչին` ի՞նչպես  
չասիմ, յարիտ էրնեկ.

Հին քարխանի գար ու գարբաբ` ինձ  
ամա քու խամն իմ ուզում:

Քու նամակըտ յիս կարթացի, իմն ի՞նչի  
դուն չը բացեցիր.

Մե գամ էլա ինձ չիս հիշում, ի՞նչի էտենց  
ինձ ատեցիր.

Միթամ մե խիդճ եսիր իմ յիս, գիրըս

կարթա ու իմացիր.

Հիվանդ իմ, ծածկվելու համա քու  
ատլաս յորդանն իմ ուզում:

Նամարդութին յիս չիմ անի, ինձ  
ավատա, ա՛յ իմ ազիզ,

Եկ նուրմեկանց ինձ մի վառի, հենց էն  
գլխեն էրած իմ յիս.

Սայաթ-Նովեն քիզ ասում է՝ «յիս բլբուլն  
իմ, դուն վարթն իս».

Ինձ դիր օսկե դափազումն, շաքարով  
բաղամն իմ ուզում:

21

Էրկու գիղի միչտիդումըն սար է, կոսին,  
ճշմարիտ է.

Բաղըտ լիքը ծաղկած ծաղիկ-ծառ է,  
կոսին, ճշմարիտ է.

Բաղիտ ճամփին բլբուլներու շար է,

կոսին, ճշմարիտ է.

Շատ էրգըրնիր-ծովեր տեսա, վուրը

կոսին, ճշմարիտ է.

Միրուն է Չին թաքավուրի քուրը, կոսին,  
ճշմարիտ է:

Ձեռ մեկնեցի, ծակծրկեցիր մոշի փշուտ  
քոլի նըման.

Մատներեմես արուն կաթից,

կարմրագուն լալի նըման.

Յիս էս ցավին չիմ դիմանա, սիրտս էլավ  
մսխալի նըման.

Ինչ քիզանից հիռացիլ իմ, աչկիրըս էն  
ալի նըման.

Աստված վրկա յիս նընգիլ իմ հուրը,  
կոսին, ճշմարիտ է:

Ա՛յ շավարդեն, ի՞նչ իս թոչում մե  
քերթած աղվեսի համա.

Կըտուց ունիս՝ օցերին՝ մահ, աչկիրըտ  
ալմասի նըման.

Հընի էդիվ թել մի՛ բանա, դուն թո՞ի նո՛ւր  
վուրսի համա.

Ինչի՞ նըստած, հա~ լաց ըլիմ, մե դարդի  
չէ՛ տասի համա.

Իմ ցավեն դուս քըսան ցավ էլ նուրը  
կոսին, ճշմարիտ է:

Ով գալիս է տիղ ին բանում, խիլքի  
վըրեն նուր ին դընում,

Սրտի մեչեն նիտ ին քաշում, վըզին  
սրփած թուր ին դընում,

Փչանում է, յա փթում է. իժում, վարար  
ջուր ին գըցում,

Յա մե ջաղցի քարով ծածկած հեստի  
ջըրի հուր ին գըցում,

Վուր ընգնողն էլ դուս չի գալի, խուր է,  
կոսին, ճշմարիտ է:

Ճամփես կորավ, ասի դուս չեկա, ծովի  
ծածկած խուր տիլի պես,

Հիմի վախով թանն իմ փրչում՝ լիզուս  
վառից տաք շիլի պես.

Մինչի կեսըս փոսի մեչն իմ, միչեն  
կոտրած հին քիլի պես.

Ձեռ վի կալեք, խունացիլ իմ մինձ ջուր  
նընգած քիչ լիլի պես.

Սայաթ-Նովուն Գուրգեն խանի դուրը  
կոսին, ճշմարիտ է:

22

Էնենց մարթ կա, փչես, տիղում վեր  
կընգնե՝

Ղոչաղ մարթու ուժն ու հալը կու փտնե,  
Ջիբում մե քոռ, ժանգուտ դանակ չիս  
գտնի՝

Խորասանու սուր խանջալը կու փտնե:



Մարթ էլ կա, վուր չունէ օջախ ու բինա,  
Մուրը նընգնի չի իմանա ուր գընա.  
Հնդու խուրմեն կը գիդենա կադին ա՝  
Բադ մտնելիս, հասած բալը կու փտնէ:

Մէ ուրիշն էլ ծով կու մտնէ նավի պես,  
Գորտըն աչկին կերելա ածդահի պես.  
Մարթ էլ կա, վուր չուլում թրչված հավի  
պես՝  
Իրենց տանը Ռոստոմ-Չալին կու փտնէ:

Չոբանըն ի՞նչ կոնէ ալմաս-ջավահիր,  
Ուրախ կուլի՝ միշտ ունենա նուր  
պանիր.  
Բալիշը քար, միչկին կապած մի  
քանդիր՝  
Բեքտաբեգի քիրման-շալը կու փտնէ:

Խոզըն ի՞նչպես կանա ծառը բացրանա.  
Էս աշխարում չար մարթ պիտի չմնա.

Մայաթ-Նովեն յիփոր մեջլիս կու գնա,  
Քեֆ կու սիրե՝ դալմադալը կու փտնե:

23

Ով հարեւնին բարի աչկով կու նայե,  
Հարեւանն էլ չի լի խային, անբարի,  
Չար մարթն էլ միշտ մարիփաթից զուրգ  
կուլի,  
Լավ ծնուղքին ուշունցով կու զարթարի:

Մարթ կա, ճիճվի պես սողալով կու գնա,  
Միշտ բերնումն օցի լիղի կունենա.  
Չարի ցավը չարութենից կու մնա.  
Էս առած է, յիս ինձնից չիմ հնարի:

Նամարդ մարթը մե լեշի բաբաթ կուլի,  
Նրա գլխին գդակն անսազ զարթ կուլի,  
Ով էլ մարմնով ուղտի պես անհարթ  
կուլի,

Ծուռ վիզը թող հա~ կարմնջին  
հարմարի...

Կավե ջամբն վունց կուլի մե թանգ չինի,  
Ամեն ծառ էլ կըլեպ չի տա դարչինի.

Սայաթ-Նովուն պահե, տընետ դուս  
չըլի՝

Նրա պես դուլ դուն կինքումըտ չիս  
ճարի:

24

Քո'ւո, դուն կոսիս պիտուրվիլիս  
Արագով՝

Յիս քու սիրըտ չիմ իմանա իմ սագով.

Դիբա ու զարբաբ իս - զարով գուլգագով.

Աչկ ու ունքըտ դալամ քաշած հավասով.

Յիս ի՞նչ ունիմ, վուր տիսըտ գամ թանգ  
մագով:

Մարթ կա կինքը գինու թասումն է  
տեսնում.

Էնենցն էլ կա՝ քեփերում ու մեջլիսում.

Իմ լիզունն էլ ազատ խոսիլ է ուզում...

Միրտըս լալով աղաչում է ու ասում,

Ա՛յ ձիու ճանջ, վարթըս թող ինձ, իմ  
արզով:

Քու թարիփըն ծովի չափ դավթար կուլի.

Քու տեսնողըն մեքաշ սարեսար կուլի.

Աջա՞բ ամեն մարթ վուր ուզե, յար կուլի.

Տիսուտ կարոտ մեկը չէ՝ աշխար կուլի.

Ամբի տակենն դուս եկ, ա՛րիվ, քու

նազով:

Է~յ Բաղդադի կրռունկ, էրնեկ ըսպասիս,

Հնդստանի թուրթի դուշի պես խոսիս.

Ինչ կուլի վուր մե գամ էլա ինձ լըսիս,

Փահրադի-Շիրինի կինքի դուն վայիս.

Ա~յ չար միջնուր, ինձ մաշեցիր քու  
ջագով:

Վա~յ քի, թե վուր նարդու մե շարքը  
քաշիս.

Մարդին մորթիս, նամարդի կինքը  
բախշիս.

Բլբուլ լացացրնիս, վարթից հուտ  
քաշիս...

Կինքըտ էրնեկ մե մարթի համա մաշիս,  
Ա'յ դու անբախտ Սայաթ Նովայ  
թավագով:

25

Ինչ իմանամ, յիփ կուլի ինձ մոտ գալլու.  
Ի՞նչ արիր էն կարմիր վարթն աննրման.  
Ասի էրնեկ բացվե միչկիտ քամարը.  
Մե հարցըրեք, թե ի՞նչ ասի էլ սրբան:

Ծովի նրման գժվիլ իմ, լա՛վ իմացի,  
Վուր մըտիլ իս բախչեն, մե տի թաք  
կացիլ.

Այ սուտասան, էլ ինչի՞ ինձ խափեցիր.  
Յիփ կուլի վուր ինձ հիդ խոսիս մե  
բերան:

Լիդնուրթ է պետք՝ ջըրեն հանե  
մարքարիտ.

Արիվ գուզինք, կարոտ ինք վառ  
դիդարիտ.

Ով քի տեսնե, մե բաշ կուլի սարսարի,  
Թե վուր ինձ պես սիրտը բանա քու  
դըռան:

Մե պատվական օսկե մատնու ակ իս  
դուն,  
Քու վըզով ու վըզնոցով մե հատ իս դուն.

Սայաթ-Նովեն իմ յիս, չըլի ատիս դուն,  
Ուրոր գընաս, պիտի հիշիս դու նըրան:

Էս թեջնիսը թարգմանված է թաթարերենից  
(այսինքն` հեղինակը վրացերենի է փոխադրել  
իր աղբրեջաներեն այս խաղը). Օհանի ծանոթ.:

26

Արի, գոգալ, բախչեն գընանք ման գալու,  
Բաղն անուշ է, վարթն անուշ է, ծառն  
անուշ.

Խոսկ տուր մինչ լուս էնտիդեմեն դուս  
չգանք,

Լուսնյակն անուշ, օրն անուշ, դիդարն  
անուշ:

Գինին խըմինք, լավ արաղըն էլ մերն է,  
Սազանդար ու մեջլիս, սաղին էլ մերն է,  
Եկ, բաղմընչուն քըշինք, բաղըն էլ մերն

է.

Քեփն անուշ է, ժամն անուշ, նուբարն  
անուշ:

Վարթը բացված, բլբուլը խիստ լաց  
կուլի,  
Հալբաթ վարթին չար խարը նստած  
կուլի,  
Սէյրանգահում մանիշակ փրոզված կուլի.  
Ջուրն անուշ, ընգիրն անուշ, դիարն  
անուշ:

Քի սազ գուքա, ծեքի գունքի ծիրանին,  
Չինար ծառը բար է տըվիլ ծիրանի,  
Մայիս ամսին վուխչը կուտան երանի,  
Հուտն անուշ է, սիրտն անուշ, դիլդարն  
անուշ:

Սայաթ-Նովեն իմ, ուժըս ձայնիս մէջն է,  
Ե՛կ, փրոզիլ իմ խորասնու խասս խալիչեն.



Հիռու մընասս էն միջնուրի չար աչկեն.  
Սագն անուշ է, տերն անուշ է, յարն  
անուշ:

(Ուչլամա):

27

Ինձ սպանիր, պըրծնիմ, ա՛յ սիվ  
ծամավուր.

Յադութ-ալմասս ու ջավահիր, լալավուր,  
Ջառ ու զարբաբ, սիրուն գործած,  
շալավուր,

Ղալամ քաշած սիվ ունքիրով,  
խալավուր.

Մոշի նըման աչկիր ունիս՝ սիվավուր:

Դուն համաշա վունցոր թագա մե  
նուբար,

Էս աշխարում ել ո՞վ կա քիզ բարեբար.

Խոսարովի թախթ, Տրթադի ցիդի դու բար,  
Վուխչ աշխարը դավ իս շինի քիզ  
համար`

Հա~ վառում իս, ա'յ դու չախմախ-  
քարավուր:

Ասի` գինի լից քու ձեռով էդ գոված,  
Մե բաշ սուփրեն հավաքեցիր խըռոված.  
Տես ինչպես եմ էշխետ էրած-խորոված,  
Նիտի պես էլ մի թըռցնի ջիգըրված,  
Ա'յ դու ռուսի թաքվուրի պես գորավուր:

Սայաթ-Նովեն խոսկ է ասում հին ձիվով.  
Չիս սպանում, բայց դադում իս քու  
ձիռով.

Օրըս գիշեր արիր` սիրտս խանձիլով.  
Բադումըն բաց կուլիս հարփած վառ  
սիրով,

Վունցոր ալ-վարթ, սուր փըշավուր-  
փոթլավուր:

28

Դրախտեն էլած մե աննըման վարթ իս  
դուն.

Գուզիմ սուփրիտ վըրա ըլիմ մազա յիս.  
Չինար բոյով, տիսքով, կինքի գարթ իս  
դուն,

Էն ի՞նչն է, վուր մաշից, շինից վազնը  
քիզ:

Ի՞նչ պատահից, ինչի՞ պիտի տըխուր  
լաս.

Ի՞նչ կուլի վուր քու ավհալից մե լուր  
տաս.

Էրնեկ օրից մե օր հիշիս, ինձ հյուր գաս,  
Ճամփիտ փիանդազ դառնամ, վուր  
սազա քիզ:

Աչկիրըտ ին ավմասնիր՝ յաղութումըն,  
Շուխակ ին տալի, ունքիրուտ տակ,  
մութումըն.

Դուն ակնակապ ջիղա՝ օսկե դութումըն,  
Վայիլ է սիրմա-արծաթե ռազա քիզ:

Քիզ դուրեկան կաքավի սասն ըլէի.  
Ձիռիտ բըռնած բըրուլե թասն ըլէի.  
Ախըր ամեն բանով դուն կաս գովելի.  
Արծիվ տիղըտ ինչը շինից բազա քիզ:

Էշխըտ վառից, նուր կըրակի տիղ  
չունիմ.  
Աղաչում իմ, ուրիշ ճար ու դիղ չունիմ.  
Սայաթ-Նովեն կոսե՝ վուչ մե միղ  
չունիմ,  
Հերիք էրիս ու տաս էդքան ջազա միզ:

Ինձ ավատա, ուջերավլէ բառ թե կա,  
Շատ հասարակ էրկաթի համա կոսիւն.  
Փետե ամանն ինչքան էլ օսկեջրրես,  
Նըրան էլի մե վառվող պի'նա կոսիւն:

Խոսկըտ ասա կարքով - հավասար  
գոլով.

Սատանա է, ով ծածկվի ծըխի տոլով.  
Կամ գունքովըն կու ճանչնան կամ`  
փոթոլով.

Ամեն խոտի յի<sup>օ</sup> փ է, վուր խի'նա կոսիւն:

Զարբաբը թե մաշվե, գընա առ շալըն.  
Վայ խամին, վուր վընաս կու տա  
լըվալըն.

Տոլին սազ գու քա ալմասըն ու լալըն.  
Կեղծ օսկուն է, վուր մարթիք մի'նա  
կոսիւն:

Մարթ կա կոսե՝ ազնիվ ցիդի զարմն իմ  
յիս.

Ուռենին էլ կոսե, մարխի ծառն իմ յիս.

Վըրաց թաքավուրի սազանդարն իմ յիս,

Ինձ Սայաթ Նովայ -Արութի'նն ա,

կոսին:

30

Արթար դասե, չէ՞ վուր թաքավուր իս  
դուն,

Վրաստանում տեր ու գորավուր իս դուն.

Մեկն ինձ կոսե՝ «գընա մաշված շուր իս  
դուն»,

Մեկն էլ կոսե՝ «մե հոտած ջըրիուր իս  
դուն...»:

Վուչ հարսնախոս ունիմ, վուչ էլ  
կողակից,

Մեջլիսումն էլ նուր իսաղք արին,

ծաղրեցին.

Յիս ուսմիկ իմ, ինձի վուխչ-վուխչ  
թաղեցին.

Ո՞ւմ առաջ էլ սրտիս ցավը մաղեցի,  
Վուխչն ինձ ասին՝ «մե անպատիվ հյուր  
իս դուն»:

Սազը քոքած, ձեռիս բռնած, հազըրված,  
Թաքավուրի մոդ գընացի զարթըրված.  
Ինձ յիդ տըվին, վունցոր փուշըս  
կոտըրված.

Էրնեկ լիզուն չիմանայի յիս նըրանց.  
Ասին՝ «գընա, էրեսըտ սիվ մուր իս  
դուն»:

Աստծու կամոք մարթըս օղորմած պիտի.  
Սարն էլ սարին կու հանդիպի, ով գիտի.  
Է՛րնեկ մենակ ինձ ծեծելով խըրատիր,  
Կամ քո ձիռով ինձ յիդ տայիր,

անպատվիր,

Իմ հոքեւոր մինձ ծնուղքը վուր իս դուն:

Թեգուզ ջարթին, ջանըս փետով վեր  
հատին,

Շունչըս բիրնիս յիս ինձ քիզնից չիմ  
զատի.

Ծովը կընգնիմ, թե վուր Քուռն ինձ  
ազատի...

Սայաթ Նովայ , քու լիզվովըն ցավ  
դատի,

Հալբաթ դարդ ու ցավի մե ախպուր իս  
դուն:

31

Ձեռը վի կալ, վադ մարթութին չիմ  
ուզում.

Էս աշխարում փարթամութին չիմ  
ուզում.



Վաղ բան ասիլ, յա վաղութին չիմ  
ուզում,

Յիս մարդ մարթ իմ` նամարդութին չիմ  
ուզում...

Յիս ոամիկ իմ` թավաղութին չիմ  
ուզում:

Ե'կ, մի' վիթի իմ արունըս թասերով.  
Թանգ առած իմ քու ահագին ծախսերով,  
Մողըստ գու քամ իրանական ծեսերով,  
Դուն ինձ պահիր ատլասով ու խասերով,  
Սիվ կաբայում սըքվուրութին չիմ ուզում:

Ասածնիրըս քիզ համա ճիշտ թուղ ըլին,  
Փեշիցըս էլ ինձ բըռնելու տիղ ըլի.  
Իմ գըլուխըս քու վուտի տակ խուղ ըլի,  
Բաղըս բաղիտ կից ու միատիղ ըլի`  
Արանքըն պատ` բաժանութին չիմ  
ուզում:

Դովրանեմէտ ընգար, ավա~ղ, Սա'յաթ-  
Նովա.

Էլ ի<sup>օ</sup>նչ կոնիս հա «աիս ու վաիս», Սայաթ-  
Նովայ ...

Ուրիշները կուլին ուրաիս, Սա'յաթ-  
Նովա,

Ե'կ, մի' գընա գըլուիստ կաիս, Սա'յաթ-  
Նովա,

Աղ ու հացիստ աիսպերութին չիմ ուզում:

32

Իմ խիղճ գըլուիս, քիզիդ էս ինչ  
պատահից,

Վուիսչ աշխարում ծաղր ու տընագ քի  
պատից.

Ուրոր փախար, էնթի բախտըս սոթ  
տըվից,

Վիրչումն էլ տի'ս, թե վո<sup>օ</sup>ւնց բեդովլաթ  
էլար.

Դե էլ յիս ո՞ւմ միող դընհիմ, ինչի՞ց էլավ.  
Էս ամենըն հենց իմ էս խի՛լքից էլավ:

Աշխարումըս դուն պատվական ու  
գոված,  
Շուշի նըման օսկե դուրթումըն պահած.  
Աջաբ, հիմի դուն ժեռ քա՞րից իս շինած.  
Հանկըրծակի էս ի՞նչ արին, ի՞նչ էլավ.  
Դե էլ յիս ո՞ւմ միող դընհիմ, ինչի՞ց էլավ.  
Էս ամենըն հենց իմ էս խի՛լքից էլավ:

Թաքավուրաց կամքով մեջլիս  
կանչվողիս,  
Թավադներուց միձըրվող ու հարգվողիս,  
Կարմիր կաբան արք ու փառքով  
հաքնողիս  
Աբիդայի սիվ քուրձը բաժին էլավ.  
Դե էլ յիս ո՞ւմ միող դընհիմ, ինչի՞ց էլավ.  
Էս ամենըն հենց իմ էս խի՛լքից էլավ:

Բըրինձ էի, գարի դառնալն ինչի՞ս էր,  
Յիս աղավնի, նուր լոր դառնալն ինչի՞ս  
էր.

Ա'սեք, կըրունավուր դառնալն ինչի՞ս էր.  
Վայ թե դա հենց իմ անբախտ օրի՞ցն  
էլավ.

Դե էլ յիս ո՞ւմ միղ դընիմ, ինչի՞ց էլավ.  
Էս ամենըն հենց իմ էս խի'լքից էլավ:

Հիմի էնթի, հիռվում, սելիր ին լրծում,  
Փռանգըստանու բերած սազիր ին  
ածում,

Ալթմիշլուղը սանթուրի համա գըցում.  
Իմ տունըս էլ էսօր վուր էս խուցն էլավ,  
Դե էլ յիս ո՞ւմ միղ դընիմ, ինչի՞ց էլավ.  
Էս ամենըն հենց իմ էս խի'լքից էլավ:

Սայաթ-Նովուն դուս մի' անի՝  
պահպանի,

Էլ չի գընա Շահի մողն ու՝ Սուլթանի.  
Նա միր սուփրի գարթն էր, գոված-  
անվանի.

Փետե սագով նա գործ տեսավ էնքան  
լա~վ...

Դե էլ յիս ո՞ւմ միղ դընիմ, ինչի՞ց էլավ.  
Էս ամենըն հենց իմ էս խի'լքից էլավ:

(1775-1777)

## Թաթարերեն խաղեր

1

Էշխի ծովի միջեն հանած լալ ու գոհար է  
բիռըս.

Միպտակ, կանանչ, խաս ու դումաշ, գար  
դալամքար է բիռըս.

Օչով ռանգըն չի հասկանա՝ ուրիշ  
թահար է բիռըս.

Աչկ ունեցող չտեսնողին ահ ու դահար է  
բիռըս.

Հիլ ու միխակ ու զանջափիլ, սաբր ու  
դարար է բիռըս:

Ինչքան ուստադ կա աշխարում, թուղ  
հավաքվին թամաշի,

Հընդըստանից դալամքար գա, մաթ կու  
մընա իմ նախշին:

Մաթ կու մընան իմ մարջանին, իմ  
ակներուն անհաշիվ.

Դիբա ու ենգիդունյա է, սեյր արեք իմ  
դումաշին,

Սիրմա թիլով չինչին արած, զարբար ու  
զար է բիռըս:

Բիռըս էնքան մինձացիլ է՝ փիլը տանիլ  
չի կանա.

Վուչ մե սարափ մե հատ լալիս գինը

ճարիլ չի կանա.

Ամեն հուջրիս հազար կապ կա, էլ բաց  
անիլ չին կանա.

Սելավ էլ գա, սրտիս քուրեն էլի մարիլ  
չի կանա`

Աստծու սիրուն չմոդենաք` կու վառե,  
նար է բիռըս:

Է~յ աղանիր, վախում իմ յիս  
թալանչեմեն ու գողեն`

Բիռըս մե մեկ բաց իմ անում, շանց իմ  
տալիս էկողին.

Իմ գըլուխըս մատաղ ըլի առնողին ու  
չառնողին.

Համն ու հուտըն աշխարք բըռնից, խիստ  
դուր գու քա խըմողին`

Դռշաք, շարքաթ, նուղլ ու նաքաթ, դանդ  
ու շաքար է բիռըս:

Ժեռ քարհորն ալմաս դառնան, աչկըս  
վըրեն չի մընա.

Թե մարթիք իմ տիսըն չը գան՝ ուրիշի  
մոդ չիմ գընա.

Հեստի էշխի կըրակ ունիմ, ինձ մոդենալ  
չին կանա.

Սայաթ-Նովուն չը հավատաք, չուն իսկը  
էս մեկըն ա,

Չըլի թե արեւուն դընիք, կու հալվե՝  
ձյուն է բիռըս:

2

Ծովեն էլաճ թանգ մարքարիտ ու  
մարջան՝

Գինըտ լալի ու գոհարի արանքում,  
Լիզուտ միդըր, յա՛ր, բերանըտ մե  
փընջան.

Պռունգնիրըտ նուշ՝ շաքարի արանքում:



Գո՛ղալ, ա՛րի, պատճառ մի դառ իմ  
մահին,  
Ակըռքնիրըտ՝ մարքարիտ ու շիրմայի.  
Մազիրըտ է շարքաք, զուլփըտ՝  
սիրմայի,  
Պատկիրքըտ է շամս՝ դամարի  
արանքում:

Սարի սիրուն կաքավի իս նըմանած.  
Ծոցիտ բաղում քաղցըր շամամ կա  
ցանած.

Հենց իմացա հաղիդաղից է հանած  
Բարակ միչկըտ, թիրման շալի  
արանքում:

Փռանգի զառ իս շահի բաժից  
փախցըրած.

Մանիշակ իս բեհիշտ-բաղումըն ծըլած.

Չալ աչկիրըտ վարթ-կոկոնից բաց էլած,  
Ղուշի ջիղա՝ ներկած ալի արանքում:

Էս կըրակըն էշխի քուրիցն իմ առի,  
Սըրտիս խոցը յարիս թիրիցն իմ առի,  
Սայաթ-Նովեն կոսե փիրիցն իմ առի...  
Բութես դուն իս ընգի փալի արանքում:

(1742)

Էս դափիան Արութինի ասած է, ով որ սովորի  
թողութին շնորհի, ամեն.

Յունիսի 1-ին, քրոնիկոնի 430 թ.:

3

Թե վուր նազլու յարի խալըն հարցընիս՝  
Մե խալն արար-աշխարին է բանդ արիլ,  
Մեկըն էլ, վուր արժե Իրան-Թուրանին,  
Իրա անճար, խիղճ յարին է բանդ արիլ:

Մեկը բանդ է արիլ ծով ու օվկիանին,  
Էն մեկելը վուղճ դունիայի բինային.  
Մեկը բանդ է արիլ Գումուշխանային,  
Մեկն էլ ի՛րա մադանին է բանդ արիլ:

Մեկը բանդ է արիլ հարամ-հալալին,  
Էն մեկելը՝ սարում սիրուն մարալին.  
Մեկի մոդ չին նայի յադուր ռու լալին,  
Մեկն էլ անգին գոհարին է բանդ արիլ:

Մեկը բանդ է արիլ ճամփուրթ  
բանդային,  
Մեկն աշխարի ամեն յանի սավդային.  
Մեկը՝ Թիփլիզ քաղկի հայտնի  
մեյդանին,  
Մեկն էլ յարի ջանանին է բանդ արիլ:

Մեկից պայծառ աստղ ու արիվ  
կամանչին,  
Մեկն էլ կառնե դունյի շատին ու քրչին...

Մեկն՝ աշուղի բլբուլ լիզվին, քամանչին,  
Մեկն էլ Սայաթ Նովայ յին է բանդ արիլ:

Էս Արուֆինի ասած է. խալի վրա-յարանա:

4

Նազլու յարըս հաքած ունե գառը լիբասի  
վրա.

Պռունգնիրըն էն տեսակ ին, վուր շաքար  
քսի՝ վրա,

Նաղաշքարին ասի, թէ սիվ խալ տա  
էրեսի վրա.

Ակըռքնիրը՝ լալ, մարքարիտ, սարքած  
ալմասի վրա:

Գովականըս ինձ խիվցըրից, գժվեցրից  
մեքաշ ինձ.

Ուշկ ու միտկս իրար շաղից, խիլքս  
գլխես դուս քաշից.

Աղաչեցի, յի՛դ չղառավ, հոքիս ջանումըս  
մաշից.

Աչկերեմես արուն կաթից էն չինի թասի  
վրա:

Գիշեր-ցերեկ մտկի ծովում, ցավը  
սիրտըս հարիլ է.

Նստած էշխի հրեղեն ձին, յարըս խիլքս  
տարիլ է.

Հաքած կանանչ, կապուտ, կարմիր, ի՞նչ  
լավ էլ հարմարիլ է,

Զար ու զարբար, իսս ու դումաշ քաշած  
ատլասի վրա:

Ցրիվ տված սիվ մազիրը քամին չուրս  
յան կու տանե.

Շուռ իմ գալի էշխի հրին, վունց վառ  
շամին փարվանեն.

Թաք վուր յարը սիրտս փշրե, չի՛

ավիրվի, ինչ անե.

Վուր քիզ օտար, աչկ չըդիբջի, հուռութ`  
ան, ասի, վրադ:

Սա'յաթ-Նովա, ա'սա, խո'սե, էշխի  
փեշեն կախվիլ իմ,

Առաչ մտիլ էշխի բազար, լալ յաղութս  
ծախիլ իմ.

Բահլուլի պես էշխի դամումըն քնիլ ու  
միխվիլ իմ,

Էրնեկ ըլի ման գա յարըս, վուր գարթնիմ  
սասի վրա:

Էս իլահին Արութինի [ասած է]:

5

Լիզուն սուտլիկ, սիրտը խային`  
գարունքեն դես չէ գալի.

Կածկածելով ջանըս մաշից, անջիգարըս

չէ գալի:

Գլխոքըս էլ օրթում կերա, էլի կոսիս չէ  
գալի,

Աղաչում իմ, հուր իմ կանչում, նազով  
յարըս չէ գալի:

Գիր գրեցի գոգալ յարին - «յիս քու մե  
դուլն իմ», ասի,

«Գլխիտ շուռ գամ փարվանի պես,  
դարիք բլբուլ իմ», ասի,

«Բախչումըտ շատ կուլի ծաղիկ, ամա  
յիս գուլն իմ», ասի.

Ջանք դրեցի, բաղ զցեցի՝ թագա բարըս  
չէ գալի:

Հաքած կանանչ, կապուտ, կարմիր «յիս  
ուրիշ ոանգ իմ», կոսե.

Իլահի-մուխամմազ կոնե «մե ուրիշ  
հանգ իմ», կոսե.

Կոծե սանթուր ու քամանչա  
«պատվական չանգ իմ», կոսե.  
Մե դժար ճամփի ոաստ էկած, սագա  
բարըս չէ գալի:

Էշխով լի վըրան է խըփի՝ աշուղներու  
բանդն է սա.

Ինձի վառիլ, խորովիլ է, հալբաթ յարի  
անդն էս ա.

Բառը քաղցր, լիզուն շաքար, ի՞նչ  
աննման դանդ տեսա.

Պռունգներուն միդր քսած, մագա բարըս  
չէ գալի:

Զարմըտ գիդիմ, յա՛ր, ծնվիլ իս հուրի-  
փերի մորեմեն.

Մատիտ օսկե մատնիք դրած, ձեռըտ  
կարմիր՝ խինեմեն.

Չանգլու փիրի էս տվածով եկ, խոսինք



աշխարեմեն,

Սայաթ-Նովեն վունց ա~իս չանե՝ գոգալ  
յարըս չէ գալի:

Էս իլահին Արութինի [ասած է]:

6

Էշիսի բաղը մրքով լիքը, ամեն մե բարն  
էստի է.

Հուտը յիրգինք-գետինքն առած, մուշկի-  
ամբարն էստի է.

Մանիշակը նուր բաց էլած՝ վարթ,  
սուսամբարն էստի է.

Գարունքվան վախտըն դիռ չեկած թագա  
նուբարն էստի է:

Հլա ջահել իսիվ իմ, էշխով կրակ մի տու  
իմ հոքին.

Առանց էն էլ ուշկս տարար, անմիղ տիղն

Էլ մի գուքվի.

Վիզըտ մարալ-ջեյրանի է, էլ անտիդի մի  
ձըքի.

Շվաքն արար-աշխար առած սալբի-  
չինարն էստի է:

Կարմիր վարթով լի բախչումըտ  
բլբուլնիր կու թովոան.

Մե գամ տեսա, ջունուն դառա, աչկըս  
մնաց ձիր դըռան.

Յիփոր յարիս նափասն առա, քնած  
տիդըս վեր թըռա.

Սուս մըտիլ է էշխի դովրան, էշխի  
խոնթքարն էստի է:

Յարըս էշխի նիտով խուցից, յարա թողից  
իմ սրտիս,

Աղաչեցի, վուր դիդ անե իմ էս ցավիս,  
իմ դարդիս,

Դիդ տալու տիդ գալումն ասից -  
«տարին մե գամ արի, տիս».

Աշուղներու դաստը մըտած, էշխի  
քափուրն էստի է:

Յարը, կոսին թէ թողիլ է՝ սուտ ասող է  
Սայաթ-Նովեն,  
Ջունուն էլած, սազը ձեռին սազ ածող է  
Սայաթ-Նովեն,  
Թե դարայի ապրանք ունիս, իսաս առնող  
է Սայաթ-Նովեն.

Եկ, բաց արա էշխիտ հուջրեն, գար-  
խըրիդտարն էստի է:

Էս իլահին Արութինի [ասած է]:

7

Յարիս բաղի չորս կուռն առած  
Ման գամ անճար, պտուտ տալով.

Չմբան դարիբ բլբուլ դառած,  
Վարթիս համար պտուտ գալով:

Բլբուլն աչկը թաց, վարթ տեսավ,  
Լիզուն բացվեց - «ախ, վարթ», ասավ.  
Կարոտալի տարու հասավ,  
Աչկը դառավ պուտ-պուտ ալով:

Բլբուլին գրգից գուլշանից,  
Ջուխտ աչկիրըն արնակալից.  
Ախըր քիզ ինձանից հանից  
Մե չար հիմար, պտուտ գալով:

Քու սրտումըտ ինչ կար, մալագ,  
Վուր միզ բերիր էսենց քալագ.  
Միզնից գնաց Չարիսի- փալագ  
Գլուխն անդաթար պտուտ տալով:

Խոսկին հաստատ Սայաթ-Նովեն  
Աշխարն առանց յար ի՞նչ կոնե.

Յիդ դառավ, ի՛նձ դիբավ, ինձմեն  
Գցած քարը, պտուտ գալով:

Թասլիբ:

8

Նազլու յարի նախշը տեսեք, դալամի  
դաշեն բաց էլած.

Մե թիլն էրծաթ, մեկելն օսկի, հուսիրը  
դոշին բաց էլած...

Յա՛ր, վուտըտ դիր իմ էրեսին, վուտիտ  
տակի քուլըտ յիս իմ.

Համաշա քու դռանն ընգած, տուսաղ  
արած դուլըտ յիս իմ.

Արի, մետի բաղըտ գնանք, քու բանդա  
բլբուլըտ յիս իմ.

Աչկիրըտ վունց կարմիր կոկոր, վարթի  
պես շաղեն բաց էլած:

Աշուղներուն ջունուն կոնէ, բլբուլ լիզուն  
թէ բարբառի.

Քիչ է մնում սրտիս շուշեն անջիգարըն  
խփէ քարի.

Պատկիրքըն արիվից վառ է, էնդուր իմ  
դառի սարսարի.

Տեսնողնիրըն ասում ին, թէ էշխի  
կըրակեն բաց էլած:

Ջունուն դառած ման իմ գալի, ուշկ ու  
միտկըս իրար շաղած.

Պռունգներուն քաղցր շաքար, դանդ ու  
նարաթ ունէ մաղած.

Բերնում սիրուն ակըռքնիրը  
մարքարիտի նման շարած.

[Ով տեսնում է, էս է ասում - «Հնդու  
նաղաշեն բաց էլած»]:

Հուտը յիրգիրն, աշխարն առած  
մանիշակի դա'ստին մըտիկ.

Ուզում է թե միզ սըպանե, անողորմի  
դաստին մըտիկ.

Ջունուն մի դառ, Սա'յաթ-Նովա, նազլու  
յարի նաստին մըտիկ.

Չար ու զարբար, ալ ու կանաչ, իսս ու  
դումաշեն բաց էլած:

Դաստա բեդաստա թարփանուր-ի հանգով:

9

Հնդու դալամ քու նախշը չի փչանա.

Մարու բերած զար իս, ռանգըտ է  
կիրմիզ.

Գարնան յասաման իս, փոթլով  
աննըման.

Սարումըն մանիշակ՝ բաղչումըն  
նարգիզ:

Գո՛ղալ, շանց տու քու սիվ խալի  
դուզանին,  
Շող-շափաղըտ չի հիռանում միզանից.  
Վունց սըպանից, վունց սաղ թողից  
նազանին`  
Լողմանի պես ասի, «քիչ էլ, քիչ...»  
ազիզ:

Մարալ բոյըտ տեսնողին տամ երանի,  
Շաքարն ի՞նչ է, հասնե քու քաղցր  
համին,  
Գո՛ղալ, արի, վատ անուն դու մի հանի`  
Մեջլումի պես չոլ մի գըցի անյար միզ:

Զուլփիտ թիլը ջգիլ իմ հանց մե շանա.  
Դուն արիվ իս, յիս էլ մե գուլ -  
սամսանա.

Յա՛ր, էշխեմետ յիս դառիլ իմ դիվանա,  
Բահլուլի պես մնացիլ իմ յիս աջիզ:



Սայաթ-Նովուն չսպանե իր ջանանը.  
Նըրան մատաղ ըլի թող Հնդստանը,  
Ղում, Քաշան, Քիրմանն ու  
Արաղստանը,  
Ամեն ծամին արժեն Ղըբըրգ ու Սակիզ:

Էս Արուօինի ասած է. վարսաղ:

10

Ասեցին, թե Շախաթա'յի, յիս կանչում իմ  
հա~խ, մադա'թ.

Ինչ արնով վուր ներկված ըլիս, էդ գրած  
կուլի հալբաթ.

Փերիներու էշին ընգնողըն իր խիլքը  
քամ կու տեսնե.

Օրը մեկ է, ցավը` հազար, դալն էլ շատ  
գամ կու տեսնե:

Շատ անուս մարթ էշխի կնգնե՝ խոսկը  
խոսկին չի կապի,  
Վարպետին ով աշկիրտ չըլի, վիրչումն  
դամ կու տեսնե:  
Կողըտ քըսի փորձաքարին՝ սարրափը  
դալքն իմանա.  
Գուզիմ սիրտըս շանց տաս, տեսքըտ  
ամեն մարթ հա~ կու տեսնե:

Անգաճ արեք, աթամորթիք.  
Վուչ սիվ բուրթըն ալ կուլի,  
Վուչ սոնեմեն կաթ կու կթվի,  
Վուչ արաբին խալ կուլի.  
Վուչ ծըտերին գոհար կուլի,  
Վուչ ակոավին լալ կուլի.  
Վուչ ծառերին շուշա կուլի,  
Վուչ էլ ուղտին նալ կուլի.  
Վուչ թրթուռն աբրեշում կուտա,  
Վուչ սիվ ճանջին պալ կուլի.

Վուչ հարամը հալալ կուլի,  
Վուչ էլ ջահնամ կու տեսնե...

Վուչ աչկերիս քուն է գալի, վուչ զարթուն  
իմ աշխարում.

Կինքում էսքան բաներ կուլի, Սայաթ  
Նովայ 'ն կու տեսնե:

Էս դիվանին Արութինի ասած է:

11

Վունց վուրսնուրթի ձեռից փախած մե  
մարալ.

Համ ամոթով, համ արով յարն է գալի.  
Պըռունգնիբըն միղըր, սիրուն չանին  
խալ,

Միչկըն օսկե քամարով յարն է գալի:

Ման իմ գալի, սիրտըս էշխի մեչ վառած,  
էշխի փուլադ զինջիլի տակ դուլ դառած.  
Աշխարով մեկ շուղքըն արիվիցն առած,  
Կերպարանքը դամարով յարն է գալի:

Ինքը հրիշտակ, բա մոր շնուրքը տեսեք.  
Մարքարտի պես ակոռեքի շարքը տեսեք.  
Ձեռի սանդրը, ծամի օլորքը տեսեք,  
Սիվ գուլփիրըն շահմարով յարն է գալի:

Դռշիս վրա յարըս էշխի նիտ ցըցից,  
Ջունուն արից, սրտիս միչըն հուր լըցից.  
Բուք ու բորանն անմիղ հոքուս մեչ  
գըցից.  
Ջըմովան պես զահմարով յարն է գալի:

Հուսըն՝ սմբուլ, գուլփըն պատկիրքին  
վայիլ.  
Ըստիղծված է իսկը գոգալին դայիլ.

Ռափիղ Սայաթ-Նովեն դառավ հրմայիլ,  
Շուրը դալամքար՝ գարով յարն է գալի:

Էս դափիա է. Արութինի ասած:

12

Ղարիբ իմ, արուն իմ լալի  
Դժար դարի հանդիբելով.  
Տեր իմ կանչում կսկըծալի,  
Կինքում չարի հանդիբելով:

Քու ձեռով գինին խմեցի,  
Վաթանեմես ձեռ քաշեցի,  
Փարվանայի պես էրվեցի  
Հուր ու նարի հանդիբելով:

Վաթանեմես յարն ինձ հանից,  
Ղարիբ տիղում սիրտս հալից,

Փահրադի պես ցավն ինձ կալից  
Մե մինձ դարի հանդիբելով:

Վուրսնուրթի պես չուլից ընգա,  
Սոնայի պես գուլից ընգա.  
Բլբուլի պես գուլից ընգա,  
Փուշ ու խարի հանդիբելով:

Սայաթ-Նովեն իմ էշիս արած,  
Էրեսըս ճամփիտ փարշ արած.  
Կինքիս կանանչ թաղն ավիրած,  
Անսիրտ յարի հանդիբելով:

Էս թասլիբն Արութինի ասած է:

13

Փոշման կուլի, ովոր յարի անուն տա՝  
Դարդըս հավաքվիլ, մե ամբար է դառի.

Տեսա աշխարհի զարթ, տեսա նովջիվան,  
Տեսա նազլուն շամս ու դամար է դառի:

Ամեն գուլփը մե մե օլրած նիտի պես.  
Ակրոքնիրըն յաղութ, մարքարիտի պես.  
Փահմով անջախ ճանաչիս, թե  
հանդիրես.

Չինի տեսքը, տեսա, ջամար է դառի:

Տեսա բոլրած լուսնակի նրման կանգնից:  
Արիվի պես շուղքըն գրցից, յան  
կանգնից,  
Թերթերուկին ալմասի պես բան  
կանգնից,  
Ջուխտ աչկիրըն տեսա, խումար է  
դառի...

Էշխի փերուն տեսա, խիլքըս պակասից,  
Աչկըս փակվից, արտասունքըս վեր  
հուսից.

Արիվ դառած էն յարի պայծառ լուսից,  
Սայաթ-Նովեն, տեսա, դամար է դառի:

Էս Արուֆինի ասած է շահմոհրրլա-յարանա:

14

Դուն համաշա աշուղներու փիքրին իս,  
Քու վառ ամալեմեն վառած իմ, վառած:  
Արեգագի նման շուղք իս գըցում միզ,  
Քու մահ-ջամալեմեն վառած իմ, վառած:

Մահ-ջամալըս դառած օսկե վարաղով.  
Ձեռիտ ունիս լիքը փնջան` արաղով.  
Յա'ր, չիմ տեսի քի պես խիլքում  
շաղախով.

Թաքուն խիալեմեն վառած իմ, վառած:

Յիս քիզի վունց նմանցընիմ չինարի,  
Չուն չինարըն կըրակումըն կու վառի,



Նախաշրտ փոխում իս հազար մե  
թահարի,  
Ակռեքիտ լալեմեն վառած իմ, վառած:

Յա'ր, քու էշխով դուն իմ սիրտըս վարիլ  
իս.

Ջունուն արիլ, խիլքըս գլխես տարիլ իս,  
Լալ մարքրիտը բիրնիտ հատ-հատ  
շարիլ իս,

Քու էդ սիվ խալեմեն վառած իմ, վառած:

Նազլու յարի մոդ է սիրտըս սիրավուր,  
Դոշիս մեչըն սուր-սուր նիտիր  
թունավուր.

Սայաթ-Նովեն իմ յարեմեն վիրավուր,  
Միշտ յարի ձեռնեմեն վառած իմ,  
վառած:

Էս վարսաղն Արուրիինի ասած է:

Նազլու յարը բաց է էլի վարթի պես,  
 Հուսը վարթ է, էրեսը վարթ, իսալը վարթ.  
 Մե վարթին բլբուլ կու սիրե, մեկին`  
 իսար,  
 Աչկը վարթ է, ունքը վարթ, ջամալը  
 վարթ:

Թե վուրսնուրթ իս, սարի մարալ դուն  
 բրոնե.  
 Թե սովդաքար իս, սըվթային ձեռ մեկնե.  
 Յարը հաքին խաս-ատլասե շուր ունե.  
 Սիպտակը վարթ, կանանչը վարթ, ալը  
 վարթ:

Գիշեր-ցերեկ աչկես արուն է կաթում.  
 Զալումն ուշկըս տարիլ է մե սըհաթում.  
 Բերնեն լալ է թափում, ինձի իսըրատում.

Բառը վարթ է, լիզուն վարթ, իւրնդալը  
վարթ:

Պատվական տեսնելու նովարփին-աջար.  
Բլբուլին սըպանող թոփ վարթի սաջար.  
Սալբու նըման ամառ ձըմիո կանանչ  
ծառ.

Դոշը վարթ է, ծոցը վարթ է, շալը վարթ:

Գուզիմ յարն ինձ չը գցե իր դիդարեն.  
Գուզիմ էշիսի թըրով սիրտըս պատառե.  
Սայաթ-Նովուն յարի էշիսըն թող վառե,  
Հուրը վարթ է, կըրակը վարթ, փալը  
վարթ:

Արութինի (ասած) վարսաղ է (ուչլամա):

Յիս իմ յարին իլթիմագով ասեցի՝  
Սարքիլն ինձնից, բաղչեն քիզնից, բաղ  
քիզնից.

Թե վուր դեմ չե, դաբուլ կոնե  
բաղմընչին՝

Կտրիլն ինձնից, շամամ քիզնից, թաղ  
քիզնից:

Բեմուրվաթ յար, աջաբ ի՞նչ կա  
դաստումըտ.

Աջալի պես հոքիս բռնած դաստումըտ.

Էշխըտ չեթուղ ժուռ գամ կանանչ  
բաղչումըտ,

Բլբուլն ինձնից, կոնչեն քիզնից, շախ  
քիզնից:

Էշխետ ջունուն, թամամ բեքար իմ  
դառիլ,

Դուն իմ դոշիս լիզվիտ նիտիրն իս

շարիլ,  
Էսքան ցավիրն իմ սրտումն իմ յիս  
տարիլ,  
Դուգունն ինձնից, դամգեն քիզնից, դաղ  
քիզնից:

Պռունգնիրես միդր ու շաքար իս ծորում,  
Քու պատկիրին կարոտ յարին  
չարչարում.

Ինձ էրեցիր էշխիտ վառած հուր-նարում,  
Փարվանն ինձնից, կըրակ քիզնից, շամ  
քիզնից:

Վուրսնուրթ էի, թառլանը բանդիս  
դիբավ,

Մարալին նըշան առա՝ նիտն ինձ  
դիբավ,

Սայաթ-Նովեն ասաց, թե դանդ իս դու  
լավ,

Շարքաթն ինձնից, շաքար քիզնից, շավղ  
քիզնից:

Էսպես յարանա, լավ ուչլամա, Արութինի ասած.  
Ով սովորի թողություն շնորհի. ամեն:

17

Արունը մե կոնեն, ցավը մեկելեն.  
Իմ էս յարեն ազալից է, գոզալից.  
Տակոին սրտիս` դոշիս բերան ունե լեն.  
Իմ էս յարեն ազալից է, գոզալից,  
Գոզալից, յաղի գոզալից:

Մեջլումի պես Լեյլու համա խիվացած.  
Յիս բլբուլ իմ, գոռով վարթես հիռացած.  
Շա'տ մարթ կոսե` դուզուն դաղեն  
սիվացա.  
Ամա իմըս ազալից է, գոզալից...

Հա լալիս իմ, ինձ մե ուրախ օր չէլավ.  
Էս ցավեմեն փախչելու հրնար չէլավ.  
Շատ ման էկա, դարդիս դիդ ու ճար  
չէլավ,

Չունքի յարես ազալից է, գոզալից,  
Գոզալից, յադի գոզալից:

Գրած գիրքս յարիս ձեռը չի ընգնում,  
Ղան դամարքս բաց է՝ կապող չիմ  
գրթնում.

Էնդուր ջարեն վրեն միլամ չի դնում,  
Վուր իմ յարեն ազալից է, գոզալից...

Սայաթ-Նովեն կարթացիլ է մինչի լամ.  
Ախ քաշելեն կորցըրիլ է խիլք ու փահմ.  
Փիլթեքը միշտ դրած՝ չէ կանգնում  
միլամ՝

Իմ էս յարեն ազալից է, գոզալից.  
Գոզալից, յադի գոզալից:

Էս յարանան Շիրվանի հանգով Արութինի ասած է. լավն է:

18

Անդուռ, անհիրթ մե հուջրա է միր  
հոքին,

Միչինը յա ջավահիր է, յա դանա.

Անգետ մարթը չի հասկանա կու կոտրե՝  
Լալ մի ծախի՝ ովոր դադրը չիմանա:

Փառք տուր հազար ու մե անուն  
հազրաթին՝

Գահի դուռը բանա, դամաթ վեր թափի.

Հալալ հերը վունց կու մորթե

գուրիաթին,

Վուրթին միռնի, յիփ սուք կոնե յադ  
անան:



Էս անցավուր միր աշխարը չէ կշռած,  
Աշդութենի քաշը կշիռք չէ քաշած.  
Փիր-ուստադի դահիրը ովոր չէ քաշած,  
Չուրք վուտանի յա մե հորթ է, յա դանա:

Տերն ըստիդից արար-աշխար, կինք ու  
մահ.

Փակ աչկիրով բեյթիրըս չին հասկանա.  
Սայաթ-Նովու հոր վաթանից հարց կու  
տան,

Ասում է, վուր Հալաբն է, յա Ադանան:

Թեջնիս:

19

Կինքըս մընաց դարդ ու ցավի  
ճանգումըն,

Սիրտըն էլ անվիրչ գուգե սուր, Սա'յաթ-  
Նովա,

Աչկեմես չէ պակսում ալ-արտասունքըն,  
Մեկը չասից «մընա լուռ», Սա'յաթ-  
Նովա:

Մատաղ ըլիմ ամոթ արին ինձ տրված.  
Նասիմի պես իմ մորթուս մեջ լքցրված.  
Դե վուր նավըտ խոր ծովին ես  
հասցրած,  
Ղաստ արա, չը լցվե ջուր, Սայաթ Նովայ  
:

Խիվ սի'րտ, անմիղ դարդ ու դամին  
ընգար դուն.

Փարվանի պես վառած շամին ընգար  
դուն.

Վուրսնուրթի պես դե վուր սարիրն  
ընգար դուն,

Մարալ տեսնիս, նիտով տուր, Սա'յաթ-  
Նովա:

Այիփրն ու բիմրն անգիր սովրեցիր,  
Քու գոգալին սագական զառ գործեցիր.  
Կորցըրեցիր յարըտ` խիլքից զրգվեցիր,  
Էլի փառք տուր Աստրծուն, Սա'յաթ-  
Նովա:

Անմահական ջուրն ինձ ջամուս  
տըվեցիր,  
Հուր ու կըրակ քուրես քամուն տըվեցիր.  
Յարսուն տարվա կինքըտ մահուն  
տըվեցիր,  
Խիլքըտ գլխիտ պահիր դուն, Սա'յաթ-  
Նովա:

Էս թեջնիս է:

20

Դոշիս վրա արնուտ դուգուն-դաղ ունիմ,  
դաղ ունիմ,

Աչկս մնաց նազլու յարի տիս գալուն.  
Յարիս համա գլխիս վրա տիղ ունիմ,  
տիղ ունիմ,  
Աչկս մնաց նազլու յարի տիս գալուն:

Բեմուրվաթ, յա'ր, ա'սա, յիս քիզ ի'նչ  
արի, ի'նչ արի,  
Էս խիվ սիրտս էշխի միչըն հասցըրի.  
Բահլուլի պես էշխի դամն ինձ նինջ  
էրիտ,  
Աչկս մնաց նազլու յարի տիս գալուն:

Դարդ է տվիլ, դարդիս դարման չէ  
գթնում.  
Ձեռնեմեն չիմ պրծնում, ցավս չէ  
հատնում.  
Սոնաս հիռու ընգավ գուլից` չէ հասնում.  
Աչկս մնաց նազլու յարի տիս գալուն:

Լիդնուրթ դառած խուր ծովիրում  
մաշվեցի.

Փահրադի պես սարին քըլունգ քաշեցի,  
Մեջլումի պես Լեյլու համար գժվեցի,  
Աչկա մնաց նազլու յարի տիս գալուն:

Միվ ջիգարըս մուռըս թաքուն պահում է.  
Ղան-դամարըս բաց է՝ սիրտըս դողում  
է.

Սայաթ-Նովեն լալով հա ~ նվաղում է,  
Աչկը դրած նազլու յարի տիս գալուն:

Էս լավ վարսաղ է. Արութինի ասած.  
Ով սովորի թողություն շնորհի:

21

Հոքով, սըրտով գուզիմ տեսնի  
պատկիրըտ.

Փարվանայիտ արի, մի վառի դուն նար.

Միվ իմ հաքի յար,  
Ընգիլ իմ **աշխար**.

**Աշխարունս** էլ լավ ու վատ չը մընաց,  
Վուր չասեի լիզվով անողորմ յարին,

Իմ անջիգարին,  
**Լալ ու գոհարին**.

**Լալ-գոհարը** բիրնում շարված տեսա յիս.  
Ձառ մազիրըն ուսին փըրված տեսա յիս.  
Վարթ ու միխակ ձիռին բըռնած տեսա  
յիս.

Արի, դուն սեյր արա կանանչ թաղերուն,

Ծաղկած բաղերուն,  
Ճանանչ **տիղերուն**.

**Տիղ կա**, հոքիս մե ժամ հանգիստ չէ  
ճարում,

Չունքի նա՛զլուս է ինձ վառում,  
չարչարում`  
Անհանգչիլի հուրը սրտիս չէ մարում.  
Տեսա վուր նա անխիղճ մե սրտակեր աս,

Կովի հետ սեր աս,  
Կանչեցի` «մեռա»...

**Մեռնելուս** էլ չի հավատա իմ յարը,  
Չի հավատա, չի հասկանա իմ ճարը.  
Էլ չը մարից սիրտըս էրող հուր-նարը.  
Թե վուր միղըս էս էր, մորթեք ինձ  
թըրով.

Կախեք դանարով,  
Նամուսով, արով.

**Նամուս-արը** փառք ու պատվի հիմքըն  
է,  
Աշուղներու էշխի թասը լիքըն է.

Սայաթ-Նովեն քիզ ի՞նչ արից կինքումըն,  
Վուր դուն նըրան հասցըրեցիր կըսկըծի.

Բազար իս գըցի,  
Փայ չանիս օցի:

Էս Արութինի ասած է. եդագլամա (-  
գինջիրլամա):

22

Խի'վ սիրտ, արի, անգաճ արա  
խըրատիս.

Բարի լիզվով անիծկ տվո'ղ չըլիս դուն.  
Վուչ դուն չարին վագե, վուչ էլ չարըն՝  
քիզ.

Սատանի հիդ ընգիր ըլոդ չըլիս դուն:

Մեյդան մըտիր, թե վուր գիդիս կու  
շահիս.



Փիրի ճամփից թե դուս գաս, կու  
շիվարիս.

Ինքըս կընգնիս, թե ուրիշին հուր  
փորիս.

Պարզն ու լավը կինքում թաղող չըլիս  
դուն:

Մարթ կա իսկը հայվանի պես կ'արածե,  
Դալդա տիղն էլ ծախու գոհար ման  
կածե,

Ամեն մարթու հոքում ասլան քընած է.  
Փուշ կա, աչկըս փակ վարթ քաղող  
չըլիս դուն:

Ամեն մարթ իր սըրտին հավասար կուլի.  
Կեհա իրեն բաբին բարեբար կուլի.  
Ով էլ կինքում քիզ միշտ ամագդար  
կուլի,

Նիդն ընգնիլիս հիռվից նայող չըլիս  
դուն:

Ո՞վ կու հասնէ անց կացած էն մինձ  
մարթկանց,

Միր պապիրի խոսկըն լավ է լալըն  
կանց.

Ծառի վուրթն իր մեչեն կուլի գոյացած,  
Սա'յաթ-Նովա, չար բան ասող չըլիս  
դուն:

Էս Արութինի ասած է. օգութլամա:

23

Քաղցր խոսող, յա'ր, բլբուլ իս ինձ ամա,  
Քու պես փերու գովքըն ո՞վ ինձ պես  
ասից.

Քի տեսնելուց յիս դառիլ իմ դիվանա,  
Խիլքըս թռիլ, ով գիտէ ո՞ւր է հասիլ:

Դուն իմ սրտի սիրու իշխանն իս դառիլ,  
Էշխիտ պեծը ջանըս գցիլ ու վառիլ.  
Աշխարով մեկ ինձ խայտառակ իս արիլ,  
Արի, ասա, թե ոաղիփըն ի՞նչ խոսից:

Ծոցիտ միչին բաղչա ունիս, բաղ ունիս,  
Ձեռիտ օսկե թասը լիքն արաղ ունիս,  
Պըռունգներուտ սաղի ու դոնաղ ունիս,  
Յարաբ տանըտ ո՞վ է խմիլ էտ թասից:

Մատաղ ըլիմ թուխ աչկիրի կամարին,  
Միչկին կապած չարքազի զար  
քամարին,  
Արիվի դեմն առնող սիրուն դիդարին.  
Հաքինը ջեր սադա էր, վուչ՝ ատլասից:

Յարիս ծոցի ջուխտ նոներից վազ անցա,  
Բլբուլի պես վարթի խարից վազ անցա,  
Էն զամանն է, վուր իմ յարից վազ անցա,  
Զուրգ մնացի յարիս ջանից, նափասից:

.....

.....

Էս Արուօինի ասած է. յարանա, լավ վարսաղ:

24

Դարդս շատ է, ասիլ ջիլի աշխարին.  
Արգ իմ գրիլ, թողիլ իսանի ումուդին,  
Արթար կտրի, դիվանըս արթար անի,  
Միդ ունենամ` ինձ տա կանի ումուդին:

Դե վուր արգուհալըս ձեռըտ առար  
դուն`  
Բադեշխանի լալըս դուն իս ու կաս դուն:  
Էս է գրած արգուհալիս իմ թղթում-  
«Կինքս մատաղ յարիս-ջանիս-  
ումուդիս»:

Ժեռ քարումն տակոյի չի տա ալ վարթըն.  
Առանց յիդի կու հանգչե վառ ճրաքըն`  
Ակռավին ինչ պետք է բաղ ու բաղաթըն`  
Բլբուլըն կուլի գուլշանի ումուդին:

Ով հասնում է, գալիս է ծով-ումմանով,  
Իրեն տեսնում ու մնում է գումանով.  
Լավութիւնը ովոր յիդ տա յամանով,  
Կնգնի պատվից ու սեղանի ումուդից:

Միր էս ճամփեն փիր ուստադից միզ  
մնաց,  
Էնդու համա սիրտըս էշխով է լցված.  
Սայաթ-Նովուն հենց վուր տեսնեք  
մահացած,  
Տարեք, թողեք գերեզմանի ումուդին:

1753

Էս դափիան Արութինի ասած է. ապրիլի 20-ին,  
քրոնիկոնի 441-ին:

Դե վուր կոսին էս աշխարս ունայն է,  
 Էնդու համա սոյբաթ սազից վախում իմ.  
 Բլբուլըն վուր թոչե գնա իր բունը,  
 Դարդակ թողած՝ էն դափազից վախում  
 իմ:

Չըլինի թե նիտվանիդըս բոշցընես,  
 Աջալն իսկույն հոքուտ դոնից կնգնե  
 ներս,  
 Կինքիտ թիլը ձեռը կառնե, խաղցընե.  
 [Էդ խաղերից], էդ ջանքազից վախում  
 իմ:

Ուզում է գա կինքիս բինին հասանի,  
 Ամեն անդամ, ամեն դամար կես անի.  
 Խամը թող տա, աբրեշում ու խասս  
 տանի՝

[Վուղչը չառնե, էդ դագազից վախում  
իմ]:

Աջալը գա, ինձ ահուզար կու բերե,  
Հուքմն ունե, ջանիս ազար կու բերե.  
Հինգ արշին կտավը բազար կու բերե`  
Ջոռ սովդաքար էդ բազազից վախում իմ:

Սայաթ-Նովեն կոսե խաթեն հասնում է,  
Միդաուրնիր, գուլումաթըն հասնում է.  
Փառք հախ տիրուն, արթար դատըն  
հասնում է`

Միդքը չափող էն թարազից վախում իմ:

Էս լավ հախանա-դափիա է:

Ով սովորի, բարի հիշի (օղորմի ասի) ամեն:

Մե մարալ վուր ասլանի մորթի մաշկե,  
Էլ խիղճ վուրսնուրթն էնենց ավին ի՞նչ  
անե.

Թե ուզենա փանդով ցանցի մեչ քաշե,  
Յիդ փախչիլիս «հարա~յ-հը~րեն» ի՞նչ  
անե:

Հեստի մարթ կա, խիլքը վուտքի միչումն  
է,

Հիռու քաշված, կինքից խաբար-բան  
չունե.

Օց կա, պոչի ծերը միշտ անգաճումն է,  
Նըրան ջադուքարի դուվեն ի՞նչ անե:

Քոշք շինելու համա լավ միմար պիտի,  
Ամեն բանում շատ լավ խաբարդար  
պիտի.

Աշուղն էլ շատ փորցված քամանդար



պիտի.

Չաղ կըրակին անյիղ թավեն ի՞նչ անե:

Շատ-շատիրն ին ընգիլ յարի հավասին.

Էշխի ընգար, չիս ազատվի էլ բասից.

Շիրինը մաթ մընաց քըլունգի սասին.

Փահրադի պես սար հատանելն ի՞նչ

անե:

Հիմի ո՞ւր է Նադիր-Շահ ու Տեր Ղազար,

Էն վախտի մելիքըն-Աղա Մինիշկար.

Ո՞ւր է Էնենց դիվան, ո՞ւր է Էնենց Շահ,

Չը կան, հո՛քիս, Սայաթ-Նովեն ի՞նչ անե:

Էս դափիա է:

27

Մե գուզիմ, թե ուրիշ յարի թուշ ըլիմ,

Վախում իմ, թե արանքըն բաս գա, գնա.

Յարիս ճամփին կանգնիմ, սիրով սեյր  
անիմ`

Վայ թե չար աչկ, ծաղր ու տնազ գա,  
գնա:

Սիրտս էրից, կրակ ունիս -նար ունիս.  
Հայա ունիս, աղաբ ունիս, ար ունիս.  
Եկ. ինձ ասա, թե վուր ուրիշ յար ունիս,  
Մե գիր գրե, թող վազե-վազ գա, գնա:

Արարիչըն զարմ ու ցիղըտ պահպանե.  
Վարպետ պիտի` սիրուն տեսքիտ գովք  
անե.

Վուրդի էլ վուր նազլու յարը սուք անե,  
Էնթի քաղցր սոյբաթ ու սազ գա, գնա:

Մատաղ ըլիմ քու ջիգարին, ա'չքի լուս.  
Կինքըս առնե թող ժեռ քարին, ա'չկի  
լուս.

Հաստատ մնա քու իղրարին, ա՛չկի լուս.  
Չարի օրըն թող հազիվհազ գա, գնա:

Գո՛գալ, եկ, ինձ մի գըցիր էտ ջանջալին.  
Դոշըս դեմ առավ քու էշխիտ խանջալին.  
Սայաթ-Նովու օրիրըն վուր դինջ ըլին՝  
Պիտի ոաղիփն իր ջանից վազ գա, գնա:

Էս դափիա է. Արութինի ասած:

28

Միտկըտ ի՞նչ է, իմ նազանի, ա՛զիզ յար,  
Չշփոթվիս դուն միր էս խոսկիրեմեն,  
Ախ քաշելեն լիրթ ու թուքս զայ էլավ,  
Արուն-արտսունք հուսից միր  
աչկիրեմեն:

Յա՛ր, գիդիմ, վուր էշխովըտ ինձ կու  
վառիս,

Սրտիս միջին սուր-սուր նիտիր կու  
շարիս,  
Դե ի՞նչ կուլի, բարի աչկով մե նայիս.  
Վո՛ւնց էսքան շուտ հիռացար քու  
յարեմեն:

Առանց ջուղաբ դուն իմ հոքին հանում  
իս,  
Լիմոնի պես հերիք քամիս արունըս,  
Աղաչելուց ջան չմնաց ջանումըս,  
Եկ մի գցի ադաբեմեն, արեմեն:

Տեսնելուս էլ մե բառ էլա չի ասում.  
Քաղած վարթըն էլ նուրմեկանց չի  
բանում.  
Էլ միր բռնած գուրծը տիղին չի  
հասնում`  
Ուժը կորավ միր աղեմեն, սուփրեմեն:

Գուզիմ էշխի մեչ տապակվիմ ու  
խորվիմ,  
Շուռ գամ շամիտ փարվանի պես ու  
վառվիմ,  
Սայաթ-Նովեն կոսե, թուղ լի յիս էրվիմ,  
Թաք քիզ պեծ չդիբչի միր վառ քուրեմեն:

Էս լավ դափիա է. Արութինի ասած:

29

Միղըս մենակ էստում էր, վուր ասի,  
յա՛ր,  
Սըպանում է էդ քու վատ նիաթըն ինձ.  
Էլ չիմացած, թե իմ ջուղաբն ինչ էլավ,  
Ասի, գո՛գալ, տար էշխի գագաթըն ինձ:

Ախըր էշխըն ինձ դեմ արից ժեռ քարի,  
Խայտառակից, կինքըս նիտի փայ արից,  
Ուշկ ու միտկըս տարավ, շինից

սարսարի,

Էլի բաց չէ թողնում վարթ սուրաթըն  
ինձ:

Գուզիմ էշխի քուրումն անվիրչ խորովվիլ  
Բլբուլի պես վարթի շուրջը բոլորվիլ.  
Յարիս շամին փարվանայի պես էրվիլ,  
Վուր սիրուց գատվիլ չտա հախ դադըն  
ինձ:

Գո՛գալ, եկ, աչկիրըս արուն մի լըցի,  
Սիրտըս էշխիտ սուր նիտիրով մի  
խուցի.

Ուրոր գընաս, տա՛ր. էլ չուիր մի գըցի,  
Թե չէ կու սըպանե քու հասրաթըն ինձ:

Յարն ինձ թողից, էլ յիս վունց ուրախ  
ըլիմ.

Չէ՞ նա կոկոր վարթ է, յիս էլ բլբուլ իմ,  
Սայաթ-Նովեն կոսե, թե յիս դաբուլ իմ,

Թաք դրամաթըս բերե իմ հավատըն՝  
ինձ:

Էս վարսաղ է. Արուօինի (ասած):

30

Սիրտս յարա, դոշս դաղած,  
Նազլու յարի գերին իմ յիս.  
Ճիտս գցած, կուռս կապած,  
Նազլու յարի գերին իմ յիս:

Շուղքըն արեգագիցն առիլ,  
Էրեսն շող-շափաղ արիլ,  
Նայվածքով աչկիրս վառիլ,  
Նազլու յարի գերին իմ յիս:

Դաղս բաց է, խուր վերքս բաց,  
Էշխի զինջիլ վիզըս գցած,

Ման իմ գալի ինձ կորցրցած,  
Նազլու յարի գերին իմ յիս:

Վիրավուր ինչպես ծիծաղիմ,  
Մի բլբուլ իմ քըշած բաղեն  
Շենքիտ կապած թուղ նվաղիմ,  
Նազլու յարի գերին իմ յիս:

Բաղումն վարթ, սարում` լալա,  
Քու տեսնողին` դարդ ու բալա.  
Սայաթ-Նովեն կոսե, վալլա  
Նազլու յարի գերին իմ յիս:

Էս Արութինի ասած է, թասլիբ:

31

Անգաճ արեք ձիր ծառայի բանքերուն,  
Միզնից գըլուխ շատ վարպիտնիր էլ չը  
կան.



Չը հավատաք, աշխարհն էյթիբար չունե,  
Շատ աշուղնիր՝ էշիսի դոստիր, էլ չը  
կան:

Քա~նի լիզու լալկից, բարին չը մընաց,  
Քա~նի աշուղ մեռավ, յարին չը մընաց,  
Աշխարը մինձ Իսկանդարին չը մընաց,  
Հուջրեն լիքը զար-զարբաբնիր, էլ չը  
կան...

Հին վերքերս են վախտըն ինձ կու  
մաշին,  
Յիփ դոստիրըս ինձ մե կորած մարթ  
հաշվին,  
Ասկ-բարեկամ մեմեկ հիռու կու քաշվին,  
Ափսուս, մոր արտսունք-պատկիրին,  
վուր չըկա:

Ով գալիս է, աննման իք ասում դուք,  
Հարցընողին ազնիվ ջան իք ասում դուք,

Թե վուր Սայաթ Նովայ յին իք ասում  
դուք,  
Մընաք քա'րով ասից, գընա~ց, էլ չի գա:

Էս հաղանա-դափիա է. Արութինի ասած:

32

Գլխովըտ ման տամ յիս, քու ցավըտ  
առնիմ,  
Ձեռըտ տուր ինձ, նազ ունիս դուն, նազ  
ունիս.

Քու սանդրած հուսիրին, քու ջանին  
միռնիմ,  
Ձեռըտ տուր ինձ, նազ ունիս դուն, նազ  
ունիս,

Ալա գյոզ ունիս:

Յիս քի համա դուլ իմ, դուն էլ` իմ աղեն,  
Գուզիս կու տամ քի հաստատած մե

բաղամ.

Էս աշխարում քանի վուր դիռ յիս սաղ  
իմ

Ձեռքտ տուր ինձ, նազ ունիս դուն, նազ  
ունիս,

Ալա գյոզ ունիս:

Դռչիս վըրա դուգուն կապած դաղ ունիմ.

Քու ծոցըն էլ էն ջաննաթի բաղըն է.

Քանի դեռ քու սիրունության չաղըն է.

Ձեռքտ տուր ինձ, նազ ունիս դուն, նազ  
ունիս,

Ալա գյոզ ունիս:

Դարդըս շատ է, ոչով կեսն էլ չի տանի.

Հիդըտ տար ինձ, քիզի կարոտ մի  
սպանի.

Քանի յիս կամ, ուրիշ խիալ մի անի.

Ձեռքտ տուր ինձ, նազ ունիս դուն, նազ

ունիս,

Ալա գյոզ ունիս:

Փիրից շընուրք առա, սազըս ածեցի.

Կըրակից էլ կըրակ առա, մընացի.

Սայաթ-Նովեն քու ցավին է տիրացի.

Ձեռըտ տուր, ինձ նազ ունիս դուն, նազ

ունիս,

Ալա գյոզ ունիս:

1754

Էս Շիրվանի հանգով յարանա է. Արութինի  
ասած, լան է. Ալեգսանի (?) ասած. մարտի 2-ին,  
քրոնիկոնի 442-ին:

33

Թե վուր քանդա դուլու հալըն հարցընիս.

Գըլուխը թող տա քարին Սայաթ-Նովեն.

Ախ քաշելեն ջանն ու հոքին քայքայից.

Հա գուլա արտսունք-արին Սայաթ-  
Նովեն:

Յար ունենաս, էս խաբարըն չիմանա,  
Թող աչկիրըն չանե նամ Սայաթ-Նովեն.  
Լիզուս ուրիշի մող, միտկըս քիզ վըրա,  
Թող չը դադվե, չանե դամ Սայաթ-  
Նովեն:

Պատկիրքիցըս չը կշտացա դիտելով.  
Բաղ գըցեցի, բարըս մընաց ուտելու.  
Էնքա~ն դարդ սըրտումըս մընաց  
այտնելու,

Կարոտ մընաց ընգիրի Սայաթ-Նովեն:

Տարին վաղ էր, էս հենց վաղ վախտից  
էլավ.

Բլբուլի պես մահըս քու վարթից էլավ,  
Էսքան մուրը քու լիզվից` բախտից էլավ:  
Էշխի ընգավ խիլքը քամ Սայաթ-Նովեն:

Ինչ անիմ, մաշվեցա ահուգարեմեն.  
Միրտըս հալից յարիս ինթիգարեմեն,  
Կու մեռնիմ, յիդ չիմ կենա իդրարեմեն,  
Թող մեռնի քու հուզիրին Սայաթ-Նովեն:

Մե ճար չըկա, վուր քի մոդ գամ, քի  
տեսնեմ,  
Վախում իմ, թե աշխարն ինձ կու  
բամբասե.  
Հույս կա վիրչում, վուր քու յարըտ էլ յիս  
իմ,  
Դե թող քընե խաթըրջամ Սայաթ-Նովեն:

Միրտը բարուն ու արթարին ման գու  
քա.  
Ովոր մեյդան մըտնե, արին ման գու քա,  
Աչկըս էլի գոգալ յարին ման գու քա,  
Թե չե կըրակ կու մադի Սայաթ-Նովեն:

Դուն ինձ ուստա, յիս էլ քի յար, քի  
ջանան,

Ինչ վուր կոսիմ, պիտիս դըրուստն  
իմանա.

Կարքըն էս է, պիտիս վառվի ինձ ամա,  
Չուն յիս շամն իմ՝ փարվանան՝ Սայաթ-  
Նովեն:

Խիվ սիրտ, ցավի ճանգում չորցար-  
խաշվեցիր,

Էշխի ընգար, քրքրվեցիր, մաշվեցիր.

Քիզ մե հայտնի մինձ վարպիտ կու  
հաշվեին,

Ո՞վ ասից, ճամփից շեղվի Սայաթ-  
Նովեն:

Ինչ վուր Նուրի կոսե, յի՛ս իմ քիզ  
ջանան,

Հա~ ախ քաշե, չխնդա թող իմ նանան.

Քիզ իմ սիրում, կանց կու սիրեր  
Շահասանամ:

Բուրթեն փիրից առավ ջամ Սայաթ-  
Նովեն:

7-6-1756

Վարսաղ-յարանա (տե'ս ծանօթ.)

34

Խասս դաշտերում, խասս զարթերով խասս  
ալ ձի,

Թափվում է խասս, վուտքերեն խասս,  
խողըն խասս,

Խասս նազանին, խասս նստել է խասս  
բարձին,

Թամքը խասս է, սարքը խասս, նստողըն  
խասս:



Խաս աշխարում խաս տեղ գթնիմ, խաս  
մընամ.

Խաս սրտիս մեջ խաս հուր-կըրակ, խաս  
ալամ.

Խաս գըրել է խաս գուլիստան, խաս  
դալամ,

Էրկու լյուն խաս, այիփը խաս, տողըն  
խաս:

Խաս աշխարում խաս լավութին, խաս  
փափագ,

Խաս քրտինքով խաս գթնըվիր խաս  
վաստակ.

Խաս եռում է խաս անկըրակ խաս  
կաթսան.

Ջուրըն խաս է, ախպուրըն խաս, եղըն  
խաս:

Խասս յարի հիդ իսաս ապրեինք իսաս  
օրիր,  
Խասս նագանին իսաս հաքիլ է իսաս  
շորիր,  
Խասս հյուրընկալ, իսաս ծառանիր, իսաս  
հյուրիր,  
Կուլկուլեն իսաս, սեղանըն իսաս, սաղին  
իսաս:

Խասս ժամանակ իսաս քանքիրըն իսաս  
գրվեց,  
Խասս ճակտիցըն իսաս քրտինքըն իսաս  
թափվեց.  
Խասս արարչեն իսաս պատկիրըն իսաս  
տրվեց,  
Սայաթին իսաս, Նովային իսաս, ցեղըն  
իսաս:

Էս շահմոհըլու-թեջնիս է. Արութինի ասած:

Ասի՛ գո՛գալ, դարդըս ասիլ չիմ կանա,  
 Շահ-դամարիս միլ տարար, ա~ման-  
 աման.

Քու արածըտ դավթար անիլ չիմ կանա՛  
 Յարալու է սիրտս, ճա~ր, աման-աման:

Մատաղ իմ քու սիվ մազերուն, սիվ  
 ծամին,

Կարոտիլ իմ բարկ էրեսիտ յիս ջամին.  
 Անգրծակի դիբա էշխիտ վառ շամին,  
 Փարվանին մի վառի, նա՛ր, աման-  
 աման:

Արնուտ մարալ իմ, սարեմեն գրգվիլ իմ,  
 Էշխի թաս իմած, սաղեմեն գրգվիլ իմ.  
 Ղարիբ բլբուլ իմ, բաղեմեն գրգվիլ իմ,  
 Կոկոնըս զայ չանիս, իա՛ր, աման-  
 աման:

Համփուր չառած բերնիտ պալին կարոտ  
իմ,  
Վարթ էրեսիտ ջուխտակ խալին կարոտ  
իմ,  
Ուսիտ գցած թիրմա շալին կարոտ իմ,  
Դուն զարբաբ հաքնող իս, զա՛ր, աման-  
աման:

Այ սիրտ, յարը ցավ կու բերե քիզ մե օր,  
Կու խուցե, յա դավ կու բերե քիզ մե օր,  
Ախըր յարը մահ կու բերե քիզ մե օր,  
Սայարթ-Նովու պես կաց, յա՛ր, աման-  
աման:

(1758)

Էս թապիբ է. «Իստարամ դոլանում բաշընա  
յարուն» [խաղի] հանգով. 446-ին:

Դրրուստ է, վուր յարին մուրվաթ չէ  
էլած.

Հոքուս տունը քանդից՝ դառա մե  
անճար.

Ունքիրն անիդ, զուլփը մե մե նիտ օլրած,  
Սիրտս խուցից, ձեռին բռնած մե  
խանջալ:

Խիլքս թռած, Բալք ու Բուխարա նընգած,  
Սիրտս քաբաբ՝ էշխի բուխարան ընգած.  
Նազլու յարը զարբաբ ու խարան հագած,  
Տես, թէ վունց էլ լավ սագում է կանանչ-  
ալ:

Արտսունքն աչկիս յիս ընգիլ իմ չոր  
չուիր,

Միր դուշմանի մըտկինը թուղ փուչ ըլի,  
Թե վուր ինձնում էստուց ավել սուչ ըլի,

Դուն հաստատիր, գոգալ, արի, իմ ջանն  
ան:

Ասի, գոգալ, եկ իմ արզըն իմացի,  
Կարթացի լամ, կինքում արգու մնացի,  
Էշխի հիջրանիցըն հարզըն մնաց ինձ,  
Եկ դադ արա, ինձ հասիլ է խան աջալ:

Սայաթ-Նովուն պետք չէ շահի ջահ-  
մալըն,  
Փիրից իրմաց ունէ շախու ջամ-ալըն,  
Թե վուր գուզիս տեսնի էն սուրփի  
ջամալըն,  
Պիտիս քաշի էն խալիլի պես տանջանք:

Էս թեջնիսն Արուրինի ասած է. լան է:

Յիփոր սարի լալեն կանանչ բաղ ընգնե,  
Կու բացրանա ճուղքին, «սուսան իմ»,  
կոսե.

Խաբար չառած կոկոր վարթ ու լալեմեն,  
Բլբուլի պես ինքն իրան սանամ կոսե:

Դավրիշին ո՞վ կուտա քոշկ ու սարայը,  
Խամ քաթանը ներկիս, չի՛լի դարայի,  
Էնդու համա չի պակսի իմ հարայը,  
Վուր ամեն մարթ «յիս էլ հասան իմ»,  
կոսե:

Էն ի՞նչ նիտ է, վերքեն արուն չի հուսի,  
Նիրկարարը դուշ է՝ առանց կարասի,  
Անփիր մարթի լիզվից անիծկ չի պակսի,  
Էտենց մարթն էլ իրան «իսան իմ», կոսե:

Հեստի մարթ կա, ժեռ քարին էլ հավան  
չէ,  
Վուր քամին տա, բմբուլի պես կու թռչե.

Մարթ էլ կա, վուր ճիճու տեսնե կու  
փախչե՝

Աժդահայի գլխին «ավսան իմ», կոսե:

Էս խիվ սիրտըս էշխի միջին թաղվիլ է.  
Էշխում թաղվիլ, հարուր տիղից դաղվիլ  
է.

Սայաթ-Նովեն էնդուր լալով շաղվիլ է,  
Վուր աղվեսըն - «ասլան քասան իմ»,  
կոսե:

Էս Արութինի ասած է. օգութլամա:

38

Աթամորթի, ա'նգաճ արա էս բանիս,  
Ծեքը չելած, գիշերն արիվ դուս չի գա.  
Շառըտ քաշի սատանայից՝ ցավ  
չառնիս՝



Հոքուստ դոնով չար հարամին հյուր չը  
գա:

Հախ ճըրաքը վառի, քուքուրթը մարի,  
Միխկըտ սրփե, հոքիտ արթար, սուրփ  
պահի,

Լիզվով օրնանք կու տան` ուշունցից  
փախի`

Մե ախպըրից էրկու տեսակ ջուր չի գա:

Ղուրթ ին ասի` տըղեն քեռուն կու քաշե,  
Չինարը բար չի տա` բոյըն կու քըշե,  
Խոտն արմատից կուլի` սոյըն կու քաշե.  
Ուռու ծառից դարչինի հուտ-համ չի գա:

Մե ազնիվ յար չիմ գթնում էս աշխարիս,  
Էնդու համա հա կանչում իմ հարա յիս,  
Հոր չիմ փորիլ, վուր ընգնիմ էդ հորը յիս,  
Կըրակ էլ տաս ճըշմարիտին մահ չը կա:

Սայաթ-Նովեն կոսե՝ ցավից հիռավուր.  
Ժեռ քարեմեն քամին ինչ կու տանե  
վուր,  
Հոքուտ տունը շինե ամուր-հիմնավուր՝  
Նոյի նրման՝ հեղեղիցն էլ ահ չը գա:

Էս Արութինի ասած է. օգութլամա (սկզբից,  
հայերէն), էսպէս օգութլամա-վարսաղ է  
Արութինի ասած (վերջից, վրացերէն):

### 39

Պըռռունգնիրըտ բլբուլի պէս բաց արա,  
Վուր բերնումըտ ատամըտ չը վնասվե.  
Ճուղքեն շաղ է կաթիլ մազըտ թաց արիլ,  
Սայաղ մնա, վուր ծամըտ չը վնասվե:

Քու համփուրիտ կարոտ, ծարավ մեռա  
յիս.

Եկ մհլամ դիր վերքիս, թե վուր ջարա

իս,

Վարթըն թփից պիտի էնենց դու քաղիս՝  
Անգին ակըն մատնոււմըտ չը վնասվե:

Դարդըս շատ է, ասիլ չիլի էն խուրքեն.  
Ամուր կապե, արուն չը գա իմ վերքեն.  
Հեստի անց կաց բաղչի դոբի արանքեն՝  
Վարթի չառնե, գլուխըտ չը վնասվե:

Դագաղ դրեք, մինչի թաղիլն ասեցեք.  
Էշխի ձեռից էսենց դաղվիլն ասեցեք,  
Յիս չիմացա, ձիգ մատաղ լիմ, ասեցեք,  
Վուր լուսնակը շափաղեն չը վնասվե:

Փիրեմեն փիր առած թալիշ իմ դառի,  
Այ սիրտ, փարդեն պատռե էշխոււմըն  
վառվի,  
Սա'յաթ-Նովա, դուն էլ հեստի գործ  
բռնի՝  
Աղ ու հացըդ-սեղանըտ չը վնասվե:

(1758)

Էս դափիա է. Արութինի ասած. գրված է մարտի 10-ին, քրոնիկոնի 446-ին:

40

Այ սիրտ, ովոր քիզ մե յաման քան կոսե,  
Յիդ դառ ասա - «յիս քիզ ամա ջան  
կուտամ».

Թաք դուն արով ըլիս, թող հա վատ  
ասեն,

Դուն լավութին դադիր՝ խաթիրջամ կու  
տան:

Տերն իստակին ու անմիդին կու նայե,  
Վունցոր վառվող փիլթեն յիդին կու  
նայե.

Բարով ծառը տակի հողին կու նայե.

Ալչադ մարթի վիրչը կուլի ջահանդամ:

Արի, անգաճ արա բեյթիս ու առ տար.  
Էլ մի՛ ասի, համ կանանչ կար, համ ալ  
կար.

Քանի վուր քու ձեռին էսօր հընար կա,  
Հոքուտ համա մե տուն շինե  
ջաննաթում:

Թե մարթի մեչ դողրու մարդըն էրեւա՝  
Սոնեմեն էլ կթված կաթըն կերեւա.  
Միդքը դառն է, ամա քաղցր կերեւա,  
Էնդու համա դրախտեն էլավ ջան-Աթամ:

Սայաթ Նովայ , դուն էս բանըն  
կատարի՝  
Միշտ գոհ մնա բարեկամից, օտարից,  
Պիտիս մոռնա, հենց վուր մահըն  
պատահից,  
Գուզե հարուր տարի քաշիս ջանիտ  
դամ:

(1758)

Էս Արութինի ասած թեջնիս է. գրված է մարտի  
19-ին, քրոնիկոնի 446-ին:

41

Օղորմի էն կարմունջ շինող վարպետին՝  
Անց կենողը քար կու դնե, կու հիշե.  
Խալխի համա կինք մաշեցի, ջան տվի՝  
Տապանիս քարն է՛լ ախպերըս կու քաշե:

Իգիթն էն է, ում աղ-հացը չի հատնի,  
Ով ծառս կուլի, կապանքնիր կու  
կըտըրտի.

Ամա հիմիկ ով քիչ արճիճ կու գտնի,  
Շուտ վազ կու տա սարափխանի,  
փարաշի:

Չարխի-փալագըն չարխն էնենց շուտ  
էրիտ,

Վուր մինձատան վուրթին մնաց  
դռներին.

Ով էլ մե հին շալ չէր հաքած տոներին,  
Հուջրեն լիքը՝ ձեռ է մեզնում դումաշի:

Տե՛ր, ազատիր կիդավուրից, անբանից,  
Հիմարներեն, անտաշներեն պահպանի,  
Էնդու համար չիմ նիդանում դուշմանից,  
Վուր սրտումս դադիր ունիմ սիրդաշեն:

Ինչ բլբուլ իս, վուր փարվազրտ չին  
տեսնի,

Մերը չելած տիդը սազրտ չին տեսնի,  
Սայաթ Նովայ , էլ գրածըտ չին տեսնի՝  
Ամեն էկող դալամ առած կու նաղշե:

(1758)

Արութինի ասած է. մարտի 19-ին, քրոնիկոնի  
446-ին:

Ինչքան էլ վուր ասլանն աղվես  
տապալե,

էլի հանկարծ, յա մե ուրիշ փանդ է  
պետք.

Մե հատ յիզը լըծիլ չի ըլի կալին,

Գութնին էլ վուր մինչ տասնվեց հատ է  
պետք:

Փորցված մարթը խոսկի էդնեն ման չի  
գա,

Անփորցըն էլ լավ ու վաղին ման չի գա.

Գիլի գլխին ավիտարան սազ չի գա.

Մարիփաթից գուրգին ի՞նչ խրատ է  
պետք:

Միղավուր արարքըն կուլի տերեմեն.

Խիլքը գլխից թռչի, կուլի յարեմեն.

Թե լավ, թե փուչ վուրթին կուլի



մորեմեն,

Լավ վուրթուն էլ արթար, հալալ կաթ է  
պետք:

Թե ցավ չանցնե իննըն ամսվա  
վաթանին,

Թեգուզ յաղուր ու գոհարի հանք անին,  
Խուրթ զավակին սուտ կու սիրե խուրթ  
նանին`

Պորտից պորտը մերկ ու ամուր կապ է  
պետք:

Յիս չիմ գիդի վրես էն ով աղ արից,  
Ախպորից ու մորից զրգից, դաղ արից,  
Սայաթ-Նովուն ովոր բեդամաղ արից,  
Տիրոջ ճանփին նրան արթար դատ է  
պետք:

(1758)

Էս օգութլաման Արութինի ասած է. ապրիլի 20-ին, քրոնիկոնի 446-ին:

43

Աշուղ ըլիլն ինձ ամա մինձ ցավ դառավ՝  
Ձեռքս Չանգլու-փիրին կապածի պես է.  
Ուշկըս շաղվից, յիփ էշխի հուրն ինձ  
առավ՝

Հենց գիդին թե խիլքս պահածի պես եմ:

Ջանք դրեցի՝ հացըս աղի հասցրրի,  
Չորից դուս բերի դուզ տիղի հասցրրի,  
Զոռով հարուր ցավ ու դաղի հասցրրին՝  
Տակեն քոք՝ վրբեն թաղ բրոնածի պես է:

Օդորմի են փիր-ուստադին, վուր  
անցավ,

Հըլա կանանչ, չոր չոլիրում չորացա,

Սըրտիս միչըն էշիսի կըրակ գոյացավ,  
Էնդուր դոշըս խուրեն դաղվածի պես է:

Աչկես արուն հուսից, նամի մեչ ընկավ,  
Գիշեր-ցերեկ դարդ ու դամի մեչ ընկա.  
Փարվանի պես վառած շամի մեչ ընկա՝  
Թիվիրըս էլ կոսիս էրվածի պես է:

Ախըր տեսեք, էշիսըն ջալալ շինից ինձ.  
Բազարի մեչ գցից, դալալ շինից ինձ.  
Տեսնողներն էլ էնենց խիալ կոնին միշտ,  
Թե էս Սայաթ-Նովեն հարփածի պես է:

(1758)

Էս վարսաղ է. Արութինի ասած՝ հունիսի 10-ին,  
քրոնիկոնի 446-ին:

Էս էշխըն ինձ փիրն է տվի՝  
Էրվեցի, վառվեցի ձեռքին.  
Նազլու յարը մազիրն օլրիլ,  
Ա'չկի լուս, գառ է կապիլ սիվ քարեքին,  
Չուրս բոլորքին, սիվ քարեքին:

Միղ ունենամ, արին կու տամ,  
Կինքս, հոքիս յարին կու տամ,  
Ջանս մատաղ անիլ կու տամ,  
Ա'յ հավատ, իմ գոզալի թուխ ասկ-  
ունքին,  
Լուսին տեսքին, մարալ տեսքին:

Բլբուլ իմ, բաղ կարոտեցի,  
Մեքաշ վարթի փաթաթվեցի,  
Առանց կամի փոթոթվեցի,  
Ա'յ անգին, յիս մնացի էշխիտ ճանգին,  
Էշխիտ ճանգին ու արանքին:

Յիս բլբուլ իմ, վարթըս ծախած,  
Ջուխտ աչկիրս լացից ճաքած,  
Մհլամն կըրակով սարքած,  
Անջի'գար, դրեցիր իմ ծանրը վերքին,  
Իմ խուր վերքին, սրտիս վերքին:

Դագաղիս դիրել է խարաթ,  
Աջալից էկիլ է բարաթ,  
Էլ չհասավ քոշկ-ամարաթ  
Սայաթ-Նովու դրած ջանքին,  
աղաչանքին, պաղատանքին:

45

Քանդվում է հոքուս աշխարը,  
Մինչի յարըս ման չի գալի.  
Մե հատ է յարիս թահարը,  
Սի'րելիս, մինչի նաղաշ չնկարի,  
չնկարի, չնկարի:

Յարրս գոգալներու թագն է.  
Ակներու մեջ անգին ակն է.  
Շարքաթն էլ ինձ ամա դառն է,  
Սի'րելիս, թե համփուրիտ հիդ չիմ առի,  
հիդ չիմ առի:

Էշխետ հարփաձ չիմ դինջանա,  
Վարթ պատկիրքետ չիմ կշտանա.  
Մեջլիսներեն չիմ հիռանա,  
Սի'րելիս, քեփն ինչքան էլ վուր էրկարի,  
վուր էրկարի:

Գինըտ շահիրն էլ չին ճարի.  
Էշխեմետ յիս չիմ բեգարի,  
Սուսան մազըտ հուս չի արվի,  
Սի'րելիս, մինչի գարըն չգարթարի,  
չգարթարի:

Զուլփով ուշկըս դուն չիս խըլի,  
Թե վարթըտ սըրտիս չը ծըլի.

Յա՛ր, ունքիրըտ բաց չին ըլի,  
Սայաթ-Նովեն թե չնայի, թե չնայի, թե  
չնայի:

(1758)

Էս երկուսն էլ մեջլիսի ռովանի-թասլիբ է՝ մի  
եղանակով. Արութինի ասած է, հունիսի 10-ին,  
քրոնիկոնի 446-ին:

46

Էշխեմետ յիս դառա իսաստա.  
Ինձ զոռով նաչաղ իս արի.  
Միվ մազիրըտ դաստա-դաստա,  
Ա՛չկի լուս, վարթ -մանիշակ բաղ իս  
արի, բաղ իս արի:

Բլբուլ իմ, իսարին՝ կաղաչիմ,  
Բաղեմեն զրգված կու փախչիմ,  
Միվերես արիր՝ կամանչիմ,

Ջանըմ յա՛ր, քու էրեսըն պարզ իս արի,  
պարզ իս արի:

Յա՛ր, գինի տուր ինձ մինչի լիս,  
Քու գուլփերուն մա՛տաղ լիմ յիս,  
Սրտիս քուրեն դուն գըտիլ իս,  
Սիրելի՛ս, էշխիտ հուրըն չաղ իս արի,  
չաղ իս արի:

Չիմ գիդի վունց գովիմ յարին՝  
Կարոտիլ իմ լուսին թահրին.  
Աչկիրըս լցրիլ իս արին,  
Բեմո՛ւրվաթ, սիվ ջիգարըս դաղ իս արի,  
դաղ իս արի:

Լաց իմ ըլում՝ դարդըս ծով ա.  
Առանց միդի Սայաթ Նովայ ն  
Քու լիզվի նիտից խորով ա.  
Ջուր տիղը նասաղ իս արի, սաղ իս արի,  
սաղ իս արի:



Էս էլ կողքի (նախորդ) խաղերի եղանակով:

47

Մահըս իրա վուտով գու քա, յիս տիղիս  
իմ ման գալի.

Միռաձին օղորմի տալով սաղիրիս իմ  
ման գալի.

Անցած օրըն չիմ ափսուսում, վաղիրիս  
իմ ման գալի.

Մուխաննաթըն օր չը տեսնե, էն սիրիս  
իմ ման գալի:

Յիս չիմացա, վունց փաթաթվից  
աշըղութինն իմ գլխին.

Ինձ դիվանա Մեջլում շինից, յիղ դըրից  
իմ կրակին.

Իննըն ամիս աճեցրիլ է, լուս դառնա իմ  
մոր հոքին,

Բալքամ կաթի հիդ իմ ծրծի, էն շիրիս իմ  
ման գալի:

Աշրդութինն էլ ջաղցի պես չի կանա  
անջուր քանի.

Ախրը ինձի ջունուն կոնե, խիլքըս գլխես  
կու հանի.

Էշխըն հազար ծաղիկ ունե, նըմանած մե  
գուլշանի.

Չիմ ուզում հա քացըր նայիմ, ցածրիբիս  
իմ ման գալի:

Էշխի ծովի մեչն իմ ընգի, չիմ դիմանում  
լանգին էլ.

Ջանումըս էլ ջան չը մնաց, չիմ գալի էն  
ռանգին էլ.

Շատ իմ ջանք դրրի՝ չիմ հասի  
աշրդութենի դանգին էլ,

Էնդուր հըլա մե աշկիրտ իմ, իմ փիրիս  
իմ ման գալի:

Աշըղութինը կրակ է, սիրտըս արած մե  
քուրա.

Ջանս ու հոքիս վառից, թողից՝ չիմ գիդի  
խիլքըս ուր ա.

Լաց ու ողփա, Սա'յաթ-Նովա, խիալ  
անիլըս գուր ա,

Էս նիղ վախտին թուղ գայ չըլի, իմ ջիրիս  
իմ ման գալի:

(1758)

Էս իլահին Արութինի ասած է. հուլիսի 9-ին,  
քրոնիկոնի 446-ին:

48

Դոստը, յարը, մեկ էլ ընգիրն  
աշխարքում...

Մեկը վարթ կու քաղե, էն մեկելը՝ փուշ.  
Մեկը թութակ կուլի, մեկն էլ մե բլբուլ,  
Մեկը կուտե շաքար, մեկը՝ լաբլաբու:

Մարթ կա ուրախ, մարթ կա տըխուր ու  
փոշման.

Մեկին՝ մըսխալ, էն մեկելին՝ հինգ  
բաթման.

Էրկու բան կա իրար դուշման  
հավիտյան,

Մեկը կինքն է, մեկն էլ մահն է  
անկըշտում:

Վուրըն ախկատ, վուրըն օսկով մե  
զանգին,

Վուրին գինի, վուրին աղու մե բանգի.  
Մեկը կոծե սազ, էն մեկն էլ իր չանգին.  
Մեկին դամ ու վայիլք, մեկին՝ ցավ ու  
սուք.

Մեկը քրնած, մեկը զարթուն - աչկը բաց.  
Վուրըն օյաղ, վուրը հարփած - գինով  
մաստ.

Մեկըն անվուտ, մեկը կրոնատ - մե  
շիքաստ,

Մեկն էլ հենց նուր ձրվից յախու է  
կապում:

Սայաթ-Նովու վաթանիցըն հարց կու  
տան.

Մեկը կոսե Հինդն է, մեկը՝ Համադան...  
Վաթանըս Թիփլիսն է, կողմը՝  
Վըրաստան.

Մերըս Հավլաբարցի, հերըս Հալաբլու:

Էս Արութինի ասած է. դափիա:

Վարպետներու հայտնի խոսկը  
Հըրասան է՝ փիրի գրած,  
Մե մեկ քաշած հադիդադից,  
Օսկե թիլի նըման շարած.

Առանց ընգիր էս աշխարում  
Աչկըտ կուլի լիքը արուն.  
Ակոեքըն վուր կա բերանում.  
Զուր չին ասի ջանի ջաղաց:

Լաց լիմ մենակ օրի համա.  
Ման գամ սիրդաշ-յարի համա.  
Լավ ընգիրն ընգիրի համա  
Դարդի դարման-ճար է էլած:

Մե տիդում վուր ջալալ ըլի,  
Կախտե՝ հազար դալալ ըլի.  
Մարթս թե վուր հալալ ըլի,  
Կալից կառնե միշտ օրահաց:

Աղոթքանին ով ուշ նայե,  
Չի ազատվի ախ ու վայեն.  
Սայաթ-Նովեն ինքը հայ է,  
Իր հավատքին ամուր կանգնած:

1758

Էսպետ Արուծինի (ասած) դուբեյթ:

50

Բեզարիլ է հոքիս մարմնից, հա~  
տանջվում է, վունց զահրից,  
Աղոթում իմ արարիչին` էս ցավեն ինձ  
ազատի,  
Փիր ուստադին աղաչում իմ անգաճ անե  
իմ զարին.  
Մարդի համա ախ իմ քաշում,  
նամարդից իմ բեզարի.  
Անգետ մարթը շուշես կոտրից. կոտրածն  
էլ չի սաղանա,

Մե գամ քաշողն էլ չը քաշե իմ էս քաշած  
ազարից:

Մենակ անդիր իմ մընացի, վուրփին  
բաբա ըլողըն գա.

Բերանը սուրփ, լիզվին ադոթք, աչկում  
բիբ ունեցողըն գա.

Ուստադեմեն ուսում առած, բաբլուին  
բաբ ըլողըն գա.

Էշխի դուքան իմ բաց արի, սիմ ու  
շարբար առնողըն գա.

Հենց էնդուր իմ ջունուն դառի` հուջրես  
լիքն է լալ-ջավահիր,

Ջարմանալի տիղ բաց արած էս  
շահրադել շեն բազարին:

Սրտիս մեչըն կըրակն ընգած էրում է  
ինձ շամ-շիվ արած.

Գիշիրնիրըն լուսնակի հիդ, ցերեկն



ուշկըս շամսի վըրա.

Էնդու համա ջունուն դառած կանչում իմ  
վա~շ-վա~շ, շիվարած.

Ծըպնիրըն Հինդն է բանդ արիլ,  
գուրձվածկըն էլ Շամ շրհարը,

Ամեն թիլըն հազար ոանգի, ամեն ոանգը  
հազար փայլի,

Ուրումելում չէլած մաթահ, ամենուն  
պետկ է էս գարից:

Ինչքան էլ վուր դուն մինձանաս,  
խոնարութինն աչկըտ կալ.

Փիր ուստադի դահիրը քաշե, քու ավագին  
չասիս լալ.

Ճըշմարտության դուռըն բաց միշտ,  
ձեռըտ չառնիս հարամ մալ...

Ենգիդունյումն գոյացած՝ Փոանգստանու  
գործ է լավ.

Մազ գու քա ամեն արհիստի, արժանի է  
բազարի:

Մե իգիթ վուր անխիլք դուս գա, Սայաթ-  
Նովեն ի՞նչ անե.

Մե վուրսնուրթ վուր սար չդուս գա,  
Սայաթ-Նովեն ի՞նչ անե.

Ամեն քալից խոսկ դուս գու քա, Սայաթ-  
Նովեն ի՞նչ անե...

Փիր ուստադի արթար ճամփին  
անարժան մարթ շատ կուլի,  
Էնդու համա գիշեր-ցերեկ չիմ  
ազատվում ահզարից:

51

Ինչքան էլ վուր դուն մինձանաս,  
բարեկամ.

Էլի զարնիշանչու նախշիրը կոսին.

Գուզե հնդու էկած դալամքար ըլի՝  
Զարբար ու գար լավ դումաշնիրը կոսին:

Դըրուստ ճամփա ընգնողըն դամ չի  
քաշի.

Մեկը գարբար, մեկելըն խամ կու մաշի.  
Գեդնի տակին ինչ էլ ըլի չին հաշվի,  
Պատի տաշած քարե շարքիրը կոսին:

Թե փուչ խոսիս, վարպետի հիդ թավ  
չիլի.

Վուրսնուրթն առանց սար, սարն առանց  
ավ չիլի:

Փետից չախմախ, չախմախից էլ դավ  
չիլի,

Լավ պողվատի քուրեն, հանքիրը կոսին:

Միրուն գուլփը գոգալներու գարթըն է.

Մարթուս գարթն էլ նրա մարիփաթըն է.

Նամարդ մարթը թույնի խոտի հատըն է,  
Ջոմարդի էլ աչկ ու ունքիրը կոսին:

Շատ մարթ էշխի կընգնե էս  
աշխարքումըն,

Ահուզարն էլ պակաս չիլի կինքումըն.

Վրաստանու կողմի Թիփլիս քաղկումըն  
Սայաթ-Նովուն էշխի ընգիրը կոսին:

Օգութլամա (խրատական):

52

Աստծու սիրուն, խոսի, ա'յ իմ սիրուհիս,  
Բառըտ քախցըր, պըռունգնիրըտ հանց  
նաբաթ.

Գո'զալ, թե վուր աղուհացըն սի'րում իս,  
Եկ, ինձ մի տու էլ ամոթանք-խըջալաթ:

Առուտեհան ծանոթ բաղըն թեքվեցի,  
Բլբուլ ձենին վարթի թուփըն թեքեցի.  
Մեքաշ տեսա յարս է, իսկույն չոքեցի,  
Խիլքըս թըռավ գլխես՝ տեսքեն էլա մաթ:

Մարմար դոշին մարջան կախելիս  
տեսա,  
Պռունգներին շաքար մաղելիս տեսա,  
Զալում յարիս վարթըն քաղելիս տեսա,  
Պտտվում իմ էնդուր, վունցոր մե սայաթ:

«Հա ու չէ»-ով ինձ զրգեցիր հավատից,  
Օրն էլ հինգ հետ խաթետ պակաս չէ  
խաթից.

Յա'ր, ազա'տիր ինձ յադ յարի  
մուննաթից.

Լա'վ չէ, գո'գալ, մի' անի վատ ադալաթ:

Մեջլիսումըն սինին լի ու շեն տեսա,  
Սադու ձեռին շուշա, կուղքին մե  
տկճուր.

Յարիս վիզը բացված յախեմեն տեսա,  
Դոշին` լալ ու գոհար, ծոցում` մե մե  
նուռ:

Աչկիրեմեն արտսունք գու քա` ոանգն  
ալ է.

Յարիս կանանչ շուրի կարը ծալ-ծալ է.

Վուտքիրինը թիմաջ է, յա շալ է.

Ամեն վուտն էլ ... շիրմային ո~ւր,  
մարմանն ո~ւր:

Թե հարիֆ իս, բառըս հաշվի, դեմ խոսա.

Մեկ յիս ասիմ, կանաս, մեկն էլ դուն  
ասա.

Մարթի դուշմանն յիրիք փուքըր բան  
տեսա`

Մեկ սիվ ճանջը, մեկ մոծակը, մեկ էլ՝  
լուն:

Թաքավորի խոսքը փարմանա պիտի.  
Վառվող շամի վրրա փարվանա պիտի.  
Յարիս բաղի բարն էլ ինձ համա պիտի,  
Էս թաղիրեն մեկը քիզ թուղ, մեկն ինձ  
տուր:

Սայաթ Նովայ , աստուծրտ չը կորցրնիս,  
Կինքի կարքն էլ փուրցվածին կու  
հարցրնիս.

Լավութինին ով վատութին դարցրնի,  
Վիրչումն անտեր շան պես կրնգնի  
դրոնեդուռ:

Էս լավ թեջնիս է:

Թե վարպետ իս ու վարպետի զավակ իս,  
Մեյդան մտար, խոսի վունցոր  
իմաստուն.

Մեյդանը շահինն է, արհիստն ուստինը,  
Լալըդ բազար հանե, յիփ հույս ունիս  
դուն:

Աշխարումըս թե վատ, թե լավ վարպետ  
կա,  
Ազնիվ խոսքին հույս ու հավատ էլ պետք  
ա,  
Դե վուր քամանդար իս, ձիռիդ լավ նետ  
կա,  
Ծերը պահե համաշա սուր, պսպղուն:

Թե վուր գուզիս վարպետներու պես  
ապրել,  
Էշիսի մեյդան մտար, շուշա մի կոտրե.  
Վարպետներու անեծքի տակ մի մտնե,



Անփուրց խոսող մարթը շուտ է  
փոշմընում:

Փառք տուր տերին, վուր տիրաշեն գործ  
արվե.

Թե վուր գուզիս սիրտըս էշխի հիդ  
փարվե,

Սագով խոսի, վուր աշխարին  
հարմարվե՝

Բերանըդ լեն մի բաց, խոսի դու սահուն:

Սա'յաթ-Նովա, խոսկը տիղին կու բերեն,  
Քիզ նվիրե վարպետներուն ու փիրին.

Նիտ-աղիղտ մի տու խուր-խուր  
ծովիրին.

Ծիղտ հիռու պահե՝ պեծ չառնե դավուն:

Սա վարսաղ է:

Ջամալըտ հայլի է, մարթու կայրե ողջ,  
Ջիռացող քու էշխետ յիս դառիլ իմ մունջ.  
Ջրատար քու դուլին արիբ ցավատանջ,  
Ջամար օսկի էի, դարդն արավ ինձ թուջ:

Ջահ էրեսըտ տեսա, դառա անիլլաջ.  
Ջեր Ստամբուլն ի՞նչ է, աշխա՛ր աժիս  
դինջ.

Ջոկ բան իս դուն՝ Հնդու ջավզ իս, ջիդա-  
թաջ,  
Ջամ-այնաբանդ քոշկ իս, վարադըդ՝  
նարինջ:

Ջանում, թաք իմն ըլիս՝ հազար թուման  
խարջ,  
Ջանք կոնիմ, թե ըլի էդքան էլ պահանջ.  
Ջամ աշխարքը հենց քիզ համա կու գա  
մարջ՝

Ջուխտ աչկիրըտ՝ արիվ, մագո՝  
ծաղկեփունջ:

Ջեյրան կապսդ տեսա, խիլքս էլավ վեջ.  
Ջուղաբ արա, գոգալ, մի թուղ ցավի մեջ.  
Ջունուն դառած, էշխետ կու երգեմ  
անվերջ.

Ջիգարըս խաշիլ իս՝ չիմ անի տրտունջ:

Ջաբրով զառ գրցողին չէ ընկնի շեշ-  
փանջ.

Ջոշխուն էշխըդ ինձի շինից մե կիսլանջ.  
Ջահել Սայաթ Նովայ ն յար կու սիրե  
քաջ,  
Ջե-ի վրա դինջ կու գրե «սկիզբ ու վերջ»:

Էս Արութինի ասած է. ավալ-ախար:

Յարիս կարոտ ճամփա ընգա **տեսնելու,**  
**Տեսա,** հիռվից, գուքված` հաքած գառ ու  
**խաս.**

**Խաս** խիալով մոտեցա քան **ասելու,**  
**Ասի,** գոգալ, պռունգնիբետ **միդր տաս:**

**Միդրահամ** պըռունգտ գովիմ, ի՞նչ  
ասիմ.

Էշխիդ թուրը քաշիմ սրտիս մեջ, կիսիմ.  
Յա՛ր, քու ճամփի հողին էրեսըս քսիմ,  
Բլքամ քիչ խղճի գաս, խոսիս դուն մե  
**քաս:**

**Բաս** մե հարց ու փորց չա՞նիս, մե քան  
չա՞ սիս,  
Յա՛ր, քիզ մա՛տադ, կարոտ իմ բլբուլ  
սասիդ.  
Չլի թե դուն ինձ գցիլ իս հավասից,

Աստուծ սիրիս, ժամանակն է՝ **ԽԻՄԻ  
ՊԱՍ:**

**ԽԻՄՔՐԱ** էշխիդ կշիռքում դիր, դարդ չի  
դա.

Էն էլ իմաց, աշուղեն սուր մարթ չկա,  
Գիդիմ, քիզնում վուչ մե կորեկ խարթ  
չկա,

Չուն գոհար իս, մաքուր **ԼԱԼ ԻՍ ՈՒ  
ԱԼՄԱՍ:**

**ԼԱԼ ՈՒ ԱԼՄԱՍ** իս, իմ ջանանն իս անգին.  
Էս աշխրքում մե'կ չիս, տա'սն իս իմ  
աչկին.

Մայաթ-Նովեն շունչը փչից քու ճանգին,  
Մագամ չո՞ւնիս դուն աղուհաց, խղճի  
մաս:

Զինջիրլամա:

Լիրթս էրվից, վունցոր քուրան գցած  
 կավ,  
 Թե հեքիմ իս, բուժե, ցավեն պրրծրնիմ.  
 Էս դարդըն ինձ իմ վաթանեն դուս  
 արավ,  
 Վախում իմ, թե մինչի Սուրիա հասցնի:

Եկ, լավ պահե ամոթ-ադաբն արի հիդ,  
 Աղ ու հացս կիսի միշտ արթարի հիդ.  
 Չըլի թե մե յադ հանդիպի յարի հիդ,  
 Էս չար վախտըն գաղտնիքնիրըս  
 թըռցնի:

Էշխտ սիրտս կտրից, թամամ կես արավ.  
 Բախտն ինձ շուռ էրիտ, յարից անտես  
 արավ.  
 Ինձ թափ տվի, ամա կինքն էնպես

արավ,

Որ երկնքի Բույլքի պես չիս դարցընի:

Լավ կուլի, վուր սիրտդ իստակ  
պահպանիս.

Ամոթ-արըն վաղվա համար քիզ պահիս.

Ասա, տիսնիս, իմ մահով ի՞նչ կու

շահիս`

Արնիս տակը կընկնիս, էլ չիս պըրծընի:

Աչկս թաց է` ծովի նամին է ընգիլ.

Սիրտս կիսված` էշիսիդ դամին է ընգիլ.

Սայաթ-Նովեն դարդ ու դամին է ընգիլ,

Մե դարդիման չկա, հալըս հարցընի:

Թեջնիս:

Էնդուր կուլամ` սիրտը կոտրած  
առյուծըն

Գող աղվեսեն է իր վերքըն ստացիլ.  
Ազնիվ մարթը ապրուստի է ման գալի,  
Ամեն գյադա զարբաբի է տիրացիլ:

Ինչ անտառ է, կրակն ընկած` չէ  
վառվում,  
Քաֆուր է նա, ով որ սա չէ հասկանում.  
Չարխի ֆալակն էնդուր հիմա չէ  
դառնում,  
Վուր աշխարքս հիմա շատ է նիղացիլ:

Տերը միդս հալբաթ զանց կոնե մեկ օր,  
Ոչխարեն էծեն կու բաժանե նա մեկ օր.  
Էս դուռ փակողն, ինքն բաց կոնե մեկ  
օր`  
Մուխաննաթի էրեսըն է սիվացիլ:



Մոտիկըս յադ դառավ, ամա~ն չը մնաց,  
Աղուհացը պակսից, գուման չը մնաց,  
Էլ ճշմարիտ, արթար իման չը մնաց,  
Էնդուր սիրտըս փարա-փարա է դարցիլ:

Դարդըս ասիմ, մե բիռ դառած, էն գլխեն.  
Վերքս բուժե՝ արուն կալած, էն գլխեն.  
Էդ քու լիզվից խուցված, վառված էն  
գլխեն,  
Սայաթ Նովայ ն կրակումն է մընացիլ:

1758 մայիս:

59

Ասեցին թե, Շախաթա'յի, արար-աշխար  
ստիղծող.  
Չելածեն էլածն արեցիր, բարբառ ու բառ  
ստիղծող:

Քու էտ բարերար կամոքն դուլն իմ  
փարվար-ուստադի.

Փիրն ինձ լսից ու տիղ տըվից. էշխըս՝  
տվածն ուստադի:

Հասա դուռըն ճշմարտության, խմեցի էս  
սուրբ գինին.

Հասկացիլ իմ, ա՛սա, յարա՞բ, արթար  
գրածն ուստադի:

Ով վարպիտի նըման խոսե, նրան  
կուտամ օղորմի.

Ինչքան էլ վուր յիս մինձանամ, թոզը չիմ  
մեճն ուստադի:

Ով արթարութինից խոսե, նա ինձ հիղ  
ընգիր կուլի.

Նրան յիս իմ լիզվից կոսիմ, ո՛չ թե՝  
ասածն ուստադի:

Սա'յաթ-Նովա, օղորմի տուր, ուստադիս  
էլ, փիրիդ էլ.

Շոռ չը խառնիս քո խոսքերուն, կուլիս  
սիրածն ուստադի:

60

Էս նագանին, էս սադին է, էս գողը.

Էս կընիք է, էս դատավուր, էս արթար.

Էս մարքըրիս, էս գոհար է էս տողը.

Էս աշուղ է, էս դալամ է, էս դավթար:

Էս գցիլ է էս իմ ջանը էս հուրը.

Էս լցիլ է էս թասի մեջ էս նուռը.

Էս փինջանով, էս խաղում է էս հյուրը,

Էս շախմաթ է, էս նա՞րդի է, թե՞ էս գառ:

Էս վուրսնուրթը, էս վուրսն արից էս  
խափով.

Էս ցանիլ է, էս հուրն իմ մեջ՝ էս ափով.

Էս արիլ է էս առուտուրն էս ջափով`  
Էս տըվիլ է էս մարջանին էս հազար:

Էս վարթն ոչով էս թուփիցն էս չքաղից.  
Էս սիրողին էս խուր ծովում էս թաղից.  
Էս Սայաթ-Նովունն էս ցավումն էս թողից,  
Էս պատիժ է, էս գուլո՞ւմ է, թե՞ ահզար:

Շումարա-թեջնիս:

61

Ասեցին թե, Շախաթա'յի, յիս կանչում իմ  
շահի-շահ.

Ծառս է ըլում էս խիվ սիրտս, դարդի  
վազում առանց ահ:

Կախ ին ընգի սիվ գուլփիրը` վարդ,  
սուսամբար ին, մադա'թ.

Էրեսը վառ շուղք է տալի՝ շամս ու  
դամար է, մադա՛թ:

Ձեռի օսկեռանգ խնձուրը յարի դարմանն  
է, վուր կա,

Ծոցի պահած շամամնիքը՝ թագա  
նուբար է, մադա՛թ:

Իմ սիրածի հագած շորը յա կարմիր է,  
յա կանանչ,

Շափաղ տվից, էլ չիմացա, ինչ թավուր  
գառ է, մադա՛թ:

Ախրը, գոգա՛լ, ի՞նչ իս ուզում.

Խըմորից վո՞ւնց նիտ կուլի.

Ջըրից վո՞ւնց մըզրախ կու շինվի,

Ավազից վո՞ւնց թոկ կուլի,

Քարից վո՞ւնց աղեղ կու շինվի

Ուռուց ի՞նչպես միխ կուլի...

Մաստակից ի՞նչ ասեղ կուլի,  
Էս ի՞նչ խաբար է, մադա՛թ:

Էլ վո՞ւր մեկին գնամ ասիմ, յարիս  
էսքան մահանան.

Սայաթ-Նովեն էլ վո՞ւր մեկին ասե,  
հընա՛ր է, մադա՛թ:

62

Նոր խոջաներ, ձրրի մալ տան, չառնիք  
դուք,

Ով վուր տեսնե, կոսե փահլեւա՛ն ձիզի.  
Կինը չի դիմանա՝ գաղտնիք չասիք դուք,  
Յիս կու միռնիմ, սա մընա նըշան ձիզի:

Դե վուր փիրի տվածովն իմ անվանի,  
Անգաճ արեք, իւրրատ ունիմ մե քանի՛`  
Հարուր տարի գյադին հաց տու,

պահպանի,

Մեկ օր էլի կոնէ մե չար բան ձիզի:

Ամեն մի ձի նըստող դեռ Ջալ չի դառնա.

Ինչքան էփիս, մախուխը պալ չի դառնա.

Խալխի մալը քիզ համա մալ չի դառնա.

Անաղուն յիփ ջաղցում տիղ կու տան  
ձիզի:

Ազիզ ջանը դուք ջան տալով պտրեցեք,

Անցած օրըն հասկանալով պտրեցեք,

Մի բան էլ կա, աչկը լալով պտրեցեք,

Էն վուր մայրն է թողիլ, պատվական,

ձիզի:

Սա'յաթ-Նովա, խոսի հոքուտ ճառերեն,

Էս ճամփեն քիզ տրված է մինձ

հայրերեն.

Պատիվ ուրացողեն, կնկա շառերեն,

Կոսիմ, տերըն ըլնի պահապան ձիզի:

Սովորաբարի ապրանքը վուր թալանվի.  
Հիշտ ու հանգիստ էլ յիդ բերիլ կուլի՞  
վուր.

Մե բիրթի դուռ, թե վուր ըլի էրկաթի,  
Ուռի սեպով թեգուզ քերիլ կուլի՞ վուր:

Քողըտ քաշե, վուր նիտիրըտ էրեւան.  
Ճիշտ խաբարը գծիցն է, վուր կիմանան.  
Էրագումըտ թե վուր քիզ մե բարաթ  
տան,

Առուտեհան թանխան ճարիլ կուլի՞  
վուր:

Ով ընգիրի համա մե չար բան պտրե,  
Պատվից կընգնե, իր գլուխը կու կոտրե.



Ի՞նչ իմանաս, ո՛վ կու դատե, ո՛վ կուտե,  
Տիրոջ բանեն գլուխ հանիլ կուլի՞ վուր:

Էնենց արա, չթոռոմե քու վարթըն.  
Մահը չի գա, մինչ չը լցվե գավաթըն.  
Մինչեւ չըլի տիրոջ կամքն ու նիաթըն,  
Ծառից թեգուզ տերեւ ընգնիլ կուլի՞ վուր:

Էն վարթ գունքըս անհետ կորչելուց  
հետո,  
Ջուխտ աչկիրըս արնով լցվելուց հետո,  
Էս ձեր Սայաթ-Նովուն, մեռնելուց հետո,  
Լաց ըլելով շնչի բերիլ կուլի՞ վուր:

Էս դափիա է:

64

Ինչ կոնիմ սոյբաթըն, ի՞նչ կոնիմ սազըն,  
Ձեռնեմես վեր կոծիմ չանգիրըն մեմեկ,

Չունքի միզ ուրացար, է~յ դադիարար,  
Փահմես կու հիռացնիմ հանգիրըն  
մեմեկ:

Ղուրթ ին ասի փիր-ուստաքար  
դադիրըն,  
«Ամալիտ չվագիս, չին գա դըդիրըն».  
«Ջափեն յիս քաշեցի, սափեն` յադիրըն».  
Ռադիփըն էկավ միզ ռանգիրըն մեմեկ:

Դուգունըն լավացած դադին ի՞նչ անե.  
Մե նոքարըն էրկու ադին ի՞նչ անե.  
Մե բաղմանչին էրկու բադին ի՞նչ անե.  
Փեյվանդ գուգե թագա տնգիրըն մեմեկ:

Չիմ անի քալագըն, չիմ անի դալըն.  
Առանց քիզ ի՞նչ կոնիմ աշխարիս մալըն.  
Վունց դերվիշ կու հաքնիմ փոստըն ու  
շալըն,  
Վըգեմես կախ կոնիմ զանգիրըն մեմեկ:

Բլքամ մե մարթ տեսնիմ, վուր խըրատ  
ասե,

Անճար իմ դարդերուն մե դարման անե:  
Ռափիղ Սայաթ-Նովեն անյար ի՞նչ անե,  
Չունքի յարեն գու քան ջանգիրըն մեմեկ:

Էս դափիան Արութինի ասած է - ռաղիփի  
կողմից յարին խլելու (փախցնելու) վրա:

65

Ասեցին, թե՛ Շախաթա'յի, խաբար  
ունի՞ս ավամեն,  
Գրքի վո՞ւր թերթին իս գրված, ո՞վ է  
բռնիլ դավամեն:

Հոքիտ իստակ ու պինդ պահե, վուր  
արթար հախը մերն է.

Հուրը մերն է, ջուրը մերն է, հողմըն ու  
հողը մերն է:

Փառք արարիչ-ըստիղծողին՝ մեծ  
պահապանը մերն է.

Կինքը մերն է, մահը մերն է, դըրախտի  
բաղը մերն է:

Իրեք հարուր վաթսուն ու վեց սուրփի  
աղոթքը մերն է.

Հիսուսին մեզ տերն է դրգիլ՝ լուսն ու  
շափաղը մերն է:

Միոնի սուրբ գերեզմանը, ապրելու տեղը  
մերն է.

Էջմիածնա մայր աթոռը եւ ազիզ ցեղը  
մերն է:

Սայաթ Նովայ , դալբ բան չանիս՝  
սարաֆ-մատյան ունինք մենք.

Անկըրակ մհլամ դիր վերքիդ՝ զորավոր  
եղը մերն է:

Ղազալ-դիվանի:

66

Յիս չիմ հիշի վատ մասքանը, չուն  
աշխարըս ունայն ա.

Անցածն ի՞նչ է, քանի վուր մարթ վունց  
հուր կերվի, կու գրնա.

Թե հանգցրնիմ հախ ճըրաքըն, ինքըս  
վառվիլ չիմ կանա.

Մահու թասն էլ թե խըմցրնին, հարփածի  
պես չիմ դառնա.

Վարթըս թոռմից, դուշըս թըռավ, էլ  
վունչիչ չիմ իմանա:

Էս աշխարը Տիրոջ ձեռին վունց մե  
խախալ պըտըտվող.

Մեռնիմ արթար քարամաթիտ, կինքում  
մենակ ինձ մի՛ թող.

Եկ, աշխարը մի բաժանի՝ յիրիք ջուր է,

մեկը՝ հող.

Աթա՛մորթի, կինքիտ ճամփին մենակ  
չըլիս ճամփուրթող,

Վիրջի քունը աչկըտ փակե, էլ վունջիչ  
չիս ունենա:

Փիր հայրիրըն պըտուտ էկան էս  
աշխարի չուրս յանը,

Վունց բլբուլն է պըտուտ գալի վարթի  
խարի չուրս յանը.

Չիմանաս թե է՛ս աշխարում կուլի քան  
ու մաքյանը,

Աշխարըս հատ-հատ է՝ մեմեկ դիփ կու  
հուսե օվկիանը.

Տեսածըս թե դըրուստ ասիմ, էլ ամուրթով  
չիմ մընա:

Է~յ աղանիր, ձեր առջիվ ջեր հեստի  
գուլում կու չոքի,

Լա՛վ իմացեք, էն աշխարում դուլն  
աղեմեն չին ջոկի.

Մահըն գու քա վարթըտ տանե՝ դըրան  
վունչիչ չի օտկի.

Թե սուտ խոսիմ, լիգուս կըտրեք, գուգե  
արեք քանհոքի,

Վիրեն Աստված, ներքեն յիս - լիգվիս  
սուտ չի մոդենա:

Յոթանասուն էրկու ազգ է, շուտ էրիտ  
մինձ փարվանը,

Իրեք հարուր վացցուն ու վից մարքարե  
է սարվանը,

Ումուդ կա, վուր չանգլու փիրն էլ  
ջաննաթում տիղ կունենա,

Սա՛յաթ-Նովա, քոչեքոչ է, ճամփա  
ընգավ քարվանը,

Դուք վուղչ մընաք, նուր էկողնիր,  
գընամ, էլ յիդ չիմ դառնա:

Էս մուխամմազ է. Արութինի ասած:

67

Փառք արարչին, գոյ անողին, սիրով  
անող-պահպանողին.

Դեռ հող ու ջուր, հայտնի եղա ես էն  
ոսկի սամանդարին.

Ժամանակը երբոր հասավ, ընկա անհող  
վաթանի մեջ.

Գուցե տիրոջ կամքըն էր, որ դալամից  
ընկա դավթարի:

Երեք ամիսն երբ որ անցավ, հայտնի  
եղավ մորըս սրտին.

Վեց ամիսըն երբ որ անցավ, սեղմըվեց  
էն ոսկի գոտին.

Իննը ամիսըն լրացավ, կանչեցի՝ տերն  
ինձ ազատի.



Մարմին դառած ես շունչ առա, աչքս  
բացի լույս աշխարհին:

Մեկ տարեկան, մանկան ուժըս գորավոր  
յուղիցն եմ գտնում.

Երկու տարուս մեջ, լույս-մայրըս դեռ իր  
կաթովն է ինձ սընում.

Երեք տարեկան եմ դառնում, դեռ  
օրոցքիս մեջ եմ քընում.

Չորս տարեկան երբ որ դառա, գետնին  
հաստատ քայլերս արի:

Հինգ տարեկան, արդեն ազատ լեզու  
առա, բերան բացի.

Վեց տարեկան երբ որ դառա, նոր  
ակռեքիս ուժն զգացի.

Յոթ տարեկան, այնքան եղավ, որ ջանք  
արի ջրի, հացի.

Ութ տարեկան, գարուն ընկա՝ աչք ածի  
նոր ճանապարհին:

Իննը տարիս երբ որ անցավ, դեռ  
հայտնի չէր, թե ինչ էի.

Տասը տարեկան էլ դարձա, դեռ գիժ ու  
միժ կըշրջեի.

Տասնըմեկըս էլ լրացավ, դեռ էնքան էլ  
խելոք չէի.

Տասնըերկու տարեկանում ինձ  
հանձնեցին ուստաքարին:

Տասնըերեք տարեկանում իմ արհեստում  
տրվի, անցա.

Տասնըչորսում, իմ շնորհքով, վարպետս  
պարգեւ ստացավ.

Տասնըհինգում [շատ ջանք դրի, գիր-  
դալամին ընկերացա].

Տասնըվեցրս երբ բոլորեց, ճանաչեցի  
չարն ու բարին:

Տասնըյոթ տարիս լրացավ, դեռ ես չէի  
եղել դաստան.

Տասնութ տարիս երբ բոլորեց, տեսա եւ  
վարդ, եւ վարդաստան.

Տասնըինը տարեկանում ման եկա  
Հաբաշ-Հինդուստան.

Քրսան տարուց, էշխի ընկած, լալ կը  
ծախեմ սովդաքարին:

Քրսանհինգում մեյդան մտած եւ  
կըլողամ եւ կըթռչեմ.

Երեսունըս երբ լրացավ` ածդահայի պես  
կը շրջեմ.

Երեսունհինգ տարեկանում լավ կը գրեմ,  
լավ կը ջնջեմ.

Քառասունուամեն ինչըս հասավ մինչ  
երկնուց կամարին:

Քառասուն եւ հինգից հետո լավ խաբար  
եմ քչից-շատից.

Հիսուն տարիս երբ բոլորեց, ամոթըն ու  
արն ինձ պատեց.

Հիսունհինգըս երբ որ անցավ, ահուզարն  
էլ ինձ չազատեց.

Վաթսունիս մեջ բարեւ տըվին մեծերն  
իրենց հավասարին:

Վաթսուն հինգից հետո արդեն «ախ ու  
վախ»-ըս է սկսում.

Յոթանասուն տարեկանից աչքերիս  
լույսն է պակասում.

Յոթանասուն հինգըս անցավ, նորից  
մանուկ են ինձ ասում.

Ութսունի մեջ - փիրի տվածն անցնում է  
էնտի աշխարհին:

Ութսուն եւ հինգ տարեկանից ցավը  
ջանիս մեջ բուն դրրեց.

Իննըսունս երբ բոլորեց՝ հոգիս  
մարմնիցըս բեզարեց.

Իննըսունհինգ տարիս հասավ  
[Գաբրիելն անունս գրրեց].

Հարյուրի մեջ ինքըս հասա հազարամյա  
մեծ հայրերին:

Հանցավոր եմ, հողեղեն եմ, խիստ մի  
հիշեք ձեր ծառային.

Կյանքում ո՞վ է անմեղ մընում՝  
սպասեցեք Սողոմոնին...

Ժամանակը երբ որ հասավ, ո՞վ  
կհարցնի Սայաթ-Նովին.

Այս աշխարհս ընդունայն է՝ անեծք  
մարդու էյթիբարին:

1750 թ. հունվարի 3-ին:

68

Աբըն-Աստված, որ քու ձեռքով  
աշխարքին հիմք դրրեցիր.

Մը-սուլթանը լավ կիմանա, թե երկրում  
ի՞նչ արեցին:

Խաթա բերող խոսք մի ասե, դաբուլ  
չունե՞ գալումըն,  
Հոգիտ իստակ պահե դուն միշտ, լիզվիտ  
հալըն իմացի:

Քու խոսքերին շոռ չխառնես, սադայելի  
գործ չանես,

Ցուրտ ձմեռվա դադրը քաշե, անբան  
կյանքեն վազ անցի:

Խոսքը որ կա, լա՛վ իմանաս, այբուբենով  
թամամ է,

Լալ-գոհարը լավ սովորա՛ծ Սայաթ-  
Նո՛վա հալաբցի:

[Գագել]

Էս դիվանին Արութինի ասած է (սկզբից).

Էս իլահին Արութինի ասած է (վերջում):

69

Ասեցին, թե Շախաթայի, թե որ հիմքն  
ըլի խարաբ,

Վարպետըն ո՞նց գլուխ հանե, ո՞նց  
դըրըստե է՛լ, յարա~բ:

Մեր ու սովդեն տերն է ստեղծել, տվել  
մարդուն՝ հավիտյան,  
Ինքն է հալքաթ այան արել թագ ու  
թախտը Շահ-շահին:

Իմ խիալը դեռ վերջումն է, է՛յ զուլումներ  
ստեղծող,  
Հոգիս նրա ճամփին դնեմ, ուխտս անեմ  
դարգահին:

Սրտանց, մաքուր փառք ու պատիվն  
առավոտից տուր հախին,  
Սարաֆի պես իսկն իմացիր՝ խոսքդ  
քաշե քարգահին:

Զուլումաթի, արդար դադի ամենագոր  
մադանն է,  
Փիր ուստադը աղոթում է արարչագործ  
էդ գահին:



Մա'յաթ-Նովա, դա'րդ մի անի՝ իրավ  
խոսք ես ասում դու,  
Լալ, գոհար ես մեկ-մեկ շարել, որ  
ամենքին դուր գային:

Էս դիվանի [գագելը] Արութինի ասած է:

70

Էյ լսեցե՛ք, ձեր բանդային. աղանե՛ր,  
Էշն ուրբայի լսել կուզե, կանա՞ վուր.  
Ավազից շատ բեյթըս կանան համբարիլ,  
Վուխչ աստղիրը հաշվի՞լ ուզեն, կանա՞ն  
վուր:

Սուտը կուզե դուրթեմեն մե մաս գթնի,  
Որթը կուզե օցերի հետ բաս մըտնի,  
Ագռավն էլ ջանք կոնե, վուր դափաս  
մըտնի,  
Բլբուլի հիտ յաշվիլ ուզե, կանա՞ վուր:

Ասլանի սարն աղվեսն էկել է վուրսի,  
Մորմոնջներն էլ էկել փիլ մաշկիլ  
կուզին,  
Ուռու ճուխկն էլ սուր դանակին կու  
քավի,  
Կացինը ժայռ տաշիլ կուզե, կանա՞ վուր:

Ինչ օքուտ` դինսըզին ջամիին պտուտ  
տան,  
Յա նամարդի դռշին դամեն պտուտ  
տան.

Մորեխն ինչքան վառվող շամին պտուտ  
տա,  
Փարվանի պես խաշվիլ ուզե, կանա՞  
վուր:

Սայաթ-Նովեն կոսե էշիսի կու վազեմ,  
Կաթիլ-կաթիլ արտսունքի գետ կու  
հոսեմ.

Ամեն էկող կոսե «թյուրքի» կու խոսեմ,  
Գերեզմանն էլ ձեն տալ կուզե, կանա՞  
վուր:

Լավ բաղամա է. Արութինի ասած:

71

Էս մրքիրը զարթ են ամեն մի բաղի,  
Մեկ խնձորն է, մեկելը՝ նուռ, սերկելիլ.  
Էս իրեքն էլ պետք են ամեն օջաղի՝  
Մեկ մեխակը, զանջաֆիլը, մեկն էլ՝ հիլ:

Վուրսնութն առանց դաշտի, սարի չի  
լինի.

Վարձքով մարթըն առանց արի չի լինի.  
Սադաղն առանց իրեք բանի չի լինի՝  
Մեկն՝ անիղը, մեկը՝ լարը, մեկը՝ թիր:

Արըտ պահե՛ սրտի դիղն է, պետք գու  
քա.

Վաղն ինձ՝ էսօր քիզ իմ տիղն պետք գու  
քա.

Էս իրեքն էլ մարթօուս ցիղին պետք գու  
քան՝

Ջուրն է, հուրն է, էն մեկն էլ դուն  
իմացիր:

Ի սկզբանե չունքի է՛ր Նա արարող,  
Բաժան արից՝ երկինք, գետինք, ջուր ու  
հող.

Էս իրեքն էլ սիվով գրած կա՛ տող-տող՝  
Ավետարան, դուրան, մեկն էլ Գիրքը՝  
հին:

Սայաթ Նովայ հոքիտ հախին ամանաթ,  
Չունքի սիվ օցն աչկ ունե վունց  
ականաթ.

Աշխարքը չի մնա քիզ՝ մուլք-ամարաթ.  
Հազար տարի չիս ապրելու, հասկացիր:

Էսպես լավ ուշլամա-թեջնիս է, Արութինի ասած.  
ով սովորի, օղորմի ասի:

72

Շուշա իս Շիրազի, մում՝ Հնդստանի,  
Ամա էշխըտ դառիլ է մե հուր անշեջ.  
Չախողվիլ է աշուղներու դաստանը՝  
Ուստադեն դաս առած, չիմ անի իսամ  
վեճ:

Վեճ-թեջնիս, քայաթին մուսադդասումն  
է,

Դրուստ կաց, հոքիտ քանի վուր  
դափասումն է.

Չունքի էշխըն քաղ է, ծաղկի դասումն է,  
Բաղը՝ քեջարողին, քեջարի քեջ-քեջ:

Բաղ բեջարողն է հենց իրավունքի տեր.  
Եկ, գոռբա Զալ մի դառ, սիրե գիր-գրքեր.  
Չունքի վերուստ կան գրված գոհար  
խոսքեր,  
Կետով, անկետ քանի բառ կա սրա մեջ:

Քանի քանիսըն գժվիլ են Լեյլու պես.  
Լավ է ուստիտ ոտի հողը համբուրես,  
Թե չէ, աղուհացը կու կուրացնե քեզ.  
Նովջիվան իս, ափսուս տղա իս` բեչ-բեչ:

Էս բեչարա Սայաթ-Նովեն քուրումն է,  
Մե հարցընող չկա, թե ի՞նչ օրումն է.  
Միվ-սիպտակը ջոկիս` լիզուտ միղրումն  
է,  
Կարթացողի արած գործը վո՞ւնց թե հեչ:

Էսպես զինջիրլամա. Արութինի ասած. մայիսի 5-  
ին, քրոնիկոնի 441-ին (1753):

Թար ունքով, թար աչքով, թար լանջով,  
լանջով.

Թար տեսքին թար կըտա, թար ըռանգ-  
ըռանգ.

Թար սեւըն՝ թար խալըն, որ չունէ ոչով,  
Թար նորէն թար դաջեց, թար ավա~ղ՝  
գուր ջանք:

Թար կոկոններ, թար նայեցին, թար  
ծեգին.

Թար հյուսքերը թար ծանրացած,  
թիկունքին.

Թար գոգալը, թար զառ-շորեր թար  
հագին,

Թար առանձին, թար կը շրջե՝ կը տա  
լանգ:

Թար նագանին, թար կու խնդա, թար կու  
լա,

Թար աջ ձեռին, թար սիրտ խոցող թար  
գուլլա,

Թար ձախ ձեռքին թար գինով լի, թար  
կուլա.

Թար արելը, թար կը ցուլա, վարդին`  
շանգ:

Թար սիրելին թար զարդարված, թար  
գուգված,

Թար չորս յանին, թար ծաղկունքը թար  
ցրված.

Թար իրավունք, թար ունենանք թար  
գրրված`

Թար հայրերի, թար հետքերով թար  
գընանք:



Թար յարի թար դարդից, թար Սայաթ  
Նովայ ,

Թար ջեյրան թար որսա, թար Սայաթ  
Նովայ .

Թար ծովին թար հասնենք, թար Սայաթ  
Նովայ ,

Թար ոնց որ թար սայադ, թար լողանք-  
լողանք:

«Էսպես Արուօինի ասած, դողադ-դամա թեջնիս  
է»

(այսինքն` շուրթերն իրար չդիպչող` փ, ֆ, պ, բ,  
մ, հնչյուններից գուրկ եւ բառախաղով  
հորինված):

74

Նազանի նազլուն տըվից հըրաման,  
Պըռունգըն շարժից, լիզվին տվից խաղ.  
ինչ էլավ նահախ.

Նահախ արից ուստեն, վուր քաշից  
զարնիշ,

Նազլուի դեմքին խալ դըրից մե շախ,  
յարն էլ դըրից դադ:

Էս դադը թողից նազանին սըրտիս,  
Վուր էշխումն էրվիմ, հա' տապակվիմ  
յիս,

Դիդարին կարոտ ման գամ գըժի պես.  
Ջա'լում, ռա'հմ արա, մե գամ նայե նախ,  
հետո վառե սադ:

Սադ էրից, վառից ջիգարըս, ջանըս,  
Փալազն էլ փակից ադոթարանըս.  
Էս չո'գան, էս սա'զ, էս էլ մե'յդանըս.  
Խո'սկ ասա, վունցոր կըրակ ու  
չախմախ` հատ-հատ ու անվախ:

Անվախ իմ խոսկըս խորթ է հիմարին,  
Վունց վարժապիտը` լալիկ անճարին,

Վունց ավարա դուշ՝ վարթի սաջարին.  
Ղարիբ բլբուլն է, վուր կու պըտրե բաղ՝  
կընգնե վարթի թաղ:

Հենց վարթի թաղ է՝ յարիս վարսերը,  
Խիլքից կու հանե նազ ու դամգերը.  
Ե՛կ, Սա՛յաթ-Նովա, երգե՛ քու սերը,  
Թեգուզ խիղճ չունե էդ նազլուն շարմաղ՝  
օսկումըն շաղաղ:

Էս եդագլամա-գանջիրլամա է. Արութինի ասած:

75

Փիր-հայրիրը միր մտքումն ին տիղ  
գըթած՝  
Խըրատնիրը մե-մե դամչի, մե ապտակ.  
Ամեն դուշ էլ անումը բլբուլ դըրած,  
Չի հարցընի, թե վո՞ւրն է վարթի  
ճամփան:

Աշդութինը էստից Բո'ւրսա կու վառե.  
Վարպիտը թե հըրաման տա, թե լըռե`  
Շուխ տղիրքը սեյրանգահը փոխ  
կառնեն.

Վո՞ւնց բար կուտա ծառը տարին յոթ  
անգամ:

Քանի սաղ ինք, արի մենք էլ դամ  
քաշինք`

Միր ես ցավը վուչ մե Շահ էլ չի քաշի.  
Էս ունայնում, խիղճ դարվիշը, թե  
հաշվինք,

Ունե քաշկուլ, դուրան, մեկ էլ իր  
կարան:

Կաշիտ հանե, օցի նըման` ծուռ ու մուռ.  
Թե հարիփ իս, խոսկըս իմաց` ջուղաբ  
տուր.

Եկ մի' պըտրե մի ախպըրում էրկու

ջուր՝

Մեկն՝ քաղցրը, մեկն էլ ըլի դառնահամ:

Սայաթ-Նովեն ցավի միչ է մնացիլ,  
Աշդութինն էլ հոքու հիտ է գոյացիլ,  
Հայր Աբրամը քառսուն օ՛ր է ծոմն անցիլ,  
Արի, յիս էլ թեգուզ մե՛կ օր ծոմ մընամ:

Էս թեջնիսն Արութինի ասած է:

76

Վարթն ու բլբուլը էսպես խոսեցին.

Վարթն ասից բլբուլին. «Իմ բաղը մի գա՛

Վուչ ճիշտ լիզու ունիս, վուչ հաստատ

իղրար.

Բաղմընչին դաբուլ չէ,

Իմ թաղը մի գա»:

Բլբուն ասից վարթին. «Ա՛յ կարմիր  
կոկոր,  
Յիփ գալիս իմ՝ գարնան նազըն ինձ հիդ  
է.  
Շախ-շուխը գցում իմ բաղի չուրս յանը.  
Մարթիկ սեյր են անում՝  
Սազըն ինձ հիդ է»...

(Բնագրում անավարտ)

77

Այբըն-աստված սիրիս, ո՛վ մարթ-  
արարած,  
Հենց բան արա, վուր քիզ չասին՝  
անարթար.  
Ծակող, արուն հանող վարթը մի սիրե,  
Անփուշ վարթը թուփեն պոկե, քիզիդ  
տար:

Հեստի խոսե գալումնիրը չիմանան,  
Վուր էրեսիտ ջուրն ու գունքըտ  
դիմանան.

Թե վուր քաղքումն օրենք-տեր չը  
հիմնանա,  
Վատն ու սուտը կիշղեն՝ գուքա միշտ  
գարար:

Անբան մարթը խերից, շառից կու  
փախչի,  
Ազնիվ մարթուց նամարդը չի ամանչի.  
Յոլսըզն ուղիղ մի ճամփա չի ճանանչի,  
Վիրչում ճամփին կոսե. «Էս ինձ ո՞ւր  
տարար»:

Դուն չիս տանի էսենց բեռը քու ճըտիտ,  
Խոսկըտ ասա, վունց անիղից թըռած  
նիտ,

Վարպիտի հիդ ով խոսե խակ ու անմիտ,  
Կինքումըն չի կանա գըթնի մե դարար:

Քանի գընաց խոսկիրըտ մե-մեկ հալվից,  
Ափսուս, դեռ շիվ, բոյըտ միչիցըն  
ծալվից.

Սայաթ Նովայ ն հեյից դեպի վով քայլից,  
Ինչ վուր գըրեց` անգին քար, լալ ու  
գոհար:

Էս երգը ալիֆլամա-դարահեջա է. շատ լավն է,  
Արութինի ասած. ով որ սովորի, օղորմի ասի,  
գրված է մարտի 4-ին, քրոնիկոնի443-ին (1755  
թ.):

78

Նազլու յարիս տեսե'ք, հաքած գառ,  
խարա,  
Նալչեն օսկի, գլխին կարմիր ջիղա-թաջ.



Յա՛ր, այվանիտ հայելին լավ  
զարթարած,  
Շուշեն գինով լիքը, ձեռիտ օսկե թաս.

Ասլան էշխետ յիս օ՛ր չունիմ, նա՛զլու  
յար,

Քու թըրի դեմ մե զո՛ր չունիմ, նա՛զլու  
յար.

Խիլք ու միտքս վուր կո՛րչում է, նա՛զլու  
յար`

Քի տեսնե՛լուցն է, դուն գըթի՛ր, վուր ինձ  
տաս:

Մատին քաղած ալմաս քարով  
մատանին,

Ղաստ է անում, վուր էս օցն ինձ  
սըպանի.

Յիս վուրսնուրթ իմ, թվանգըն իմ

ջընադին,

Գիշեր, ցերեկ սարի մարալ կարոտած:

Դարդըս շատ է, ասիլ չիլի էս տարի՝  
Ջուքված նազլուս գուզե է՛լի չարչարի.

Աչկես էնդուր չէ պակսում արցունք-  
արին,

Վուր գիծ հոքիս չէ սովորում վուչ մե  
դաս:

Սա՛յաթ-Նովա, մեղավոր գործ մի՛ բռնի,  
Վուր մարմնիս մեջ առաջ հոքիս չը  
մեռնի.

Յա՛ր, յիս մեռնիս, վո՛ւչ մե վընաս քի  
չառնի,

Վուր քու ձեռով մե բուռ հող գրցես  
վրաս:

Էս թեջնիսն Արութինի ասած է:

Թե ուզում իս, հայր Աբրամի պես  
 ապրիս,  
 Հաստատ հույս ու հավատետ անց մի  
 կենա.

Ի՞նչ գրած է, էն է գալու միր գլխին,  
 Տիրոջ դըրած կարքեն փախչիլ ո՞վ  
 կանա:

Թե վուր մե տիղ լալ ճանանչող չը  
 ճարվի՝  
 Ալմասիտ խամ քար կոսին ու չին առնի.  
 Սովդաքարն էլ զառն ու խամը թե  
 խառնի,  
 Զառ-դումաշըտ նրա մոդըն մի՛ բանա:

Խիվ սիրտ, լսի՛, էս բանը քիզ՝ աղ ու  
 հաց.

Էս խըրատիս եկ անգաճըտ պահե բաց.

Գինըտ չիմացողի սուփրից հիռու կաց՝  
Նըրա գինին մե գահա՛ր է քիզ համա:

Մահը վուր կա, մե դըժոխկ է, դրախտ չէ.  
Գետ մի մտնի, չասիս կարմունջը մոդ չէ.  
Արմատ չի տա, կու չորանա, թե հող չէ՝  
Ժեռ քարումն սիրմ ցանիլը զո՛ւր բան ա:

Մի՛րտ, աշխարքում թեգուզ ջանն է  
պաշտելու՝

Աչկըտ մի՛ դիր հարամ ապրանք  
ուտելու.

Ա՛նգաճ արա, մե խըրատ էլ կա տալու՝  
Սա՛յաթ-Նովա, կյանքեն շո՛ւտ մի  
հեռանա:

Էսպէս վարսաղ-օգութլամա. Արութինի ասած է:

Էս աշխարքըն անցավոր է, իմա՛ցեք.  
Էսօր վուխչ ման գու քանք, վաղն ի՞նչ  
իմանանք.

Կինքը մարթուս միշտ չէ տըված,  
հասկա՛ցեք`

Աջալն ագահ դիվ է, էլ վո՞ւնց  
դիմանանք:

Փուչ էլավ, մե բան իր հալին չը մընաց.  
Խիվ սիրտ, քիզնից էլ մե տալիք չը  
մընաց.

Էս աշխարքըն Ռոստոմ-Չալին չը  
մընաց,  
Թեգուզ ձեռին պատրաստ ունիր թուր,  
խաղանգ:

Պատվով, արով, ջա՛նք արա ազնիվ  
բանին.

Հարըստութին, լալ-յաղութ մի՛

պահպանի.

Քախցրը ջանրս ամանաթ տամ

քարվանին,

Ինքըս հաքնիմ հինգ արշին կըտավ`

պատանք:

Ա'յ սիրտ, գընա, փախի նըրա ամալից,

Սատանեն մե դամբ է դըրել ազալից

Թե ճար ունիս, հիռու մնա աջալից`

Փեշերը չին բացվում, վուր զենքն

իմանանք:

Շատ վարպիտներ էկել, սրտեր են

վառել.

Հազար-հազարն էկել փոշի են դառել.

Դե վուր կոսեն` Սայաթ-Նո'վեն է մեռել,

էկեք նըրա գերեզմանին տես գընանք:

Էս հաղանա-թեջնիս է:

Ծով դառած էշխրս ճոճում է նավըս.

Կյանքս քեզ մատաղ,  
Է~յ սիրուն դըրախտ.

Լեզուդ դանդ ու շահթ,

Սեւ խալով զինախթ:

Աշխարհի գուգսն ես,

Վարդերի ճյուղքն ես,

Վարսերի հյուլքն ես,

Ծե'զի վաղ ցուլքն ես`

Տալիս ես շափաղ,

Փայլում ամեն վախտ:

Ամեն վախտ եկ տանք

Վառ տեսքին հարգանք,

Չի' տա ամոթանք:

Գրում է նամակ`

Աշխարհին զարմանք:

Խասս խալաթ հագին

Նստում է Ռաշ ձին,  
Սարքը ոսկեպատ,  
Թամքը՝ Շահի թախտ,  
Սանձի ծայրը լախտ:

Լախտն Ռոստոմ-Չալին,  
Վերջ տուր քու դալին,  
Չալում գոգալի  
Ձեռքն արնոտ չըլի:  
Լույս է ջամալըդ,  
Աստըդ է խալըդ,  
Եկ բաց քու մալըդ՝  
Չավահիր լալըդ.  
Խելքըս տարար՝ հաղթ,  
Էլ ինձ ո՞ւր է բախտ:

Բախտս ինչ անի.  
Ընկել եմ ջանից,  
Իմ լավ ջանանից



Վարդ-վարդաստանից:  
Աչքես ողջ տարին  
Հոսում է արին.  
Էնդուր եմ լալի`  
Սիրտըս կես արիր.  
Լեզուս` բանալի  
Չի թողնի անբախտ:

Իմ լեզուն, որ կա,  
Շատ փակ կբանա,  
Լավ կը գտնի,  
Դավթար կը մտնի:  
Փիրից թաս առար,  
Գլխետ վազ անցար.  
Սայաթ Նովայ ' անճար,  
Ընկած սար ու քար`  
Մսխաա'լն արա նաղդ.  
Փի'ր, մի' անի սախթ:

Էսպես եղազլամա-զինջիրլամա-դոշամա,  
թեջնիսի եղանակով. Արութինի ասած:

## Հավելված Բ

1 (82)

Նազլու յարից խաբար էկավ, թե «Էլ չիմ  
սիրի», - կոսե.

«Աչկը լալով մոդըս էլ գա, արտսունքին  
տեր չիմ, - կոսե.

Թաքուն պահած սրտիս սիրը չավ է արիլ  
աշխարհին`

Էլ չիմ հիշի, էլ չիմ խղճա, թող գնա  
կորչի», - կոսե:

Ունքիր ունե լարած անիղ, թերթերուկը  
մե-մե նիտ,

Հիռու տիղըն սեյր է անում, մոդ չէ գալիս  
ինձ մե հիդ.

Է~յ, աղանիր, դարդ իմացող, էս  
ջանա'նին մե մըտիկ,

Աստծու բարովըն տալիս էլ՝ «դրա'ն էլ  
կարոտ չիմ», - կոսե:

Միրուց գժված բլբուլի պես, դռշիս  
խուցիր շարած է.

Էս աշխարհի գոգալներու սիրտը կոսիս  
քարած է.

Թե իմանաք, Սայաթ-Նովեն էշխեն էրած,  
կորած է.

Աղաչեցի, թե խըղճի գա՝ «չէ', ու ծա'նոթ  
չիմ», - կոսե:

2 (83)

Դա~դ քու ձեռին, ա'յ անխիղճ փարի,  
Աջաբ, դո՞ւն չիս հուրյան, բիրյան

անողրն.

Թաքուն յիս մաշվում իմ էս ահուզարից,  
Աջաբ դուն չիս սիրըս բայան անողրն:

Իմ վաթանից, ժողովուրթից զրգեցիր,  
Ճամփես հիռու, օտար յիրգիր գցեցիր,  
Հասակըս ճմբբեցիր, մեչկըս ճրկեցիր,  
Աջաբ, դուն չիս բոյըս քաման անողրն:

Մեջլումի պես աիս իմ քաշում չոլիրում,  
Փահրադի պես դաստան էլա խաղիրում,  
Սայաթ-Նովուն չոր անապատ  
տեղերում,  
Դո՞ւն չիս, աջաբ, խիղճ փերիշան  
անողրն:

3 (84)

Փորցված վարպետներու մոդ մե ծառա  
իմ,

Խիղճ ու դեվեր մարթկանց հարգողներից  
իմ.

Թե վուր խալիսին հասնե՝ կատարյալ իմ  
յիս.

Սովորողին ուսում տվողներից իմ:

Իգիթ մարթը խոսկըն էրեսին կոսե.

Էշխի ծովըն մտնողը խուր կու սուզվե.

Դարդս շատ է՝ մինչ հարուրի կու  
հասնե՝

Միրտըս կոտրած, կինքըս գոհողներից  
իմ:

Միրք առնելուս դրուստ դադրն  
ճանանչիր.

Անգին քարի դրուստ հատրն ճանանչիր.

Սա'յաթ-Նովա փիր-ուստադրն  
ճանանչիր.

Խըրատ տվող-ուշկի բերողներից իմ:

Թեզնիս

4 (85)

Էշխի գերի իմ դառի յիս մե նովջիվանի  
սիրու,

Խումար աչկով, նիտ թարթիչով, ունքը  
քամանի սիրու.

Բլբուլի պես փախս իմ տվի մե  
գուլխանդանի սիրու,

Դոշը մարմար, բոյով չինար, ծոցը  
գուլշանի սիրու:

Խաչս ամոթի է փոխվիլ՝ փահմս կորած  
սար իմ յիս,

Յարիմեն էս մուռը քաշած, նամուս,  
դէյրաթ, ար իմ յիս.

Թուջար դառա, ցավ դատեցի՝ անփուղ  
խրիդդար իմ յիս,

Դարդ ու ցավին ընգիր դառա աֆաթ-  
դովրանի սիրու:

Էս վըրաց թավադներու մեջ ջիվան  
կինքըս մաշեցի,

Էս սիվասիրտ յարի ձեռին արուն-  
արտսունք թափեցի.

Անարկվածի նըշան ճակտիս խալիսի  
նամուս քաշեցի,

Սայաթ-Նովեն իմ բանաստեղծ՝ ոահմի-  
ջանանի սիրու: